



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

433

իզմուշի

297

ԱՏԱՄՆԱԲՈՅՅՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

391.99

34

ԿԱՏԱԿԵՐԳ ՈՒԹԻՒՆՆԵՐԳԱՆԱՌՆ

սս

Ի ՀԻՆԳ ԱՐՍՄԱՆԻ



Ի Ե. Ե. ՊԱՐՈՆԵԱՆԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՆ

1868



(45) 297-2014

9 18 296

3485

Կ. ՊՕՒՍ . — ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՐՄՆԱՆ
Ուզուն-չարը. Շերիժ-փառսի իւնն թիւ 13


2004

ԱՏԱՄՆԱԲՈՅԺՆ
ԱՐԵԻԵԼԵԱՆ



ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻԻՆ ԵՐԳԱԽԱՌՆ
Ի ՇԻՆԳ ԱՐԱՐՍ

Ի Յ. Յ. ՊԱՐՈՆՍԱՆԻ



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ ԱՐԱՄԵԱՆ

—
1868

U 5 1 2 3 4



Ա Ն Ձ Ի Ն Ք

Թ.Ա.ՓԱՌ.ՆԻԿՈՍ	Ատամնարոյժ 45 տարու.
ՄԱՐԹԱ	Անոր կինը 60 »
ԵՐԱՆԵԱԿ	Աղջիկը
ԹՈՎՄԱՍ	Վաճառական 70 »
ՍՕՖԻ	Անոր կինը 40 »
ՄԱՐԳԱՐ	Երանեակի նշանածն
ԼԵՒՈՆ	» սիրականը
ՆԻԿՕ	Թափառնիկոսի ծառայ
ԵԻՐԱԿՈՍ	Թովմասի ծառայ
..... <i>Անոր քույր (Երանեակի)</i>	Աղքատ գործաւոր
	ՊԱՐԱՀԱՆԳԻՍԻ ՄԷՋ ՊԱՐՈՂՆԵՐ


ՏԵՍԱՐԱՆՆ Է Ի Կ. ՊՕԼԻՍ

Ա. Բ. Ե. Արարուածները Թափառնիկոսի տան մէջ. Գ.ը Թովմասի՝ Գ.ը պարահանգիսի մը մէջ կը կատարուին :



ԱՏԱՄՆԱԲՈՅԺՆ

ԱՐԵԻԵԼԵԱՆ



ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

(Թափառնիկոսի տան մեջ սրահ մը, մեջտեղը սեղան՝ որու վրայ դրուած են գրքեր, մեծ ու փոքր շիշեր, ջուաններ, դիտակ մը, ատրճանակ մը եւ գիր գրելու պիտոյք . պատեն հայելի մը կախուած . բիկնաքոռ եւ արձուներ . աջ կողմը խուց մը . միջին դուռ :)



ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԹԱ. Գիշերուան հագուստով, վերջը ՆԻԿՕ

ՄԱՐԹԱ. (Բարկուրեաւեր ներս կը մտնէ ծառան կանչելով)
Նիկո... Նիկո... Աս վերջապէս դիմանալու բան
չէ, ալ համբերութիւնս հատաւ, ամէն գիշեր սպա-
սել եւ դարձեալ միւս մինակ պառկելի... շարաթը
գիշեր մը միայն տուն կը պառկի, միւս գիշերները...
չզիտեմ ուր : Պիտի հարցնեմ իրեն նայիմ զերթ
առաւ զիս այս տանը մէջ... ստակովս զերթ ըլլալ

չեմ ուզեր: Ոչ . . . զիտեմ իս ինչու համար միս մինակ
կը թողու, վասն զի ես ալ ծերացած եմ, թէ որ
տասնու վեց տարու օրիորդ մը ըլլայի, սս ճամբան
չէր բռներ: Իսկ եթէ օրէնքը այսպէս կը պատուիրէ
որ կանայք երիտասարդութեան ատեն սիրուին,
և ծերութեան ատեն նախատուին, ըսելիք չունիմ .
բայց կուզեմ գիտնալ թէ ո՞ր օրէնքն է այս . . . միթէ
Սահմանադրութիւնը կըտայ այս պատուէրը . ո՞ր
յօդուածին մէջ կը գրէ . . . տեսէք մէյ մը և սօսացէք
թէ, Ազգը յառաջադիմութեան ասպարէզին մէջ կը
քայլէ . . . բոկ ոտքով: Ով՞ յառաջադիմութիւն, Հայ-
ութիւնը պոչդ կախած գետնաքարչ ո՞ւր կը տանիս,
այդպիսի հասկնալով դէպ ի ո՞ւր կը դիմես. մի, մի
այնքան շուտ վազեր, վասն զի բեռդ ծանր է . . . կը
յոգնիս և ճամբու վրայ կը մնաս, և Հայութիւնը
կոնըկի վրայ կ'իյնայ . . . պոչ ի ձեռին Ծեսէք, կը-
նիկնին ծերութեան ատեն ասանկ երեսի վրայ կը
թողուն, և իրենք գեղեցիկ ու երիտասարդ . . . ունի-
ներու քծնելու կերթան . . . ան բոլոր անդամներս կը
դողան (Արոտի մը վրայ կը նստի: Այս միջոցին Նիկո
միջին դրան առջին կ'երեւի, ձեռքը կոշիկ մը՝ գոր
վրձիկնով կը ներկէ): Ես ալ երիտասարդութեանս ատե-
նն երբ տասնու վեց տարու էի, անանկ ազնոր
ազգիկ մ'էի որ, բոլոր աշխարհ ճամբուս վրայ կ'ըս-
պասէր զիս տեսնելու համար. այն ատեն չէի կրնար,
եթէ ուզէի, մէկու մը հետ սիրահարութիւն ընել .
օր մը աչուրներս վեր առած մէկուն երեսը նայած
չունիմ. որովհետև մայրս այսպէս կը պատուիրէր,
որովհետև պարկեշտութիւնը ասանկ կը պահանջէր:

Բնաւ չեմ մոռնար , եկեղեցիէն ելած ժամանակս բո-
լոր եկեղեցականները զբան առջին կը շարուէին և
իրբ թէ իրարու հետ կը խօսակցէին , քանի քանի
անգամներ և ականջներովս լսած եմ , որ անկէ անցած
ժամանակս իրարու կ'ըսէին « Ընկեր , նայէ սա կնիկը
որքան ազւոր է , հազար ոսկի կուտայի ասանկ կին
մը ունենալու համար , տես աչքերը որքան հրա-
պուրիչ են , այտերը որքան կարմիր են . » Ասոնք
իրաւ էին , վասն զի ան ատեն վարդի պէս այտեր
ուների . ետքէն ուրիշ մը կըսէր . « Եղբայր , տես
ինչպէս սե են մազերը , ինչպէս ճերմակ են ձեռ-
քերը , որքան փոքր են ոտքերը » . Ասոնց ամէնն
ալ ճշմարիտ էին . բայցեա առանց նայելու ճամբաս
կը շարունակէի , և ինքը հիմա զիս մինակ կը թո-
ղու ասանկ : Արդարև իրմէ տասնըհինգ տարու մեծ
եմ , բայց իր օձիքէն բռնելով՝ եկողը ինձի հետ կար-
գուէ չըսի իրեն . ինքը յօժար կամքով և մանաւանդ
ազաչելով ամուսնացաւ հետս , վասն զի ազւոր էի . . .
վասն զի հարուստ էի . . . վասն զի ուսումնական
էի . . . վասն զի ստակ ուների . . . վասն զի . . . վասն
. . . ինչ զիտնամ , խել մը ազւոր բաներ ուների , և
հիմա ամէն զիշեր զլուխն առնէ երթայ , ակուայ պի
տի քաշեմ ըսելով . . . (Կ'երգի)

Ոչ , ոչ , չեմ ուզեր ,

Որ ամէն գիշեր ,

Էրիկս դուրս երթայ .

Նի քաշէ ակուայ :

Այո , գալուն պէս ,
 Յայտնեմ ամէն բան
 Թող գիտնայ թէ ես
 Մարդ եմ , չեմ անբան :

(Նիկոսի տեսնելով) Հիմա կուգաս :

ՆԻԿ. Տիկին . ես հոս էի . . .

ՄԲԹ. Հոս էիր . Էրբ եկար :

ՆԻԿ. Երբ տասնուվեց տարու աղւոր ազգիկ մ'էիր ,
 և բոլոր եկեղեցականները ճամբուդ վրայ կ'սպասէին
 քեզ տեսնելու համար , ես այն ատենէն ի վեր հոս
 եմ , տիկին . ձեզի կ'սպասեմ :

ՄԲԹ. Սուրճա բեր :

ՆԻԿ. Տիկին . . . (Կ'երթայ)

ՄԲԹ. Այս ամէնը մէկ զի թողունք : Չէր զիտեր որ
 իրմէ շուտ պիտի ծերանամ , այս յանցանքը իմա է
 չէ նէ բնութեան . որուն ինքը ֆաթուրն կրսէ , նա-
 թուրն կրսէ . նաթուրայովը մէկտեղ գետինն անց-
 նի : Ամուսին մը որ իր կնկանը ստակովը հարստա-
 ցեր է , վերջէն այս ընթացքը ձեռք առնու . . . Ինչ
 անզգայութիւն . . . ինչ բարբարոսութիւն . . . Փառք
 Աստուծոյ կոյր չեմ , սապատող չեմ , մարմնոյս կողմէ
 պակսութիւն մը չունիմ . (Հայելի կը նայի) Ինչ ու-
 նիմ . . . ինչո՞ւ համար չհաւնիր ինձի . մազերս միայն
 քիչ մը ձերմկցեր են , ինչ վնաս ունի : Ինչպէս որ
 տարւոյն ամէն մէկ եղանակը իւր գեղեցկութիւնը ,
 և յարզը ունի , միթէ տարիքն ալ չունի նոյն գեղեց-
 կութիւնը . օրինակի համար , զարնան ատեն դա-

լարեօք զարդարուած լեռ մը որքան որ զեղեցիկ տեսարան մը ընծայէ մեր աչքին, ձմեռ ատեն ալ երբ նոյն լեռը ձիւնով ծածկուի աղւոր չէրեւար, բայց էրիկ մարդիկ միշտ զարունը կուզեն. ի վերայ այսր պէտք է գիտնալ որ ամէն տարիք իր զեղեցկութիւնն ու յարգը ունի: Հասակը առած տիկիներէն ծափահարութիւն ատեն յաճար չեմ ըսեր, ես շողոքորթ չեմ, ճշմարիտը կը խօսիմ: Ա՛հ . . . էրիկ մարդեր, ամէնտեղ կանայքը, վար կը զարնէք, կը բամբասէք. հանդարտ եղիք, ալ ժամանակը հասաւ որ անոնք ալ պիտի սկսին ձեր վարքը նկարագրելով գրեթէ յօրինել. ա՛հ Թափառնիկոս, վրէժ պիտի լուծեմ քեռէ, վրէժ. (Սեղանին վրայէն շիշ մը կ'ստնու եւ գետիկը զարնելով կը կոսէ:)

ՆԻԿ. (Սուրճը քերելով) Հրամանէ տիկին:

ՄՐԹ. Թափառնիկոսը եկա՞ւ:

ՆԻԿ. Տիկին, ես հագիւ թէ անկողին մտած էի, դրան ձայնը առի բա ա ա թ, խսկոյն ոտք ելայ, սկսայ ճրագը փնտռել. այս միջոցին դարձեալ չբըրբրաթրարարաթրաթ, իբրև որոտումն երկնից, խելքս գլխէս թռաւ, ինչ ընեմ գիշեր ատեն ճրագ չկայ, սենեկին դուռն ալ կորուսի, ծունկի վրայ զալով « Ով Աստուած իմ սուռն ողորմէ » ըսելու չմնաց, դարձեալ թրրբրբրաթ կարծեցի որ տունը կը փլի . . . կամաց կամաց սենեկին դուռը գտայ, վարտիքս գլուխս անցուցի, փողոցին դուռը բանալուս պէս, Աս ինչ կերպարանք է (Բարձրաձայն) Էջ (Ցած) ըսաւ . . .

ՄՐԹ. (Վախնալով) Կորի գարշելի:

ՆԻԿ. (Երբայով) Վերջը ապտակ մը զարկաւ, ես
ալ զացի պստկեցայ:

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՐԹԱ, ԵՐԱՆԵԱԿ

ԵՐ. Բարև մայրիկ, ինչ ունիս աս առտու. բարկա-
ցած կ'երեխա:

ՄՐԹ. Մ'ըսեր բարկացած, այլ խելքը փախու-
ցած: Երանեակ, հայրդ իւր ընտանիքին թշուառու-
թիւն կը պատրաստէ իր անվայել վարքով, աս
առտու երբ արթնցայ ու զինքը սենեկին մէջ չտեսայ
կարծեցի որ տունը զլուխս փլաւ: Ուր՞ զացեր է
զարձեալ երէկ զիշեր:

ԵՐ. Անշուշտ հիւանդ նայելու զացած պիտի ըլլայ:

ՄՐԹ. Ինչ՞ տեսակ հիւանդներ ունի, որ միշտ զի-
շեր ատեն կերթայ նայելու:

ԵՐ. Ինք կըսէ որ ահուայի ցաւն շատ անգամ զի-
շերը կը հանդիպի, և թէ ցաւած ժամանակը պէտք
է որ դարման մը ըլլուի շուտով:

ՄՐԹ. Ասոնց ամէնն ալ անտեղի բացատրութիւն-
ներ են. ես չեմ հաւտար: Այսօր պիտի խօսիմ հետը,
կամ իր վարքը ուղղէ և կամ... ես գիտեմ ինչ ընե-
լիքս ասանկ ամուսնութիւն չըլլար: (Երանեակ կը
հատաչէ) Ինչ՞ ունիս ազջիկս... ինչո՞ւ կը հառաչես:

ԵՐ. Ո՞հ, մայրիկ, ինչպէս չհառաչեմ, մի՞նչդեռ ակ-
ներև կը տեսնեմ որ իմ ամուսնութիւնս ալ ձերինին
պէս պիտի... պիտի...

ՄԲԹ. Ինչ^օ կը խօսիս Երանեակ. Մարգարը ազնիւ
բնատրութեան տէր. . .

ԵՐ. Ազնիւ բնատրութեան տէր. . . ինչ ընեմ որ
դրսեցի է. . . ես կուզէի Պօլսեցւոյ մը հետեթէ
հնար էր. . .

ՄԲԹ. Դուն ալ իմ բարկութիւնս աւելի ևս զրգու-
լու համար կընես այդ խօսքերը. ամբողջ տարի մ'
որ հետը նշանուած ես և զո՞ն էիր, այսօր մէկէն ի մէկ
պաղիւ. ինչ ունի տղան. քաղցրաբարոյ պատանի
մ'է :

ԵՐ. Ըհ, քաղցրաբարոյ, միշտ հին լաթեր կը հագ-
նի, բնաւ նոր հագուստ մը տեսած չունիմ վրան.
նշանուած մէկը անանկ պատուտած զգեստով պտը-
տի. . . ոչ մայրիկ ոչ, աւելի կը սիրեմ ամուրի մնալ,
քան թէ Մարգարի ուէս հնասէր մարդու մը հետ. . .
հետ. . . (Մեկուսի) Ահ, Լանն, Լանն. . .

ՄԲԹ. Ալ պիտի բարձրացնեմ ձայնս, ապստամբ
աղջիկ, դուն ալ զլուխ վերուցիր, չէս հաւնիր նշա-
նածիդ, որուն ազգասիրութիւնը. . .

ԵՐ. Ըհ, ազգասէր, միշտ հին լաթեր կը հագնի :
Մեծ քիթ մը ունի, ճակատը դուրս ելած, կարճա-
հասակ, մինչդեռ անդին լուսնի ուէս ազուր Երի-
աասարդ մը. . .

ՄԲԹ. (Բարկութեամբ) Ինչ^օ ըսիր, ինչ, անգամ
մ'ալ զուրցէ, շուտ եղիր :

ԴՐՍԷՆ Թրի թա թա թի թա թա :

ՄԲԹ. Աներես աղջիկ, գնա սենեակդ քաշուէ.
վերջը կը խօսիմ քեզի հետ : (Երասնեակ կ'երթայ) :

ԴՐՍ. Թի թա թի թա թի թա թի. . .

ՄԲԹ. Շուտ եկուր որ տեսնես թի թա թի :

ԴԲՍ. Թի բա բա թի բա ըու :

ՄԲԹ. Եկուր որ խօսք հասկնանք իրարու :

ԴԲՍ. Թի թա թա :

ՄԲԹ. Աստուած պատիժդ տայ :

ՏԵՍԻՒ, Գ.

ՆՈՅՆ ԵՆ ԹԱՓԱՌՆԻԿՈՍ ԳԻՉԵՐԱՊԳՆԱՆՈՎ .

ԹԱՓ. Թի բա բա , բարե անուշիկս :

ՄԲԹ. (Մեկուսի) Անուշիկը :

ԹԱՓ. Ինչո՞ւ համար առանձին նստեր ես նօնօշիկս :

ՄԲԹ. (Բարկութեամբ) Ձե՛մ գիտեր :

ԹԱՓ. Տիկինը այսօր բարկացած է , հն՞ հն՞ . հն՞ ,
ձերուկ տիկին :

ՄԲԹ. (Բարկութեամբ) Մերուկ տիկին , Ե կը յան-
դրզնիս :

ԹԱՓ. Ձյանդզնելու ինչ կայ :

ՄԲԹ. Կուզէս որ բերանս բանամ :

ԹԱՓ. Բնոց որ հով առնես :

ՄԲԹ. Երկուշաբթի զիշեր ո՞ւր էիր :

ԹԱՓ. Հիւանդ նայելու գացեր էի :

ՄԲԹ. Երեքշաբթի :

ԹԱՓ. Մէկուն ահուան քաշերու :

ՄԲԹ. Չորեքշաբթի :

ԹԱՓ. Ակուսյ լեցնելու :

ՄԲԹ. Հինգշաբթի :

ԹԱՓ. Ահռայ պարպելու. հն հն հն մեր տիկինը օրացոյց է. շաբթուան բոլոր օրերը անսխալ կը ցցունէ:

ՄԲԹ. Այն պարոն, օրացոյց մ'եմ, և այնպիսի օրացոյց մը որ, մինչև վերջին շունչդ չպիտի փոխես: Երէկ զիշեր ուր էիր, ուր կորսուած էիր, ուր ծածկը մտած էիր:

ԹԱՓ. Երէկ զիշեր, կորսուած չէի, թատրոն մտած էի, ուր ազգային ներկայացում մը տուին. Հայ եղողը պէտք է ազգային հանդէսներուն ներկայ զբաղուի:

ՄԲԹ. Առանց ինձի թատրոն կերթաս:

ԹԱՓ. Թատրոնը ձերերու համար չէ:

ՄԲԹ. Հապա ձեզի համար, երթալ անկէ վարպետութիւններ սորվիլ, և ետքը ձեր կիները խաբելով մասն զի դուք միայն խաբելու և խնդալու կտորներու ուշ կը դնէք, ոչ թէ ամբողջ խաղին՝ որ լի է բարոյականութեամբ:

ԹԱՓ. Դուն ինչ կը ծախես:

ՄԲԹ. Ես ինչ կը ծախեմ, սրիկայ: դուն իմ ստակովս մարդ եղար, համբաւ ստացար, հիմա զիս միս մինակ թողլով, զլուխդ կառնես թատրոն կերթաս:

ԹԱՓ. Ուրիշ անգամուն զլուխս քեզի կը ձգեմ անանկ կ'երթամ:

ՄԲԹ. Կը ծաղրես զիս խայտառակ, իմ ստակովս մարդ եղար:

ԹԱՓ. Անցեալ օր ազուր երգ մը լսեցի, մտիկ ըրէ, երգեմ, նայէ ինչպէս պիտի հաւնիս: (Կ'երգէ):

Ասակով կնիկ մ'առնեք —

— Իշխել կուզէ վրայ

Առնու , ցերեկ , գիշեր —

— Ապսակ կուսայ բաղ բաղ :

Ոհ' զէշ ասեն —

— Անշահ բան

Իրաւ շահ —

— Անպիտան :

ՄԲԹ. Մտիկ ըրէ , երկրորդ տունն ալ ես երզնմ
Նայէ ինչ աղտոր է : (Կ'երզե :

Առանց սակի կնիկ —

— Թէ որ առնելու զես'

Ծախես բանկոն շապիկ —

— Որ զինք սնուցանես :

Գէշ ասեն , եւայլն :

Առանց ինձի թատրոն կերթաւ , այնպէս չէ՞ :

ԹԱՓ. Այնպէս է :

ՄԲԹ. Պարոն , բեզի բան մը հարցնեմ , զիտես
թէ ինչ է կինն մը :

ԹԱՓ. Այո զիտեմ . կինն մը իր ամուսնոյն զլիտուն
փորձանք է :

ՄԲԹ. Լեզուդ չորնայ , ինչպէս ալ առանց կար-
մբելու կը համարձակիս ըսելու թէ փորձանք է :

մինչդեռ բոլոր աշխարհն կը պահանջէր որ դուն իմ տան
կողմ մարդ եղար. Պատասխան տուր նայիմ:

ԹԱՓ. Տամ:

ՄԲԹ. Պապանձէ:

ԹԱՓ. Պապանձիմ:

ՄԲԹ. Բերանդ գոցուի, զրուցէ, գերի առիր գե
այս տանը մէջ:

ԹԱՓ. Ինչո՞ւ գերի պիտի ըլլաս. կին մը ասն մէջ
կան կարտախը կը սեպուի:

ՄԲԹ. Կան կարտախը. տեսէք ինչ պաղարեամբ
պատասխան կուտայ:

ԹԱՓ. Էրիկ մարդիկ պաղարիւն են, կնիկները
տարարիւն կըլլան. (Մեկուսի) Ամառը:

ՄԲԹ. Անօրէն մարդ, ըրածիդ կը հաւնիս, ամուս
նութեան մէջ, միշտ վէճ, կոխ կը վայլէ՞:

ԹԱՓ. Առանց կռուոյ ամուսնութիւնը, անլի կե
րակուրի կը նմանցնեն խոհարարները:

ՄԲԹ. Աղջիկ դաւակ ունիս, պէտք չէ՞ որ խնամք
ուենենաս վրան, հոգաս և կառավարես զինքը:

ԹԱՓ. Աստուած մարդս ազատ ինքնիշխան ստեղ
ծեց. աղջիկս անձին տէրն է, կրնայ զինքը կառա
վարել. ես Աստուծոյ դէմ չեմ մեղանչեր:


ՄԲԹ. Գիտցիր որ այդ խօսքերը մահուանս պատ
ճառ պիտի ըլլան. ասանկ կեանք անցունել չըլար.
Ես սպրիլ կուզեմ, մանաւանդ շատ ապրիլ:

ԹԱՓ. Ինձի ինչ կըսես, Արուես երկայնակեցու
րեան կարժա:

ՄԲԹ. Լէ՛, անգութ, ախոս որ ինձի պէս պար
կեշտ կին մ'ունիս:



4/02-562
294-20/4
(415)



ԹԱՓ. Քու տարիքիդ մէջ կանայք պարկեշտ ըլլալու են :

ՄԻԹ. Այլ բաւ է, պիտի լռես :

ԹԱՓ. Գուցն ալ լռէ :

ՄԻԹ. Ամուսնու թեան կապը կամաց կամաց թուլնալ սկսաւ :

ԹԱՓ. Տաքէն անանկ կըլլայ :

ՄԻԹ. Բոլորովին պիտի քակուի զիտես :

ԹԱՓ. Զանկիայ կապողը պինդ կապեր է. չը բուկուիր. քահանաներուն կապածը աշխարհականները չեն զարոյք քակել :

ՄԻԹ. Ես կը քակեմ :

ԹԱՓ. Գէշ չըլլար :

ՄԻԹ. Բոլոր լրագիրներու մէջ հրատարակել պիտի տամ թէ (Բարձրագոյն) թափառնիկոս իր կինը թողուց :

ԹԱՓ. Շատ աղէկ խորհեր ես. ասով բարութիւն մը ըրած կըլլանք. թէ որ մեզի պէս ուրիշ կռուող ամուսիններ ալ գտնուին, անոնց օրինակ կըլլանք, թող անոնք ալ բաժնուին : Ասով ըրազրապետներն ալ կը վաստակին, թող վաստակին, ինչու որ անոնք ազգին և ընդհանուր մարդկութեան յառաջադիմութեան համար կ'աշխատին, զրել տնւր, ծանուցման մէկ տողը երեք դահեկան է :

ՄԻԹ. Ինչպէս որ կերեւի դուն չես ամչնար :

ԹԱՓ. Փառք Աստուծոյ, ամչնալու ինչ կայ որ . . .

ՄԻԹ. Երբ ըսեն թէ թափառնիկոս իր կինը թողեր է :

ԹԱՓ. Պիտի ըսեն թէ պատերազմէն ողջ դարձեր է :

- ՄՐԹ. Շատ աղէկ, մնաք բարով :
- ԹԱՓ. Երթաք բարով :
- ՄՐԹ. Ապրիս . . .
- ԹԱՓ. Գուն ալ ապրէ :
- ՄՐԹ. Ուրեմն մնաք բարով :
- ԹԱՓ. Երթաք բարով :
- ՄՐԹ. Վերջինն է որ կըսեմ, աղէկ խորհէ և անանկ պատասխանէ. մը . . . նաք . . . բա . . . բը . . . բ . . . ո . . . վ .
- ԹԱՓ. Երթաք բարբը . . . ով . . .
- ՄՐԹ. Քեզի դէմ դատ պիտի բանամ :
- ԹԱՓ. Բայ :
- ՄՐԹ. Տանդ դռները պիտի զոցեմ :
- ԹԱՓ. Գոցէ :
- ՄՐԹ. Ընդհանուր ժողովքը պիտի ելնեմ :
- ԹԱՓ. Ելիր :
- ՄՐԹ. Վերջէն Թաղական պիտի իջնամ :
- ԹԱՓ. Իջիր :
- ՄՐԹ. Վերջը կը տեսնուինք (Կ'երթայ) :

ՏԵՍԻՒ, Գ .

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ առանձին. Վերջը ՄԱՐԿՈՍ .

ԹԱ. Կորսուեցաւ զնաց թշուառականը. առաօտուն ելեր՝ կռիւ ընելու պատճառ կը փնտռէ. կը տեսնես անգամ մը ըրած հարցումները. երկուշաբթի ուր էիր, երեքշաբթի ուր էիր, չորեքշաբթի ուր, ուր էիր, ուր էիր, ուր էիր . . . ո՞ր ծակը մտած էիր. ո՞ւր կորսուած էիր՝ կարծես թէ դպրոցի մէջ

ենք և քննութիւն կուտանք: Ա՛հ . . . ես մեծ յան-
ցանք մը գործեցի ստակով կնիկ առնելու . . . Բայց
ինչ ընելու է . . . թէ որ հարուստ աղջիկ մը առնուս ,
անա ասանկ կըլլայ . իրեն գերի ըլլալու է . . . թէ որ
աղքատ աղջիկ մը առնուս , ան ատեն ալ իրեն ծա-
ռայ ըլլալու է . միշտ անոր համար աշխատելու է ,
որ ուտէ , խմէ , հագուի , սգուի . . . ինչ և է գոնէ
այն ժամանակ հանգիստ ու երջանիկ կեանք մը կը
վարես , ասանկ ամէն օր կուի չըլլար , ես այսպէս կը
հաւատամ իւրաքանչիւր ոք իրեն հասակին , հարըս-
տութեան , բնութեան , սիրոյն համասրատասխանող
ընկեր մը գանալու է , որպէս զի այս վաղանցուկ
կեանքին մէջ , երանելի ամուսնութեամբ ապրի :
Վաթսուն տարուան եղեր է և սիրուիլ կուզէ . . .
Սէր , սէր , սիր տեղուանք կերթաս . դուն յիրաւի
կոյր ես եղեր : Իսկ ես ալ ազէկ պատասխանեցի
իրեն , ինչ որ ուզէ թող ըսէ : Սա ազէկութիւնը
ունի որ շուտով կը հաշտուի . քէն չաբանէր : (Գեօրգի
կոստած շիշը տեսնելով) Ա՛յ սատանորդի շիշը կուտեր
է . (Կ'առնէ գեսնէն կը հոտորսայ ու խորը բռնելով աւ-
դիկն անդիկն կը վագորոտէ) Ո՛հ . . . քիթս . . . բերանս . . .
գլուխս . . . ամէնէն պիտանի դեղն թափեր է . անու-
շաղրի ոգին :

ՄԱՐԿՈՍ . (Դռնէն մտնելով) Ասիկայ ըլլալու է Պ .
Թափառնիկոսը :

ԹՄ . (Չը շտելով , բարկութեամբ) Ա՛հ կանայք , կա-
նայք , տուներու մէջ դուք էք անհանգստութեանց
պատճառ :

ՄԲԿ . (Ինքնիրեն) Բարկացած կ'երևի :

Ա. Ի՛վի ff եւ եւ օօ ֆֆ. Աս բարկութիւնը ինձի սուղի պիտի նստի . . .

ՄԲԿ. (Ինֆլիքիւն) Փախուցի է, քնչ է :

ԹԱ. Ա իս չ բ ծ պ գ կ ջ . .

ՄԲԿ. (Բարձրաձայն) Ի ձ ա գ ղ վ . . .

ԹԱ. (Բարկութեամբ վրաս երթալով) Զքիս կը ծիծաղիս, խայտառակ մարդ :

ՄԲԿ. Է՛հ Պարոն, երկու ժամէ ի վեր ձեզի կ'սպասեմ, ահաաս կը ցաւի :

ԹԱ. Նստէ բիչ մը

ՄԲԿ. Շատ ազէկ Պարոն նստիմ (կը նստի) :

ԹԱ. Արդէն աչքէդ յայտնի է որ ահաազ կը ցաւի :

ՄԲԿ. Կ'ազաչեմ, Պարոն ստամբարոյժ, ձեռքէդ եկածը մի խնայէր զիս բուժելու համար : Զեր համբաւը Պօլսոյ մէջ ամբողջ տարածուեր է, ես ալ ձեր անունը լսելով փութացի հոս գալ, որպէս զի . . .

ԹԱ. Վասն զի՞ արուեստս կանոնաւոր կերպով յառաջ կը տանիմ : Սս Եւրոպայի մէջ ուսեալ բժիշկներէն չեմ. իմ բժշկութիւնս բնականէն է. ինձի եկող հիւանդները միշտ գոհ կըլլան. կը յուսամ որ դուն ալ անոնց պէս շնորհակալութեամբ պիտի երթաս :

ՄԲԿ. Շատ ազէկ . . .

ԹԱ. Մէկ հատ մը միայն կը ցաւի, չէ նէ ամէնն ալ . . .

ՄԲԿ. Մէկ հատ, Պարոն, մէկ հատ . . .

ԹԱ. Մէկ հատ կամ երեսուն երկու հատ ըլլայ, չէ ինձ փոյթ. ինձի համար մի և նոյն բանն ըսել է :

ՄԲԿ. (Մեկրուսի) Ճարտար մէկու մը կը նմանի :

ԹԱ. Շատոնց ի վեր է որ ունիս այդ ցաւը :

ՄԲԿ. Շուրջ երկու շաբաթ . .

ԹԱ. Արուեստդ ինչ է :

ՄԲԿ. Վաճառական մը . . .

ԹԱՓ. (Թիկնադրոուեկ ելնելով) Ներեցէք, եթէ չը
կրցի ճանչնալ զձեզ. հրամմեցէք հոս նստեցէք, ոտքդ
պագնեմ, ելէք թիկնաթոռը նստեցէք :

ՄԲԿ. Հոգ չէ, Պարոն, աշխատ մ'ըլլաք :

ԹԱ. Կ'աղաչեմ, (Մարկոս թիկնաթոռի վրայ կը
նստի) Շարունակեցէք. (Յարգակոփ կը վարուի) :

ՄԲԿ. (Մեկուսի) Ինչ' խոնարհ մարդ :

ԹԱ. (Մեկուսի) Ինչ' ազահ մարդ :

ՄԲԿ. Վաճառական մ'էի ատենօք, իսկ հիմա ջա-
ղացքի մը մէջ գործաւոր եմ : Մարդ չենք^ք, այսօր
հարուստ' վաղը աղքատ. այսօր սոռոզ' վաղը հի-
ւանդ. այսօր աշխարհ' վաղը գերեզման. բայց ես
յոյսս չեմ կտրեր, քիչ ժամանակէն երևելի վաճա-
ռական մը ըլլալու դիտաւորութիւն ունիմ :

ԹԱ. Ըզձալի դիտաւորութիւն : (Մեկուսի) Սա
անօրէն կնկան պատճառաւ, այսօր գործերս ձա-
խորդ կ'երթան :

ՏԵՍԻՒ, Ե.

ՆՈՅՆՔ և ՆԻԿՈ

ՆԻԿ. (Սուրճը քերելով) Տէր . . .

ԹԱ. (Մարկոսին) Ինչպէս անցուցիր այս գիշեր :

ՄԲԿ. Ամենեկին աչքս չգոցեցի :

ՆԻԿ. Յայտնի է որ Պարոնին աչքը կը ցաւի:

ԹԱ. Մինչև որ սուրճս խմեմ, զուն նախապատ-
րաստութիւնները լմնցու Նիկո՛. Պարոնին ահռան
պիտի քաշենք:

ՆԻԿ. Այո՛, տէր իմ:

ԹԱ. (Սուրճը խմելով) Աւշադրութեամբ ըրէ որ
չը վախնայ:

ՆԻԿ. Այո՛, տէր:

ԹԱ. Նայէ որ բռնութիւնը ձեռք չ'առնենք:

ՆԻԿ. Այո՛:

ԹԱ. Անուշութեամբ լմնցուր:

ՆԻԿ. Շատ աղէկ, (Կ'երբայ սեղանին վրայէն չուսն
մը կ'առնու): Քովս եկուր եղբայր:

ԹԱ. Քովը գնա:

ՆԻԿ. (Մարկոսին ձեռները կապել կուզէ, որն որ
չբողոք), Թող տուր որ կապեմ:

ՄՐԿ. Ինչո՞ւ եղբայր, ես խենդ եմ, վառք Աստու-
ծոյ խելքս զլուխս է, ահապի ցաւ ունիմ:

ԹԱ. Հնազանդութիւն Պարոն. իմ բանեցուցած
կերպերս թէպէտ և հիւանդներուն անհանոյ կ'երևին,
բայց վերջէն հաճութեամբ դուրս կ'ելնեն. թող որ
կապէ, թո՛ղ, թո՛ղ:

ՄՐԿ. Ինչ՞ կըսէք. ես գո՞ղ եմ, աազակ եմ որ...

ԹԱ. Ես քու զխոցած բժիշկներէն չեմ. իմ ար-
ուեստս ինչ որ կը պահանջէ, կատարելու եմ. կի-
մանս, պարապ տեղը մի բարկացներ զիս. թող
տուր կապէ:

ՆԻԿ. Վերջէն պիտի զզջաս:

ՄՐԿ. Բայց...

ԹԱ. (Սեդանիև վրայիև ասրճանակև առնեղոյ Մարկոսիև կողղե) Հնազանդութիւն :

ՄԲԿ. Թո, թո... թո թող կենայ...

ՆԻԿ. (Կապեղոյ) Ինչո՞ւ խօսք մտիկ չէք քներ :

ԹԱ. Մի վախճար իմ սովորութիւնս է, երբ մէկուն ահռան պիտի հանեմ ձեռները կը կապեմ անհոգ եզիր դուն. սեպէ թէ ահռատ ելաւ. հիմա իմ հարցումներուս սրտասխան տ՛ուր. արևելեան թէ արևմտեան կողմը կը ցաւի :

ՄԲԿ. Զազաքը կը հարցնէք, Պարոն, հոս մօտ սարտէզին մէջն է :

ԹԱ. Ատիկա իմ հարցմանս պատասխան չէ .

ՄԲԹ. (Նիկոյիև) Ինչ՞ քսել կուզէ :

ՆԻԿ. Միշտ ասանկ կը հարցնէ, պատասխանելու է...

ԹԱ. Վարի՞ յարկն է չէ նէ վերի :

ՄԲԿ. Վերի յարկը, Պարոն, վերի յարկը, յիսուն դահեկան ամսականաւ վարձեր եմ. պատտիկ սենեակ մ'է, ճմեռը շատ տաք կըլայ. վասնզի թղթապատ է. կին մ'ալ կայ հոն որ անկողինս կը շինէ, և ինձի ծառայութիւններ կընէ, թէ որ կուզէք, սենեակ մ'ալ ձեզի համար վարձեմ, փողոցն ալ գէշ չէ :

ԹԱ. Զհասկցար իմ հարցումներս, բերնիս ո՞ր կողմն է ցաւող ահռան :

ՄԲԿ. (Մասովը կը ցուցնէ աջ կողմը) Ահա Պարոն սա կողմը :

ԹԱ. Նս ալ բեզի աս հարցուցի, և դուն ջազաքըին սարտէզի մէջ ըլլալն ըսիր : Վարի՞ շարքէն է ցաւող ահռան :

ՄԲԿ. Այո՛, այո՛, ահա (ցցուճեղով) վարի շարքէն՝
 ԹԱ. Եւ դուն բնակած սենեակիդ վերի յարկը
 թղթապատ և տաք ըլլալը ըսիր: Ես բերնին մէջ
 գտնուած տեղերուն և գործիքներուն մէջ մէկ անուն
 տուած եմ, և միշտ անանկ կը հարցնեմ. կուզեմ որ
 ինձի եկող հիւանդներն ալ սորվին:

ՆԻԿ. (Յաճ, առ Մարկոս) Ջանայ որ սորվիս. ուրիշ
 անգամուն պէտք կըլլայ:

ՄԲԿ. (Մեկուսի) Ասիկայ վարպետ մէկուն կը նմա-
 նի. ինչէր կը հարցնէ:

ԹԱ. Է՛հ գործը լմնցաւ, ցաւող ախոյի՛ն ուր ըլ-
 լալն ալ իմացանք, հիմայ զայն հանելու աշխատե-
 լու է. Նիկո սա ատրճանակը սոս և պարոնին դէպ ի
 բերանը ուզդէ:

ՄԲԿ. (Վախնալով) Ինչ կըսէք Պարոն:

ԹԱ. Ամենափոքր շարժում մը ընելուն պէս
 պարպէ:

ՄԲԿ. (Թորովեղով) Թող կենայ. չեմ ուզեր:

ԹԱ. Լռէ. պիտի պարպէ:

ՄԲԿ. (Ապշած շռարած արձանի պէս կը կայնի ան-
 շարժ) Ով Աստուան իմ:

ԹԱ. Ինչչափի վախկոտ ես. ծօ տղայ:

ՄԲԿ. Ձէ... չէ... վախ... կոտ... չեմ...

ԹԱ. Բերանդ բաց... քիչ մ'ալ բաց որ լոյսը
 ներս մտնէ. կրցածիդ չաց բաց... սա պզտի փատը
 մէջտեղը դնեմ որ չգոցուի. (կը դնէ) հա՛. այսպէս կե-
 ցիր, ես ալ պատրաստուիմ որպէս զի դիւրութեամբ
 կարենամ գործել, (գիշերագգեւսը, գիտարկը կը հսակ.

շայիկին քեւերն վեր կառնե՛) ալ վախ պէտք է. սե-
պէ թէ ահապ ելաւ :

ՄԲԿ. Ը՛հ. ու՛հ...ը՛հ...

ԹԱ. (Դիտակով Մարկոսին քերնին մեջը կը նայի)
Ձը կըրցի տեսնել, Նիկոսա ճրագս վառէ. ինչ անտե-
տանելի ահապ, նայինք ճրագով պիտի կարենանք
գտնել. (Ճրագը Մարկոսին քերնին կը մօտեցնե՛) :

ՄԲԿ. (Ետ ետ կերթայ) Ա՛հ :

ԹԱ. Նիկո, կապէ՛ ոտքերը ,

ՆԻԿ. Կը հնազանդիմ տէր, (կը կապե՛) .

ԹԱ. (Արոռի վրայ կ'եղնե՛) Մուսկ չորէ, շուտ ե-
ղիր. ժամանակ չկորսնցնենք. (Ափցանը քերնին մեջ
կը խորե՛ եւ կըսկսի ֆաշել) ան փատը ինկաւ :

ՄԲԿ. Ինչ կընէք, Պարոն, լեզուս պիտի փրցնէք :

ԹԱ. Մարդս կը սխալի երբեմն :

ՄԲԿ. Կ'ազաչեմ թո՛ղ արցանը և ուրիշ կերպով եթէ
հնար է հանել, կատարէ. ապա թէ ոչ՝ ես սլի-
տի երթամ :

ԹԱ. Տեսակ տեսակ գործիքներով յառաջ կը վա-
րեմ արուեստս, հանդարտ եղիր. սեպէ՛ թէ ահապ
քաշուեցաւ : Իմ վարպետութիւններս Ներսիսայի բը-
ժիշկները կը զարմացնէ և ի ծիծաղ կը շարժէ զա-
նոնք : Ինձի նայէ բարեկամ, մէկը կատարեալ բը-
ժիշկ ըլլալու համար բաւական խելը ունենալու է .
միայն բժշկութեան վկայականով չը բննար, ինչպէս
որ վարդապետ մը սե վեզարով չկրնար կատարեալ
վարդապետ ըսուիլ՝ թէ որ ուսմունք չունենայ. ա-
սոնցմէ զատ ատամնաբոյժ մը շատ վարժած ըլլալու
է որ . . .

ՆԻԿ. Ինքը շատ վարժած է:

ԹԱ. Անհնգ եղիր դուն, թէպէտ և բիչ մը խըստութեամբ խօսեցայ հետդ, բայց իմ արուեստս այնպէս կը պահանջէ. անուշութեամբ չըլար. Խստութեամբ հսկած գործին անուշութիւն կը յաջորդէ ինչպէս որ անուշութեամբ սկսած գործին խստութիւն... ինչպէս որ փոթորիկէն վերջը խաղաղ հողմ... ինչպէս որ տրամութենէ վերջը ուրախութիւն, ինչպէս որ... ինչպէս որ աղքատութենէ վերջը...

ՄՐԿ. Մնորդութիւն...

ԹԱ. Ձէ, հարստութիւնը կը յաջորդէ: Առնակիդ վրայ պառկէ զաւակս, ես մինչև հիմա կրնայի բուրոյր ահռաներդ խաշել, այլ ինչ ընեմ որ բիչ մը բարկացած եմ այսօր. պառկէ տղասս պառկէ. սեպէ թէ ահռող ելաւ. (Մարկոս կը պառկի, Թախառնիկոսը սեղանին վրային դեմսն մ'առնելով) Սա դերձանը ահռայիդ պիտի կապեմ, կապելուս պէս ընցաւ գործը բնց բերանդ... տեսայ... տես կապեցի... տեսող եղիր... տեղէդ չերեբաս... Նիկո ատրճանակը շտկէ (Մարկոսին առջեւը կը նստի եւ ոտները Մարկոսին ոտներուն կոքնած կ'սկսի ֆաշել) կը ցաւի... համբերէ... ինչ ընենք հիմա պիտի ելլայ... թշուառ տղայ, ընկուզ կոտրեցիր ինչ բրիժ որ ասանկ... տէր ողորմեա... անանկ ահռայ մը որ տեղէն չը շարժիր:

ՄՐԿ. (Պոռայով) Ահ. ուհ. բուժ...

ԹԱ. Նիկո, ատրճանակը մի' թողուր... համբերութիւն տղաս... սեպէ թէ ահռող ելաւ (Բիչ

մ'աչ ուժով՝ կը փաշէ դերձանը՝ կը փորթի, ինքն աչ կոներկի վրայ կիյնայ):

ՆԻԿ. (Տիրոջը վրաս մտքերով) Փոշի եղաւ վրայ.

ՄՐԿ. (Պառկած) Ա՛հ... սև... սև...

ԹՍ. Գիտե՛մ ես... բոլոր յանցանքը կնկանս է որ զիս բարկացուց (Ոտները գետնէն զարկելով):

ՄՐԿ. Ու՛հ... բո՛ւՖ... (Ոտք ելնելը կը ջանայ):

ԹՍ. Ինչո՞ւ կեղնես սլառիկէ՛, տեղէդ մի՛ շարժիր, մ'աճապարեր, ծունկ չօրէ՛ և սեպէ թէ ախառ ելաւ (Ուրիշ դերձան մը կը հսակ կը կապէ ցաւոյ ակոսան) այս անգամ ալ թէ որ չյաջողիմ... (Կ'սկսի փաշել) ահա ձայն մ'առի, սլառի ելլայ...

ՄՐԿ. Մ՛հ, Պարոն, թո՛ղ տուր ելնեմ:

ԹՍ. Պապանձէ, ահա ելաւ... ահա... քիչ մ'ալ համբերէ... (Ուժով կը փաշէ) Ա՛հ վերջապէս յաջողեցայ... (Ակոսան Մարկոսին տալով) սա ախառ... ինձի Թափառնիկոս կ'ըսեն... ինքզինքս զովելու համար չեմ ըսեր. բայց կը պարծենամ որ այս արուեստին մէջ ինէ յաջողակը չկայ. թող Նւրոպայի մէջ ուսեալ բժիշկները պնդեն թէ իրենք շատ վարպետ են...

ՄՐԿ. Գիտէ՞ք, պարոն, որքան դժուար է այս ախառայի ցաւն բաշելը:

ԹՍ. Գիտէ՞ք, պարոն, որքան դժուար է ախառայ բաշելը:

ՄՐԿ. Ողջ ըլլաք... բայց ցաւն փոխանակ մեղմանալու սաստկացաւ:

ԹՍ. Առջի բերան անանկ կըլլայ:

ՆԻԿ. Անանկ կըլլայ ամէնուն ալ:

ՄԻԿ. (Մասուրներովը ակուսները գնկելով) ցաւող
ակուսան հոս է, ահա տե՛ս. դուք սխալմամբ քովի
ակուսան քաշեր էք:

ԹԱ. Կոյր ըլլալու եմ որ ատանկ բան մը ընեմ:

ՄԻԿ. Սխալած էք. է՛հ՝ Պարոն ատամնաբոյժ, այս
խաղը դեռ շատ պիտի տե՞ք . . .

ԹԱ. Կեցիր (Մասուրներովը կը ֆնկե ակուսները)
իրաւունք ունիք. . . բայց ես դիտմամբ քովի ակ-
ուսան քաշեցի:

ՄԻԿ. (Բարկուրեալք) Դիտմամբ. . . դիտմամբ.
մեզք չէ՞ իմ ողջ ակուսյիս որ. . .

ԹԱ. Ինչ ըսեմ տղայ, դուն անմիտ ես. . . Թէ
որ այս ակուսան չհանէի, միւսը շատ դժուարու-
թեամբ պիտի կրնայինք քաշել. չեմ յուսար որ այս
խօսքիս չհամոզուելու չափ տխմար ըլլաս. կը հար-
ցընեմ քեզի, միթէ կրնան ծառ մը խլել, թէ որ
արմատը ազէկ չբանան, պատասխան տուր:

ՆԻԿ. Ըսածները ճշմարիտ են:

ՄԻՀ. Է՛հ, իմ բերանս պարտէզ է:

ԹԱ. Իմ ըսածս նմանութիւն մ'է: Ես քեզի չափ
չեմ խորշիր, որ ցաւող ակուսան մէկէն ի մէկ հանեմ,
հն հն հն:

ՆԻԿ. Ինքը ազէկ կը խորհի:

ԹԱ. Ես կուզեմ որ ընելիք գործս առաջուց մտա-
ծեմ վերջը կատարեմ. կը հասկնանս, ալ վախ չկայ
տոտր արմատը ազէկ բացուեցաւ:

ՆԻԿ. Ամէնուն ալ անանկ կընենք:

ՄԻԿ. Տակաւին պիտի խօսինք, ինչ որ պիտի ը-
նես ըրէ՛ լմնցուր, շուտ եղիր շուտ. . .

ԹԱ. Կամաց քալողը չյոզնիր, կըսէ առածը:

ՆԻԿ. Իրաւ է, ինքը բնաւ չյոզնիր:

ՄՐԿ. (Մեկուսի) Անգամ մը ոտքս դռնէն դուրս
կոխէ... (Բարկուրեանք բարձրաձայն) Շոտ եղիր,
ես ձեր խաղալիքն եմ:

ԹԱ. (Որ սեղանին վրայէն շիշերը կը խառնէ իբր
թէ բան մը կը փնտնէ) Փատը... փատը զիր բերանը.
ապերանխտ, հոգւով մարմնով կ'աշխատիմ քեզի ծա-
ռայութիւն մը ընելու և դուն կը յանդգնիս առանց
ամչնալու ինձի դէմ խօսելու, կարծեցիր թէ քենէ
ստանկ պիտի առնեմ. ինչ եղար՝ համբերէ քիչ մ'ալ
ան ահուաղ՝ զնա:

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ և ՄԱՐԳԱՐ

ՄՐԳ. Բարե:

ԹԱ. (Մեղանիև առջեւ զբաղած) Աստուծոյ բարին:

ՄՐԳ. Երէկ զիշեր ուշ հասայ:

ԹԱ. Հասար:

ՄՐԳ. Չկրցի հոս գալ:

ԹԱ. Չկրցիք:

ՄՐԳ. Չեզի ըսելիք ունիմ:

ԹԱ. (Միշտ զբաղած) Կրնաք ըսել:

ՄՐԳ. Տիկինը տեսայ որ բարկացած կ'երթար:

ԹԱ. Կրնայ երթալ:

ՄՐԳ. Կռուէր էք հետը:

ԹԱ. Կռուեր ենք:

ՄՐԳ. Բայց չվայլեր:

- ԹԱ. Չը վայելեր :
- ՄՐԳ. Պէտք է որ ամուսին մը իր կինը սիրէ :
- ԹԱ. Պէտք է որ սիրէ :
- ՄՐԳ. Ըսել է որ դուք չէք սիրեր :
- ԹԱ. Չեմ սիրեր :
- ՄՐԳ. Այսպէսով իր մահուանը պատճառ կըլլար :
- ԹԱ. Կըլլամ :
- ՄՐԳ. Պէտք է որ ըլլար :
- ԹԱ. Պէտք է :
- ՄՐԳ. Պէտք չէ :
- ԹԱ. Պէտք չէ :
- ՄՐԳ. Կը տեսնեմ որ գործ ունի :
- ԹԱ. Գործ ունի :
- ՄՐԳ. Ձեզի հետ խօսիլ կուզէի :
- ԹԱ. Խօսեցէք :
- ՄՐԳ. Կ'երևի որ զբաղեալ էք :
- ԹԱ. Զբաղեալ եմ :
- ՄՐԳ. Ինչպէս ընենք , քանի մը ժամէն զամ :
- ԹԱ. Եկուր :
- ՄՐԳ. Կրնամ հոս գտնալ ձեզ :
- ԹԱ. Կրնար :
- ՄՐԳ. Թէ որ չգտնամ :
- ԹԱ. Չէք գտնար :
- ՄՐԳ. (Մեկուսի) Կ'երևի որ միտքը շատ յուզուած է , որովհետև ըսածը չզիտեր , (Բարձր) Քանի մը ժամէն պիտի գամ :
- ԹԱ. Եկուր :
- ՄՐԳ. Մնա բարով :
- ԹԱ. Գնա բարով . (Մարգարը կը մեկնի) :

ՏԵՍԻՒ Է .

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ , ՄԱՐԿՈՍ , ՆԻԿՈ

ԹԱ. Մօտ եկու՛ր , երկու ժամէ ի վեր քեզի համար զեղ կը փնտռէի , ահա գտայ . (Շիշ ձը տարալ) առ ասիկայ , բաւականի վրայ քանի մը շիթ կաթեցուր , օրը ութն անգամ ցառող ահուային վրայ դիր : քանի մը օր ասիկայ ըրէ , տեսնո՞ր որ ցառը կաւե ընայ ինձի եկուր , սեպէ թէ բժշկուեցար . (Մարկոսը գրախը կը շարժե ինկնեցալ որ հասկցաւ) . կայնէ հիմա բերնէդ հանեմ սա փատը . Նիկո՛ . ոտները ձեռները քահէ . (Նիկո կը ֆակե) . հասկցար տղաս , կարծեմ թէ առանց քաշելու այդ ցառող ահուան , պիտի բուժիս : ՄՐԿ . (Սեղանիկն մօտեցալ աւրճանակը կառնե) . Պատասխան տո՛ւր հարցումներու , արևելեան է թէ արևմտեան :

ԹԱ. Աս ինչ պիտի ըլլայ :

ՄՐԿ . Ամենափոքր շարժում մը կընայ մահ պատճառել . Նիկո՛ ձեռները կապէ :

ՆԻԿ . Պարոն . . .

ՄՐԿ . Հիմա կը մեռցնեմ , շուտ կապէ . (Առ Թափառնիկոս) վերի թէ վարի յարկն է :

ԹԱ. Կորի սըկէ , գարշելի . . .

ՄՐԿ . Ապերանխա , ինձի զէմ կը խօսիս . Նիկո փատը զիր բերանը :

ԹԱ. Վերջապէս պիտի . . .

ՄՐԿ Համբերութիւն , սովորութիւնս այս է կը կապեմ , փասն զի ատամնաբոյժ մը միայն վկայա-

կանով չկրնար կատարեալ ատամնաբոյժ ըլլալ, պէտք է բիչ մ'ալ խելը ունենալ. ինչպէս որ վարդապետ մը սե վեղարով չկրնար կատարեալ վարդապետ ըլլալ թէոր ուսմունք չունենայ, թէպէտ և իմ բռնած ընթացքս իւրանդներու տնաճոյ կը թուին, բայց վերջը գոհ կըլլան. (Ա. ֆցաւնը առնելոյ) Համբերէ, սեպէ թէ ակոսադ ելաւ:

ՆԻԿ. (Մեկոռսի) Ես երթամ, չըլլայ որ իմս ալ ակոսանք աշէ: (Կ'երթայ):

ՄԲԿ. (Ա. ֆցաւնը Թախառնիկոսի բերանը խորելոյ). Աճ' թշուառ տղայ. . . շատոնց ի վերէ որ կը ցաւի, ԹԱ. Աճ' . . . ան . . .

ՄԲԿ. Ինձի տուած խղէդ քանի մը կաթիլ կաթեցուր և ցաւող ակոսային դիր . . . մնաք բարով . . . անա պարոն ատամնաբոյժ ասիկայ Ասաւն ընդ ասաւնան եղաւ. (Կ'երթայ):

ԹԱ. Աճ' . . . ուրկէ էր որ զիմացս ելաւ սա մարդը . . . ձեռներս, ոտներս կապեց (Կաւնչելոյ ծառան) Նիկո, Նիկո . . .

ՏԵՍԻՒ Ը.

ՆՈՅՆ և ՄԱՐԹԱ.

ՄՐԹ. (Բարկոռքաւք մտնելոյ) Ոչ' Քաղաքական կայ, ոչ Թաղական և ոչ Կրօնական ժողով . . . միշտ խառն ժողով կըլլայ. կանոնաւորը տեսած չունինք: Որո՞ւերթամ յայտնեմ ցաւերս . . . ան, կանայք թշուառ են . . . (Էրիկը տեսնելոյ) Աս ինչ է . . . ան անօրէն

մարդ... պատիժդ գտեր ես... ահա այսպէս կապուած կեցիր... ո՞հ... հիմա քիչ մը սկսաւ սիրտս ուրախութիւն զգալ... կը յիշէս ինձի ըրածներդ, անզգամ. տես զլուխս, դուն ճերմկցուցիր աս մազերը...

ԹԱ. Ճերմակը սեին վրայ աղէկ կը վայրէ,

ՄՐԹ. Այս վիճակիդ մէջ անգամ զիս կ'ատես. դուն իմ ստակովս մարդ եղար...

ԹԱ. Ես քեզ չեմ ճանչնար:

ՄՐԹ. Չես՞ ճանչնար, հիմա կը ճանչցընեմք ինքի նքս... երթամ ժամկոչները կանչելու որ զանառնեն Փրկիչ տանին քեզ: (Վազելով կ'երթայ):

ՏԵՍԻԼ Թ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ առանձին, վերջը ԼԵԻՈՆ.

ԹԱ. Թէոր մինչև հիմայ սրտիս մէջ իրեն համար սէր կը կրէի, ան ալ դուրս ըրի. ասկէ վերջը անհրնարին է որ կարենամ հետը ապրիլ... այսպիսի նախանձորդ կանանց հետ ապրիլը... կատուներու հետ խաղալու պէս է, պանիր տուած ժամանակդ կը ճանկուտեն... և ո՞վ եղաւ բոլոր այսօրուան ճախորդութեանց պատճառ, եթէ ոչ ինքը. կուզէ որ սիրուի վաթսուն տարուան հասակին մէջ. թէոր մէկ ուրիշ կնկան երեսը նայիմ, կուիւ ընելու կուզայ վրաս... այս նախանձը չէ՞ որ կանանց զեղեցկութիւնը կոչնչացնէ...

ԼԵԻ. Մարդ չկայ հոս...

ԹԱ. Պարոն . . .

ԼԵԻ. (Մեկեկն ի մեկ երեսը բռնելով իբր թե ակուսելը ցաւի). Ինչ^օ կայ :

ԹԱ. Ինչ^օ կուզէք :

ԼԵԻ. Ատամնաբոյժը կը փնտռեմ, կուզեմ ակուսացողունել, ո՞ւր գացեր է արդեօք :

ԹԱ. Հոս է հիմա կուգայ :

ԼԵԻ. (Մեկուռսի) Ուր^օ էր թէ սա մարդը երթար ու Երանեակը գար հետը խօսէինք :

ԹԱ. (Մեկուռսի) Իրեն զուրցեմ անգամ մը նայիմ կը քակե՞՞մ ձեռներս . ինչ զիտնայ, զիս գող կամ աւազակ պիտի կարծէ :

ԼԵԻ. Դուք ինչո՞ւ հոս կեցեր էք :

ԹԱ. Պիտի երթամ . . . սա ոտներս քակեցէք :

ԼԵԻ. Շատ աղէկ Պարոն (կը ֆակե),

ԹԱ. Հրաման քնիդ քիչ մը սպասեցէք, ատամնաբոյժը հիմա կուգայ . (Մեկուռսի) երթամ սա թշուառական Նիկօն գտնալու . . .

ՏԵՍԻԼ Ժ.

ԼԵԻՈՆ Վերջը ԵՐԱՆԵԱԿ

ԼԵԻ. Քիչ մնաց որ ձեռք պիտի անցնէի, այս դէպքը Երանեակին նամակին չյարմարեցաւ . (Նամակ մը կը հսակ կը կարդայ) « Վաղը ժամը երեքին տան մէջ մինակ պիտի ըլլամ, եկուր զիս զրկելու » :

Ուր՞ է, չգար որ գրկեմ, կարծեմ հայրը մայրը հոս են-
 ծառան ծուռ ծուռ երեսս նայեցաւ, չըլլայ թէ Երան-
 եակը զիս մատնելու համար հոս հրաւիրած ըլլայ.
 կը յուսացուի, վասն զի Հայ ենք, Հայ ըսելը մատ-
 նու թիւն ըսել է: Այո՛, մեր ստացուածքն է մատ-
 նու թիւնը ի վազուց անտի, հարուստներէն մինչև
 սղբատները, լուսաւորեալնորէն մինչև խաւարեալ-
 ները, ամէնքն ալ ունին ասիկայ. մեր առաջին
 զէնքն է, Բրուսիոյ ասեղնաւոր հրացաններէն ա-
 լելի զօրաւոր է. ամէն պարագաներու մէջ անոր կը
 վստահինք, անով յառաջ կը քալենք. այլ ինչ օգուտ
 որ վերջէն անով գետինը կը տապալիինք, ու ծաղր
 ու ծանակ կըլլանք. . . արդեօք Երանեակը. . . (Երան-
 եակ կը մեկայ Տիւրք). Ա՛՛ իմ երանելի Երանեակս,
 ճիշտ այն միջոցին եկար ուր՞ քեզի համար կը կաս-
 կածէի: Բայց ինչո՞ւ ասանկ տրտում տխուր. . .

Ե՛ր. Տրտում տխուր:

Լե՛ի. Լռիկ մնջիկ:

Ե՛ր. Լռիկ մնջիկ:

Լե՛ի. Մի՛թէ իմ ներկայութիւնս վանեց այտերէդ
 այդ վարդագեղ կարմրութիւնը, պատասխանէ,
 կոյսդ նագելի, մի՛թէ իմ տէնքս կապեց լեզուդ, պա-
 տասխան տո՛ւր. ինչո՞ւ այդ ժպտաւիտայլ շուրթերդ
 թալկացեր ու չեն շարժիր: Ա՛՛ Երանեակ, խօսէ՛,
 քու այդ լուսութիւնդ դառնաղէտ խորհուրդներ կըս-
 տեղծէ մտքիս մէջ:

Ե՛ր. Լևոն, քեզի նուիրած յեմ սիրտս կեանքս ու
 պատիւս. այլ ինչ օգուտ որ ընտանիքիս տգիտու-
 թիւնը քենէ յախշտակել կուզէ զանո՞նք:

Լեհ. Ինչ՞. ընտանիքդ հաւանութիւն չեն տար
որ սիրես զիս.

Ե՛ր. Այս առտու մօրս ըսի թէ՛ Մարգարի հետ
չեմ կարգուիր. այս լսելուն պէս բարկացաւ, բորբո-
քեցաւ, կատղեցաւ . . .

Լեհ. Երանեակ, բոլոր զիշերը չքնացայ, անհամ-
բեր այս ժամուն կ'սպասէի, այս խօսքերը լսելու
համար, երբեմն աչերս կը գոցէի՛ր քու գեղածիծաղ
սպտկերդ կը տեսնէի, և այն խօսքը զոր առջի օրը
քու սիրաբոյր շուրթերէդ սահեցաւ, զիշերուան խոր
լուծեան ատեն միշտ ակա՛ ջներուս կը հնչէր. այն
այն ձայնը որով արտաբերեցիր « Կը սիրեմ զքեզ »
խօսքը սիրտս վիրաւորեց անբուժելի վէրք մը բա-
նալով հոն, և դեռ առաւօտուն անկողինէն ելնելուս
պէս, (Կ'երգե)

Երբամ ըսի Երանեակիս,
Յայտնել իրեն գաղտնիք սրտիս,
Զուրցել թէ իւր դէմք գեղանի՛,
Երգանկուրեանս է հայելի :

Համբոյրիկ՛ մը օն Երանեակ,
Տուր որ առնեմ քու այտերէն .

Կոյսդ նազելի սիրուն հրեցակ
Թնդ շուրթերս սէր նաւակեն :

Ինձի լսէ Երանեակ, ինչ փոյթ քեզի որ ընտա-
նիքդ հաւանութիւն չտար. քանի որ դուն զիս սի-

րել կը հաճիս, ամէն ջանք ընտանիքիդ անօգուտ է. մի թէ կրնան սրտիդ մէջ յորդաբուզիս սիրոյ վտակն չորցնել. . . օ՛ն քաջալորուէ. . . մի վհատիր :

Ե՛ր. Բաւ է ալ բաւ է. ես քեզի համար կեանքս կը զոհեմ, պիտի բաժնուիմ ընտանիքէս, քեզի պիտի ընկերանամ ուր որ երթաս, ինչ վիճակի մէջ ալ գտնուիս, թէ որ անօթութենէ մեռնիլ հարկ ըլլայ, պիտի մեռնիմ Լեոն, բուռն կիրքով կը սիրեմ զքեզ, բուռն ուժով կը մերժեմ Մարգարը որ բռնութեամբ ինձի նշանեցին, կ'ատեմ իւր սէրը, կ'անիծեմ նաև ընտանիքս՝ որ թող չեն տար սիրոյս համապատասխանող անձի մը հետ միանամ. . . քուկդ եմ ես, Լեոն, քուկդ. (Լեռնի բազկացը վրայ կ'իյնայ) :

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ և ՆԻԿՕ.

ԹԱ. (Փաս ի ձեռին Նիկօն հայածերով) Ուր՞ կը փախչիս, անիծից արմատ. . . իմ ոտքս ձեռքս կը կապես, ո՞վ հրամայեց քեզի :

ՆԻԿ. Ա տ ր ր ր Ե ա ճ ա ն ա կ ր . . .

(Երանեակ եւ Լեռն շտաբած կը նային)

ԹԱ. Անպիտան թէ որ անգամ մ'ալ ասանկ բան մը ընես, զլուխդ կը ջախջախես :

ՆԻԿ. (Առանց հասկնալու) Ինձի ինչ, ջախջախէ :

ԹԱ. Կորի սըկէ (Նիկո կ'երթայ) Երանեակ զուն
ինչ զործ ունիս հոս :

ԵՐ. Ես^օ . . .

ԹԱ. Գուն :

ԼԵԻ. Անիկայ . . .

ԹԱ. ԻՆՔՐ :

ԵՐ. Ես^օ . . .

ԹԱ. Սենեակդ քաշուէ :

ԵՐ. (Երթալով) Իմս ես Լևոն :

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ , ԼԵԻՈՆ Վերջը ՆԻԿՕ.

ԹԱ. Եկուր սա ահռան քաշենք :

ԼԵԻ. Ակռայիս ցան անցաւ :

ԹԱ. Ատիկայ ինձի չվերարերիր, թող չգայիր ,
հոս տեղ հիւանդանոց չէ , պէտք է որ ահռադ քա-
շել տաս' իմ աշխատութեանս վարձը տաս ու ետքը
երթաս , կիմանաս . և քեզի բարեկամաբար սա ալ
իմաց կուտամ որ յօժարակամ անձնատուր եղիր ,
ահռան քաշենք , ապա թէ ոչ , վերջը գէշ կըլլայ ,
Նիկո . . . Նիկո . . . Նիկո . . . Նիկ . . .

ՆԻԿ. Հրամէ տէր :

ԹԱ. Նախապատրաստութիւնները տես . . .

ՆԻԿ. Վերջը միւսին պէս չըլլայ :

ԹԱ. Էշ' . քեզի ինչ որ կը հրամայեն , զայն կա-
տարէ :

ՆԻԿ. Պարոնը ո՞ր կողմէն է, արևելեան թէ արևմտեան :

ԹԱ. Գործդ տես :

ՆԻԿ. (Չուանը առնելով Լեւոնի կը մօտի) կայնէ :

ԼԵՒ. (Մեկուսի) Ինչ՞ ընել կուզէ, ոտքս պիտի կապէ, փախչելու ճար մը :

ԹԱ. Շուտ եղիր :

ՆԻԿ. Շուտ (Այն միջոցին որ Լեւոնի ոտքը կը կապէ Լեւոնը կից մը կուտայ կը փախչի, Նիկոն գետնի վրայ պատկած թողնով) :

ԹԱ. (Վազելով) Բռնեցէք զողը աւազակը :

ՆԻԿ. (Ելնելով իյնալով) Ես ալ սըւոր ետեկն երթամ բռնեմ, վասն զի տէրս բարկանալուն պէս բերնիս մէջ ահռայ չթողուր կը քաշէ... շատ վարպետ է (Վազելով կ'երթայ) :

ԱՐԱՐՈՒՄԵ Բ.

ՏԵՍԻՒ Ա.

ՄԱՐԹԱ, ՄԱՐԳԱՐ

ՄՐԳ. (Մարթան փաշկոսեղով կն բերե) Տիկին, չը վայլեր ձեզի որ փողոցն իյնաք, աւ դիւ ան դին վազէք ժամկոչ փնտռելու, Դուք երկու ազանիներու պէս սիրով վարուելու էք, որպէս զի ուրիշներն ալ ձեզմէ օրինակ առնեն, Պարոն Թափառնիկոսը կերևի թէ քիչ մը բարկացած ըլլալուն, ձեզի նետ խստութեամբ վարուեր է, անկարելի է որ զձեզ չսիրէ:

ՄՐԹ. Ձէք զիտեր Պարոն Մարգար, շաբաթը զիշեր մը միայն տունը կը պառկի, միս մինակ կը թողու քիս. այս տան մէջ զիս պահապան ընելու համար բերաւ հոս:

ՏԵՍԻՒ Բ.

ՆՈՅՆԻ և ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

ԹԱ. Փախաւ զարշելին, բոլոր այս ճախորդութիւններու պատճառ ինքն է... (Չակոնիֆ սեսեղով) Դուք հոս՝ Պարոն Մարգար:

ՄՐԳ. Այո՛ Պարոն Թափառնիկոս, ձեր սիրոյ կապը ամբապնդելու համար եկայ տիկինին նետ:

ԹԱ. Ձէ, չէ, չեմ ուզեր, արդէն անիկայ քիչ մը

Թուլցած էր այսօր բողբոլիին քակուեցաւ. ինձի պէտք չէ ասկէց ետքը, ուր որ ուզէ թող երթայ :

ՄԲԹ. (Առ Մարգար) Կը լսես՞, (Առ Թախաունիկոս) Պարոն այս խաղը դեռ շատ պիտի տևէ :

ԹԱ. Պիտի տևէ, հինգ արարուած պիտի ըլլայ :

ՄԲԹ. Կարծե՞մ այս արարուածները թատրոնէն կը սորվիք :

ԹԱ. Թատրոնէն :

ՄԲԹ. Եւ ինչպէս որ կերէի կատակերգութիւնը շատ կը սիրէք :

ԹԱ. Շատ կը սիրեմ, աւելի կուզեմ խնդալով կըրթուիլ քան թէ լալով. . . աչերս ցաւցնել :

ՄԲԹ. Վաստկած ստակներդ թատրոնի կուտաս. թէ որ ես ստակ ուզելու ըլլամ, կը բարկանաս անօրէն մարդ, դուն իմ ստակովս մարդ եղար, և հիմայ զիս ասանկ առանց մէկ ստակի կը թողուս. կուզես որ ձայնս բարձրացնեմ, բարբարոս մարդ, զրպաններս պարապ են, լուծա մը չունիմ. երկու ոտքս մուճակի մը մէջ խոթած կը պտտիմ :

ԹԱ. Զոյգ մը ոտքի աման ապսպրէ :

ՄԲԹ. Կը լսես՞ Պարոն Մարգար, ահա ասանկ այլանդակ մէկն է ասիկայ :

ՄԲԳ. Կազաչեմ մի կռուիք, հաշտուեցէք և ուխտ ըրէք որ մէյ մ'ալ կուիւ չընէք, եկուր տիկին ամուսնոյդ ձեռքը համբուրէ :

ԹԱ. Ես չեմ տար ձեռքս :

ՄԲԹ. Ես չեմ համբուրեր անոր ձեռքը :

ԹԱ. Ինձի այնքան հայհոյութիւններ ըրաւ :

ՄԸԹ. Ինձի հետ բարբարոսութեամբ վարուեցաւ :

ԹԱ. Առաջուց հոգւոյս պէս կը սիրէի :

ՄԸԹ. Ինչպէս կը գուրգուրայի վրան :

ԹԱ. Միշտ կը պօռայ որ իր ստակովը մարդ եղեր եմ :

ՄԸԹ. Ամէն օր կըսէ թէ ես կան կարասիք եմ եղեր :

ԹԱ. Ուր՞ է առջի սէրը :

ՄԸԹ. (Լալոյ) Ինքն է պատճառ որ. որ. որ. . .

ՄԸԳ. (Մարթայիև) Գնա ձեռքը համբուրէ :

ԹԱ. Ես անոր ձեռքը համբուրեմ, անիկայ իզմէ մեծ է. տուր ձեռքդ տուր համբուրեմ (կը պագնէ) ասկէ վերջը կը խոստանամ մօրս պէս սիրել զքեզ. (Մեկուսի) դարձեալ հաշտուեցանք :

ՄԸԹ. (Ճակեկն համբուրելով) Ո՛հ իմ ամուսինս, կորսնցուցած էի քեզի, հիմայ գտայ, կը յիշես մեր հարսնիքը և այն զիշերը. . . (Լալոյ) Ինչպէս պարեցինք, ուր էր թէ այն վայրկեանները ետ դանային. . .

ԹԱ. Դառնային.

ՄԸԹ. Ը՛հ, բերանդ խածնեմ. (Միշտ կը պագնէ) ան չեմ կշտանար. (Կ'երգէ) :

Խնդացէ՛ք դուք օրիորդներ

Ծիծաղեցէ՛ք ով պարոններ

Ամենեւից չեմ բարկանար

Քանզի գիտեմ ես բառ առ բառ

Սէրը որքան յառաջ երթայ
Այնքան հաստատ է՝ անուշ կըլլայ :

Ես համբուրեմ դո՛ւք ծաղրեցէք
Զիրար սիրել ալ սորվեցէք,
Երբ ձերուքեան դուռը զարնէք
Մի մոռնա՛ք այս խօսք յիշեցէք
Սէրը որքան յառաջ երթայ
Այնքան հաստատ է՝ անուշ կըլլայ :

(Կըպագնեմ) Ա՛հ Պարոն Մարգար, գուցէ մտքէդ
անցնի թէ ինչու այսչափ իրարանցում . . . ինչու
այսքան համբոյրներ . . . ինչ ընեմ տակաւին սէր
կրող սիրտ մը կը տանիմ այս հողաշէն մարմնոյս
մէջ . այնպիսի սէր մը որ միշտ երթալով կանի, ու
չկրնալուն ամանին մէջ պարունակիլ, դուրս կը
պոռթկայ և վազելու ճամբայ չգտնալով ուղղակի
ամուսնոյս երեսը կը հոսի . (Պագնեցով) ու կ'ոռոգէ
զանիկայ :

ՄԻԳ. Կ'աղաչեմ մի քաշուիք տիկին, գործերնիդ
նայեցէք, չըլլայ որ հոս արգելք ըլլամ, եթէ կուզէք
դուրս երթամ :

ՄԻԹ. Ձէ, ահա ես կերթամ, քիչ մը միւս սեն-
եակը հանգստանալու :

ՄԻԳ. (Թեւը մտնելով) Հրամմեցէք տիկին, ես կը

տանիմ և շատ ուրախ եմ որ կարող եղայ զձեզ հաշտեցնել:

ՄԲԹ. Շնորհակալ եմ:

ՄԲԳ. Երթանք տիկին՛, (Կ'երթան):

ՏԵՍԻՒԼ. Գ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ վերջը ՆԻԿՈ

ԹԱ. Այս հասակին մէջ այսքան սէր, ալ ճիմայ կը համոզուիմ որ, մէկը կարգուելու է կանանց ինչ աստիճան սիրավառ և նախանձոտ սիրտ մը ունենալնին հասկնալու համար: Երբ իւր ձեռքը պագայ, այնպէս ուրախացաւ՝ իբր թէ աշխարհի թագուհի անուանուած ըլլար և . . .

ՆԻԿ. (Վազեղով) Տէր նամակ մը . . .

ԹԱ. Ո՞վ տուաւ:

ՆԻԿ. Մարդ չտուաւ՝ ես գտայ: Խոհանոցին մէջ աղտոտ ամանները մաքրելու զբաղած էի, մէյ մ'ալ ինչ տեսնեմ, չոր, սև, զոզոշուն թոռմած ձեռք մը պատուհանէն վար կերկննար, երկու մատներուն մէջ թուղթ մը բռնած. իսկոյն պահուրտեցայ որպէս զի չտեսնուիմ, վարագուրին ծակէն կը նայէի . . . ո՞ն, ինչպէս սիրտս կը զարնէ . . . և ահա նամակը ինկաւ բայց անանկ զաղտնի տեղ մը, որ եթէ հոն չըլլայի, անհնարին էր մէկու մը զայն տեսնել. ձեռքն սկսաւ կամաց կամաց վեր համբառնալ, վերջէն անյայտ եղաւ: Փացի թուղթը առի, խորհե-

ցայ որ նամակ մը ըլլալու է, թերևս մէջը գաղտնի գործ մը գրուած ըլլայ, և ինչպէս որ կարգալ չեմ գիտեր, մակարեբեցի թէ ասիկայ քեզի համար կրնայ ըլլալ. ատի բերի :

ԹԱ. Շատ աղէկ. (Նիկո կ'երթայ) Ուսկից կրնայ ըլլալ այս նամակը, (Հասցեն կարդալով) Առ Օրիորդ Երանեակ Թափառնիկոսեանց, Աս ինչ պիտի ըլլայ (Կը բանայ նառակը կսկսի կարդալ) :

Այս օրուան դէպքը զիս բոլորովին վիասեցուց : այնպէս որ ասկէ վերջը ձեր ասնը մէջ ոսք չեմ կրնար կոխել . . . պատմութիւնը երկար է, առանձին գտնուած ժամանակնիս կը պատմեմ քեզի . . . հօրդ ասամնաբուծութիւնը »

(Իմ ատամնաբուծութիւնս . Կը շարունակե) :

« Ուրիշ սեղ մը որոշեմք սեսնուելու համար, քեզի համար հալ ու մաշ կըլլամ, շատ կը սիրեմ զքեզ, լեզուովս չեմ կրնար բացատրել . »

(Շատ կը սիրէ եղեր, շարունակենք)

« Ուր մնաց քէ գրչով : Նամակիս պատասխանը գրելու որ ըլլաս սեղ մը իմացուր ինձի որ հոն երբամ . հասցէն այսպէս ըլլայ ,

Առ Յ. Գ. Կ. ԼԵԼՈՆ .

Սիրահարեալնորու փողոց, քիւ 20 .

Ա. Լ. Նիմայ բոլոր կասկածները փարատեցան. հա-

պա ստորագրութիւնը . . . (Կարդայ ջանադով) ,
 Տ . . . ա . . . ր . . . փ . . . ա ծ . . . տարփած . . . տարփածսդ
 . . . տարփածուդ . . . Լե . . . լե . . . ոն . . .

Քիչ մը առաջ եկող ու ակոսայիցաւ ունիմ ըսողն
 ըլլալու է աս . . . ուրիշ ցաւ ունի եղեր . . . Աղջկանս
 առանց բան մը իմացնելու սա նամակին պատաս-
 խանը գրեմ . . . ու զինքը հոս հրաւիրեմ , աղւորիկ
 մը ծեծեմ . Զիս խնայել . . . Բայց Երանեակին զիրին
 նմանցնելու է . . . ժամանակ կորսնցունելու չգար . . .
 (Կը գրե՛)

Տարփածուդ իմ Լեւոն Յ. Գ. Կ.

Նամակդ առի , շա՛ս ուրախացայ : Ուսի ներ-
 կայիւս կիմացնեմ որ վաղը առաւօտ կանուխ եկուր ,
 դուռը կը բանամ կը նսիւն կը խօսակցիւն , երկար
 գրելու ժամանակ չունիմ :

ԵՐԱՆԵՍԿ

Առ Յ. Գ. Կ. Լեւոն .

Սիրահարեալներու փողոց, քիւ 20

ՏԵՍԻՒ. Գ

ՆՈՅՆ Լ. ՄԱՐԳԱՐ (դռնէն կը մտնէ)

ԹՍ. Նիկոյին տամ որ տանի . . . Նիկօ . . . Նիկօ
 . . . Նիկօ . . . Նիկօ . . .

ՄՐԳ. (Յառաջ գայով) Ինչ . . .

ԹՍ. (Ետէր ջնայեղուն Նիկօն կարծելով) Առ սա

- նամակը . . . Աճ, դ՞ուք էք Պարոն Մարգար . . .
- ՆԻԿ. (Մսնեղով) Զքս կանչեցիք տէր . . .
- ԹԱ. Առ' սա նամակը ու սիրահարեալներու փո-
ղոցը տար :
- ՆԻԿ. Սիրահարեալներու փողո՞ . . . ո՞ւր է այդ փո-
ղոցը . . .
- ԹԱ. Տիկին Մարգրիտի տունը զիտես՞ :
- ՆԻԿ. Անիկայ որ առջի օրը հոս եկած էր :
- ԹԱ. Այո՞ :
- ՆԻԿ. Ակռան կը ցաւէր :
- ԹԱ. Ինքը :
- ՆԻԿ. Վերջէն ինձի ալ ստակ տուաւ :
- ԹԱ. Ճիշդ :
- ՆԻԿ. Որուն դուն այտերը շոյեցիր :
- ԹԱ. Ինչ՞ կըսես թշուառական :
- ՆԻԿ. Սխալ տուն մը չերթանք տէր :
- ԹԱ. Անոր գնա՛ քեզի տեղ մը պիտի ցոյց տայ ,
հոն ձգէ նամակը և շուտով եկուր :
- ՆԻԿ. Աղէկ տէր . (Կ'երթայ) :
- ԹԱ. Է՛հ, Պարոն Մարգար , խօսէ նայինք ինչ
լուր ունիս . . . ազգային գործերը ինչպէս կ'երթան :
- ՄՐԳ. (Մեկուսի) Ես որ իրեն հարսնիքի օր մը որո-
շելու համար եկայ , ինձի ազգային գործեր կը հար-
ցընէ (Բարձր) Շատ ցաւալի Պարոն . . . բայց ես կու-
զէի . . .
- ԹԱ. Կըսեն թէ ժողովները օրինաւոր կերպով կը
շարունակուին . . .
- ՄՐԳ. Այնպէս է . . . մենք մեր գործին . . .
- ԹԱ. Լսեցի թէ նիստերը կանոնաւոր կերպով

կըլլան . . . իրարքանչիւր անգամ իր աստիճանին յարմար տեղ կը նստի եղեր . . .

ՄԲԳ. Ես ալ անանկ լսեցի . . . ինչ փոյթ մեզի, ինչ սլէս որ ուզեն թող նստին . . . ես եկայ որ . . .

ԹԱ. Մենք Հայ չէնք, մենք ալ զիտնալու ենք թէ ինչ է ըրածնին :

ՄԲԳ. Ըրածնին ինչ պիտի ըլլայ, ոչինչ : Ամէն. օր նորընտիր անդամներ, նորածին խնդիրներ . . . նորատիպ հրաւերներ, անհատնում հրաժարականներ, անթիւ մերժումներ, անսպառ քուէներ, միլիոնաւոր զերօներ, անա ասոնք են . . . մեզի ինչ . . .

ԹԱ. Է՛հ, ասկէց սուկի ինչ կուզէիր որ ընեն, ըսել է որ կ'աշխատին :

ՄԲԳ. Քանի որ շարաթը գոնէ անգամ մը կանոնաւոր ժողովը չունինք . . .

ԹԱ. Ինչո՞ւ ուրեմն այս երեսօտխանները չեն գար, միթէ ազգը չեն սիրեր :

ՄԲԳ. Չկրնար ըլլալ որ ազգը չսիրեն, հարկաւ իրենք ալ պատճառ մ'ունին :

ԹԱ. Կամ թէ ժողովուրդը չկրնար ազէկ ընտրութիւն ընել . . . լրագիրները ինչ կըսեն :

ՄԲԳ. Ամէն բան կըսեն. Շար Մսածմանց անուն լրագիրը միշտ Պատրիարքարանի վրայ կը դարձընէ իր մտածութիւնը . . . և կը պօռայ թէ մինչև որ ամսականաւ հմուտ անձինք չտրուին հոն՝ Սահմանադրութիւնը անգործադրելի պիտի մնայ : Ի պատասխանի այս մտածութեան կըսեն. « Սսակ չկայ, սսակ չկայ » մինչդեռ ժողովուրդը ազգին բարեխառութեանը համար կը խոստանայ նպաստել : Մասիսն իր բարձրա-

կատար զագագէն սէր եւ միութիւն կը պօռայ , ասի-
տաս որ այս բառերը դեռ շատերուն ակամջը մտած
չեն : Յրբեմն ալ ստորոտէն ձայն կարծակէ , կար-
ծելով թէ անկէ դիւրութեամբ կը լսուի , դարձեալ
չօգտեր . մեծ մասը ունկնախից կանցնին անոր առ-
ջակէն : Ծաղիկն քաղցրարոյր որ ամառ ձմեռ կը բաց-
ուի , և որուն ամէն մէկ կոկոնը ազգին լուսաւորու-
թեան հիւթ կը սարունակէ . փթթելուն պէս կըս՝
կըսի անուշ անուշ բուրել , թէպէտ և քաղցր , և
ազգու է իր հոտը , բայց մեր ազգին մէջ մտքի հար-
բուխ շատ բլլալուն պատճառաւ շատերը զուրկ են
թէ իրմէ և թէ հոտէն . Ժամանակն ալ կըսէ թէ ազ-
գին յառաջադիմութիւնը ժամանակէ կախում ունի ,
ինչ օգուտ որ ըսելը զործադրել չէ : Բայց կաղաչեմ ,
ես ազգային զործերու վրայօք խօսելու չեկայ . մաս-
նաւորապէս . . .

ԹՄ. Չըսէս որ Հայութիւնը թշուառ կացու-
թեան մէջ կը գտնուի այսօր . . .

ՄԲԳ. Այնպէս է : Մինչդեռ լուսաւորեալ ազգերը
ազգի ազգի հնարքներով զանազան մեքենաներ կը
շինեն և անոնցմով կը կատարեն անասուններուն
տեսնելու գոծը , մենք Հայքս , անասուններու վերա-
բերեալ զործերն անգամ (կ'ամչնամ ըսելու) մեր վը-
րայ կառնենք : Մեր պանդուխտ եղբայրները ըսել
կուզեմ , որ բեռնակրութեան անտանն լի լուծին եր-
կընցներով իրենց վիզը , հազիւ կրնան իրենց օրա-
կան ապրուստը ճարել , փոզոցի մէջ , քարերու վը-
րայ , զիշերն ալ պանդուկներու մէջ , Հեռու հայրե-
նիքէն . . . զուրկ ընտանիքէն և թերևս ոմանք ալ

բողորովին յուսարեկ հայրենիք դռնալէն, տհ ու
 զոգով կանցնեն իրենց ժամերը. այսպիսի գթա-
 շարժ տեսարանի մ'առջև ձր Հայն կրնայ անտարբեր
 հանդիսատես մնալ, Արովհետև ազգին վիճակը իմա-
 նալ կուզես, բայց ականջներդ, լսէ, խորհէ, և թե՛ղ
 սչքերէդ արտասուաց յորդառատ վտակներ իջնան
 ծնօտդ ի վայր. անոնց համար կը խօսիմ, վասն զի
 Հայաստանի զաւակունք են, և հայրենիքը իր ազա-
 տութեան յոյսը անոնց բազուկներուն վրայ դրած է,
 այն բազուկներուն՝ որք այսօր տկարանալու վրայ
 են և թերեւ օր մը բողորովին ոչնչանան Հայրենեաց
 յուսոյ հետ :

ԹԱ. Արդարեւ իրաւացի են քու խօսքերդ, Պարոն
 Մարգար և ինքզինքս երջանիկ կը համարիմ քեզի
 սէս ազգասէր փեսացու ունենալուս համար : Հապա
 չըսես ինձի թէ ինչ բանի կը ծառայէ Սահմանադ-
 րութիւնը :

ՄԲ. Սահմանադրութիւնը ծոյլ մարդու մը կը'նմու-
 նի, որ եթէ ձեռքէն չըսնես չքալեր, նստած տեղը
 կը մնայ, օր քան զօր կը տկարանայ և կը մեռնի :
 Սահմանադրութիւնը ինչ կրնայ ընել ինք իր գլխուն
 ոտք՝ չունի որ քալէ, երեսփոխանները սկտք է զա-
 նիկայ քալեցնեն, անոնց ալ մեծ մասը տարին ան-
 գամ մը միայն ժողովքին ներկայ կը զանուին, անա
 այսպէս է Պարոն Թախտանիկոս... բայց կադա՛հեմ
 ուրիշ անգամուն թողունք այս խօսակցութիւնը :
 Քիչ մ'առաջ եկած էի մեր հարսնիքի օր մը որոշելու
 համար ձեզի հետ խօսելու. շատ զբաղած էիք, հար-
 կադրուեցայ երթալ, ուստի հիմա որ...

ԹԱ. Լաւ, որոշենք. բայց չգիտեմ թէ տիկինը պատրաստ է:

ՄԲԳ. (Մեկուսի) Տիկինին հետ պիտի կարգուիմ. (Բարձր) Տիկինին համար պատրաստուելու հարկ չկայ, բաւական է որ դուք հաւանութիւն տաք:

ԹԱ. Իրաւունք ունիք. տիկինին հետ ալ անգամ մը խորհրդակցելու էք, վասն զի իրեն ազջիկն է. թէպէտև կէսը իմս է, բայց մայրերը կուզեն միշտ ազջիկներուն զործակատարը կանգնիլ:

ՄԲԳ. Զարմանալի բան, ուրեմն երթամ տիկինին հետ խօսելու:

ԹԱ. Վերջը կը տեսնուինք:

ՄԲԳ. Աղէկ. (Կ'երթայ):

ՏԵՍԻՒ Զ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՆԻԿՈ, ԵՐԱՆԵԱԿ.

ՆԻԿ. (Վազեղով) Տարի տէր իմ. ըսին որ ինքը հոն չէ և թէ գալուն պէս պիտի յանձնեն:

ԹԱ. Աղէկ:

ՆԻԿ. Ետ դարձած ժամանակս, նոյն փողոցին մէջ ազւորիկ կին մը պատուհանը նստեր էր, ձեռքովը կանչեց զիս, ես ալ գացի:

ԹԱ. (Մեկուսի) Սօֆի ըլլալու է:

ՆԻԿ. Կտարտուելով բարակ ձայնով մը, Թախտանիկոսի ծառան էս ըսաւ: Մտան եմ ըսի. Քեզի յանձնարարութիւն մը պիտի ընեմ կընդոսնիս, ըսաւ:

Կընդունիմ ըսի . ինչպէս ալ զբարատ կը խօսի սատանան , ուրիշ անգամուն կանանց քով բառարանով երթալու է , շատ անգամ անհասկնալի խօսքեր թող կուտան բերաններէն : Քչիկ մը սպասէ ըսաւ : Սպասեմ ըսի . պատուհանէն աներևութացաւ . ես ալ արձանի պէս փողոցի մէջ դրան առջին կսպասէի : Քանի մը վայրկեանէն պատուհանէն երևցաւ մեր բարակաձայն տիկինը ձեռքը նամակ մը բռնած , Առ , ըսաւ ցած ձայնով , Առնեմ ըսի բարձր ձայնով : Մի պտար ըսաւ տղսս կը քնանայ , կարթննայ , Թափառնիկոսին տար ըսաւ . Տանիմ ըսի . Ըսէ որ ըսաւ Ինձի թող զայ իրեն խիտ կարևոր խօսք մը ունիմ ըսելու ըսաւ . ահա եսալ ձեզի թող զայ կարևոր խօսք մը պիտի ըսէ կըսեմ ըսելով եկայ :

Թ.Ա. Թշուառական , խօսք մը հասկցնելու համար « Ըսեմ » բայը ամբողջ խոնարհեցիր :

ՆԻԿ . Ահա նամակը (Կուսայ կը մեկնի) :

Թ.Ա. Նախ հասցէն կարգանք ,

« Առ սիրեցեալդ իմ Պարոն Թափառնիկոս Ասամնաբոյժն Արեւելեան .

(Նառնակը կը բանայ կսկսի կարդալ)

Պատիւ ունիմ ներկայիւս քեզի իմացնելու որ , (Այս ընթացին Երանեսակը կը մտնէ , Թափառնիկոսը չտեսնելով զանիկայ , կարդալը կը շարունակէ)

« Այս գիշեր մեր տունը գաս , Պարոն Թովմասը խա-

բենք ու պարահանդէս երթանք, շատ բազմութիւն պիտի ըլլայ հոն, կաղաչեմ մ'ուշանար, շատ կը սիրեմ զեզ, գալուդ պէս գնդասեղով մարմինէդ ա-
րիւն պիտի հանեմ:

Ս Օ Ֆ Ի »

ԵՐ. (Իւրովի) Ո՞վ է այս Սօֆին...

ԹԱ. Մարմինէս արիւն պիտի հանէ, հնա հնա հնա, շատ սիրուն էակ մ'է սա Սօֆին, ինչ պզտուիկ տղա ունի, որքան ալ զեզանի է, սոխակի պէս կը խօսի թշուառականը, տատրակի պէս կը նայի զար-
շելին, սիրամարզի նման ալ պնտասէր է սատանան, ազնիւ բնաւորութիւն մը ունի, անոր համար կը սի-
րեմ զինքը, և պիտի սիրեմ յաւիտեան. ըստ իս բը-
նութեան զեզեցկութիւնը զիմաց զեզեցկութենէ ա-
ւելի սպաշտելի է. կեցցէս Սօֆի... կը սիրեմ ըզ
քեզ (Երանեակը ծեսնեղով անասպարանօք կը պսիհե կա-
ւակը գրպանին մեջ):

ԵՐ. Զ՞ով կը սիրէք հայր իմ:

ԹԱ. Առանց ինձի հարցնելու ինչու համար ներս
կը մտնես:

ԵՐ. Ես հիմայ եկայ:

ԹԱ. Նամակին պարունակութիւնը լսեցիր:

ԵՐ. Զէ հայրիկ (Մեկուսի) կեզծենք:

ԹԱ. Առևտրական զործերու վրայօք տեղեկու-
թիւն կուտայ:

ԵՐ. (Մեկուսի) Սիրոյ առուտուր, (Բարձր) Մտած
ատենս մինակ սա չափը լսեցի «Կը սիրեմ զքեզ»

ԹԱ. Խելացի տղայ է կը սիրեմ զինքը . . . միւս
խօսքերը չլսեցիր :

ԵՐ. Ձէ հայրիկ :

ԹԱ. Ապրիս աղջիկս, վասն զի աղջիկ մը պէտք
չէ որ ամէն տեսակ խօսքերու ունկնդիր ըլլայ :

ԵՐ. Գիտէ՞ք հայրիկ, առանձին կուզէի գտնալ
ձեզ որպէս զի ձեզի իմ սիրտս բանամ :

ԹԱ. Բայ նայիմ. (կեղծ եմ) :

ԵՐ. Առաւօտուն պատանի մը եկած էր հոս որ
ակռայի ցաւ ունէր :

ԹԱ. Այո՛ եկած էր :

ԵՐ. Ինչպէս՞ գտաք այն Պարոնը,

ԹԱ. Անիկայ ինքնիրեն եկաւ :

ԵՐ. Այսինքն իր վարքը, գէ՛մբը, գեղեցկութիւնը,
խօսքը, ոտքը . . .

ԹԱ. Պարկէշտ տղու մը կը նմանի :

ԵՐ. Իմ նշանածէս աւելի խօսեմ, սիրուն, ազւոր
հագուստները նոր, սիրտը զգայուն, ոտքը պզտիկ,
ձեռքը փափուկ . . .

ԹԱ. Ձեմ հասկնար թնչ ըսել կուզես :

ԵՐ. Ըսել կուզեմ թէ, այսպիսի պատանի մը
գտնուած ատեն թնչու իմ սիրտս Մարգարի տամ :

ԹԱ. Մարգարի յատկութիւնները այն պատան-
ւոյն հագուստը, ոտքը կը գերազանցեն. Մարգարը
ազգասէր է :

ԵՐ. Ը՛հ՛ ազգասէր, միշտ պատուած հագուստ-
ներ կը հագնի :

ԹԱ. Խոնարհ երիտասարդ մ'է :

ԵՐ. Ը՛հ՛ խոնարհ, միշտ հին լաթերով կը պատիւ

ԹՍ. Խելացի տղայ մ'է :

ԵՐ. Ը՛հ խելացի, նոր հագուստ մը տեսած չունիմ վրան :

ԹՍ. Ի բարկութիւն մի հրապուրեր զիս :

ԵՐ. Ինչո՞ւ բարկութեան հրապուրեմ, չէ՞ք տեսներ, միշտ հին լաթերով կը պտտի :

ԹՍ. (Բարկուրեալք) Գուք կանայք նոր լաթերը ամուսիններէդ աւելի կը սիրէք, և անոնց քսակը կը պարսէք. խելքս չհասաւ և չսլիտի հասնի... աս ինչ շոայլութիւն է... : Գարուս օրիորդները աւելի նորութիւններու կը սիրահարին քան թէ երիտասարդներու, և երիտասարդութիւնը՝ այն ըզձալի հասակը, այս անիծեալ հագուստին կը զոհուի. խեղճ երիտասարդութիւն, ինչ ժամանակի հասար : Մենք Զատկին նոր հագուստ մը շինել կուտանք, երկու երեք տարի անով կը բաւականանանք, տես սա զիշերտան հագուստս, Սանձանադրութեան առաջին տարեգարձին առած էի և դեռ կը հագնիմ, բայց դուք նորաձևութիւն կըսէք հագուստ կառնէք, հրնաձևութիւն կըսէք լաթ կուզէք, ամուսիններնիդ չկենան ասնէն. անկէ վերջը դաշտերու վրայ դրուած զօրականներու վրաններու պէս անաւոր անշարժներու մէջ կը մտնէք, փողոցի վրայ անցնորդները կարգելուք, թէ որ մէկը հագուստնիդ ոտքովը պատռէ ծուռ ծուռ կը նայիք, և իրիկունք ամուսիններնուդ կըսէք, մէկը աւանակի պէս անցաւ, հագուստս պատռեց, ստակ տուր վաղը ուրիշ մը աւնեմ. (Կ'երգէ) :

Կանայք ասանկ են ,
 Մի՛ս նոր լաթ կուզեն ,
 Եւ թէ որ չառնես՝
 Պզտիկ տղու պէս
 Որ դեռ ծծէ կաթ ,
 Ես լաթ կուզում լաթ
 Կրսեն կը պօռան
 Կուլան ու կուլան :

Առտուանց կանուխ կրսէ լաթ լաթ լաթ ,
 Պառկելու ասեն պօռայ լաթ լաթ լաթ .
 Ամառը կուգայ դարձեալ լաթ լաթ լաթ ,
 Զմեռ կը հասնի բայց մի՛ս լաթ լաթ լաթ :

Ի՞նչ ալ հիմայ ելեր, նշանածիդ հագուստներուն
 չես հաւնիր : Ես գիտեմ յանցանքը իմս է, քեզի հետ
 միշտ անուշութեամբ վարուեցայ, և իրրև բարբա-
 րոս հայր մը ամէն մէկ խօսքդ սպտակով չվարձատ-
 րեցի. ուստի ալ ժամանակն հասաւ, պէտք է որ
 քաղցրութիւնը դառնութեան փոխուի. ահա վերջին
 խօսքս, Մարգարը պիտի սիրես :

Ե՛ր. Անհնարին է ինձ զայն սիրել, քանի որ ան-
 դին լուսնոյ պէս երիտասարդ մը յափշտակեր է իմ
 սէրս :

ԹՄ. Ինչո՞ւ յափշտակել տուիր :

Ե՛ր. Սրտիս հարցուցէք, ինձի ինչ կը հարցնէք :

ԹԱ. Շուտ կորի առջևէս, զնա սենեակդ քաշուէ, անզգամ աղջիկ :

ԵՐ. (Մեկուսի) Ի՛նք որ այս հասակին մէջ ուրիշ կանանց կը քծնի. (Բարձր) Մարգարի հետ չպիտի կարգուիմ, (Կ'երթայ) :

ՏԵՍԻՒ Է.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ . Վերջը ՆԻԿՈ

ԹԱ. Շուտով հազուիմ իմ Սօֆիիս երթամ, գիշերը կը մօտենայ, սա նամակներն ալ զրպանա դնեմ երկուքն ալ, որուն մէկը Լևոնին է որ վաղ առտու պիտի գայ սիրահարութիւն ընելու ինձի հետ... փատով. միւսը Սօֆիիս, որուն հետ այս գիշեր պիտի սիրահարութիւն ընենք... լեզուով. (Զանգակը կը զարնէ Նիկօ կը մտնէ) Շուտ հազուստներս բեր կարմիր ու ճերմակ ներկերն ալ միատեղ. (Նիկօ կ'երթայ) Սովորութիւն եղած է ինչ ընեմ, հնազանդելու է. խնդալու բան, հա հա հա, ինձի պէս մարդու մը երեսը ներկելը՝ ճիշդ ճին տուներու ճակատը ներկելու կը նմանի, որոնք դրսէն անցնողներուն ուշը կը զրամեն, ներս մտնողներուն ալ ծիծաղը կը շարժեն :

ՆԻԿ . Հազուստներդ բերի տէր :

ԹԱ. Բռնէ հագնիմ :

ՆԻԿ. (Հակասուակ կողմէն բռնելով, Թախտակիկու չկրնար թելերը գտնել) Հրամմեցէք տէր :

ԹՍ. (Բարկոսքեանք) ո՞ր են թելերը :

ՆԻԿ. Ուր պիտի ըլլան վրան են, կարծեցիր թէ գողցո՞ւյ :

ԹՍ. (Ետեւը նայելով) Գեռ հագուստ մը բռնել չը սորվեցար (Աստակ բռնե, աստակ կեցիր, կը հագնի). Հոս մտնելը տիկինը տեսա՞ւ :

ՆԻԿ. Չէ տէր իմ :

ԹՍ. Գուռը գոցէ (Մեկուսի) Չըլլայ որ մէկէն ի մէկ գայ : (Նիկո կը գոցե) Հիմա ալ երեսնիս նայինը (Հայելիի առջեւ կ'երթայ) Առաջ ճերմակը վերջը կարմիրը (Կը փառի) Տեսնողը տասնը վեց տարու մէկը պիտի կարծէ : (Նիկոյին դառնալով) ինչպէս . . . աղւորցո՞ւյ :

ՆԻԿ. Ը՛հ . . . կապիկի դարձար :

ԹՍ. Պատանձէ, ոտքի ամաններս ո՞ր են քեր. (Նիկո կը քերե) շուտով հագուստ երթամ, թէ որ գիտ փնտոող մը ըլլայ. պատասխանես թէ ծանր ճիւղնդի մը զնաց, և թէ այս գիշեր չպիտի գայ : Տիկինին բան մի գուրցեր, կիմանա՞ւ. երբոր հարցընէ քեզի պատասխան տուր թէ հիմայ պիտի գայ. կամացուկ մը սա դուռը բաց, նայէ մարդ կո՞ւյ, (Նիկո կը նայի) առանց տիկինին խնայնելու կ'ծիկը դնեմ. թէ որ իմանա՞ու ըլլայ, դարձեալ պիտի կողմինք :

ՆԻԿ. Մարդ չկայ տէր :

ԹՍ. Ահա ես պիտի երթամ, կարելի է որ այս գիշեր չգամ, վաղ առտու կանուխ հոս պիտի գրտնուիմ (Երթալով վրայ) :

ՏԵՍԻՍ Ը.

ՆՈՅՆՔ և՛ ԱՐԹԱ.

ԱՐԹ. (Դռնեկե՛ր երեւեակալո՛ւ) Ախրե՛լի ամուսինս . . . միւս խոցին մէջ միս մինակ նստելէն սիրտս նեղացաւ, ելնեմ ըսի ամուսնոյս քովն երթամ . . . հագուեր ես . . . իրիկուն եղաւ . . . ինչո՞ւ համար :

ԹԱ. Թո՛ղ Աստուած սիրես . մեզի համար հանգստութիւն չկայ . բժիշկ չես՞, ամէնուն ծառան ես : Այս գիշեր որ քիչ մը հանգչել կուզէի, վտարքս ի դերև ելաւ . հիմայ նամակ մը ստացայ, որուն մէջ կը գրեն թէ անպատեառ երթամ, մէկը ակոսային ցաւէն բռնուած ըլլալուն, շարաթ մ'է որ գիշերները չքնանար . . . թէ որ չերթամ մեղք է :

ԱՐԹ. (Մեկոռսի) Սուտ կը խօսի, (Բարձր) Հապա ազտոցեր ես :

ԹԱ. Տէր ողորմես, տո՞ւաջ տգեղ՞ էի :

ԱՐԹ. Կ'ազաչեմ քեզի այս գիշեր մ'երթար :

ԹԱ. Կուգան բռնի հառնեն կը տանին :

ԱՐԹ. Ոչ, այս անգամ ալ իմ խօսքս թող ըլլայ :

ԹԱ. Տղու մը պէս կը խօսիս տիկին, զործս մ'արգելուր, (Երբայու վրայ) :

ԱՐԹ. (Հագուսեկն քնեցող) Ոչ, չպիտի երթաս :

ԹԱ. Ալ չափն անցուցիր, քաղցրութեամբ կը խօսիմ չես հասկնար . թէ որ անգամ մ'ալ բարկութեան դէմքս առնեմ,

ԱՐԹ. Միտքդ թնչ է, յայտնէ ինձի :

ԹԱ. Թ՛ո՛ղ զիս, հիւանդի պիտի երթամ:

ՄՐԹ. (Միշտ Թախտուկիկոսը արգիլելով) Չպիտի երթաս, ես ալ հիւանդ եմ:

ԹԱ. Կորի սըկէ ցնդած պառաւ:

ՄՐԹ. Յնդած պառաւ... ցնդած պառաւ. մոռցա՛ր որ իմ ստակովս մարդ եղար:

ԹԱ. Գետինը անցնիս. ես զղջացայ բեզի հետ կարգուելուս:

ՄՐԹ. Ձղջացար, ստակներս ինչո՞ւ կերար. տուր ստակներս բաժնուինք:

ԹԱ. Բարկութեանս ամանը լեցաւ:

ՄՐԹ. Կարծես թէ իմինս պարապ՞ է. տուր ստակները վերջացնենք խաղը:

ԹԱ. Ոչ ստակներդ կուտամ, ոչ ալ բուխօսքդ մտիկ կընեմ:

ՄՐԹ. Այս խաղն ալ չլմննար:

ԹԱ. Թ՛ո՛ղ չլմննայ, հինգ արարուած ըլլայ. երկրորդին մէջն ենք:

ՄՐԹ. Այն արարուածները բթէդ բերնէդ պիտի հանեմ:

ԹԱ. Վերջապէս պիտի լուս:

ՄՐԹ. Չպիտի լուս, զուն իմ ստակովս համբաւ ստացար, տուր ստակներս, ուր որ ուզես հոն գնա՛ւ,

ԹԱ. Սա չուանը տո՛ւր Նիկօ... տեսնես հիմա ստակները... ոտքերդ կապեմ որ հասկնաս... (Նիկօ չուանը կըսայ, Թախտուկիկոս կապել կուզի, Մարթայ չքողոր): Պիտի կապեմ և անանկ պիտի երթամ, անիծեալ ըլլաս անօրէն կին (Մեկուսի) Տէր Աստուած, մեղայ, Տէր Աստուած:

ԹԱ. Աստուած պատիժդ տայ (Մեկուշի) սուրբ Աստուածածին դուն մեզք մի զրեք :

ԹԱ. Դեռ պիտի պօռանս :

ՄԲԹ. Ստակովս մարդ եզար :

ԹԱ. Ստակիս (Մեկուշի) Տէր ողորմեա տէր ողորմեան :

ՄԲԹ. Դուն սասկէ (Մեկուշի) Սուրբ Աստուածածին մեզք մի զրեք :

ԹԱ. Աշխարհի առջև ծաղր ու ծանակ պիտի ըլլանք. քրէական յանցանք մը գործեցի քեզի հետ ամուսնանալուս :

ՄԲԹ. Ստակներս տուր :

ԹԱ. Շունչդ կտրի, (Մեկուշի) մեղայ մեղայ :

ՄԲԹ. Ստակովս մարդ եզար :

ԹԱ. Ստակդ գետնին տակը անցնի :

ՄԲԹ. Քեզի հետ մէկտեղ :

ԹԱ. (Կրան երթալով) Կեցիր խայտառակ, հասկըցնեմ քեզի թէ ինչ է էրիկ մը. (Կը պտակեցնէ ոսկերը կը կսպէ) սո՛հ. հիմայ սլառկէ որ, ես ալ երթամ (կ'երթայ) :

ՆԻԿ. (Բարձրաձայն կը խնրայ) Ասոնք ալ ամէն օր կոխ պիտի ընեն :

ՄԲԹ. Օգնութեան հասէք :

ՆԻԿ. Ձը, ճը, ճը, ինչ բան :

ՄԲԹ. Եկուր քակէ սա կապը, ո՞ն չեմ կրնար դիմանալ, ջիզերս կը քաշուին, ինչ մեղք գործեցի Աստուծոյ դէմ որ ասանկ կը տանջուիմ . . . ան կանայք թշուառ են. իմ ծեր հասակիս մէջ հետս ա՛յն

պէս զազանարար վարութիւն . . . (Լալոյ) Երանեակ . . .
Երանեակ . . .

ՆԻԿ. (Դուռը բանալ ուղեղով) Դրսէն կը պեր է . . .
օգնութիւն . . .

ՄԲԹ. Մարգար, Երանեակ . . .

ՆԻԿ. Օգնութիւն . . . օգնութիւն

ՄԲԹ. Ձեն լսեր. ուժ չմնաց վրաս . . . աչքերս կը
մթաղնին, թմրութիւն կուզայ վրաս . . . ահա կը
մարիմ (Կիլնայ) կը մեռնիմ . . . ձեռներս . . .

ՆԻԿ. Տիկին ինչ կը լլսաս . . . օգնութիւն . . . ինչու
պառկեցար տիկին . . . օգնութիւն (Ասդիս անդին
վազուրոսեղով) Մի վախնար տիկին, հոս եմ . . . օգ-
նութիւն . . . հիմա կանցնի բան մը չէ . . . ճայն չհա-
ներ. (Պոռաղով) Օգնութիւն . . . ուժը ժողով տիկին . . .
(Դրան ծակեկն դուրս կը պոռայ) Օգնութիւն տիկինը
պիտի մեռնի . . . մեռաւ . . . կը մեռնի . . .

ՏԵՍԻԷ Թ.

ՆՈՅՆՔ ԵՆ ԵՐԱՆԵԱԿ

ԵՐ. (Շփորած դուռը կը բանալ) Ինչ՞ սպասանեցաւ . . .
ՆԻԿ. Ձես՞ տեսներ . . . տիկինը կը մեռնիմ, ըսաւ,
ինչ գիտնամ սնու է, ճշմարիտ է :

ԵՐ. (Լալոյ վօրը քով կ'երթայ) Ինչ՞ ունիս մայրիկ,
. . . Սուրբ Աստուածածին, մարմինը պաղ է . . . բիչ
մը ջուր, ջուր, ջուր, ջուր, աւանակի պէս ինչն
կեցեր ես. ջուր, ջուր, ջուր :

ՆԻԿ. (Վազեղով) Ջուր, ջուր, ջուր, կարծես թէ տուելը կը բռնկի. մեռած մարդուն ջուրը ինչ կօզտէ :
ԵՐ. Բաց աչքերդ մայրիկ, բաց. ես եմ բովդ նստողը, բու աղջիկդ Երանեակն է, ա՛հ, մայրիկ, մայրիկ (կաղով) Ինչու չես պատասխաներ, մարմինը որքան պաղ է :

ՆԻԿ. (Վազեղով կուգայ) Ջուր չկայ, (կը թփնե Մարթային երեսը) պարսպ տեղը մի լար օրիորդ, թէ որ մեռած չըլլար պատասխան կուտար :

ԵՐ. Սեղանին վրայ անուշադրի ողի կայ բեր :

ՆԻԿ. Լուսահոգին կոտորեր է աս առտու :

ԵՐ. (Վազեղով սեղանին վրային շիշ և՛ր կառնե և՛որը գիրը կը բռնե) Ասով, հիմա,

ՄՐԹ. (Սքախեղով) Ինչ՞ է... ինչո՞ւ քովս...

ԵՐ. Բան մը չկայ մայրիկ :

ՄՐԹ. Ուր՞ գնաց հայրդ :

ԵՐ. Չգիտեմ :

ՆԻԿ. Հիմա պիտի գայ :

ՄՐԹ. Ա՛հ բարբարոս մարդ. տես ինչ վիճակի մեջ թողուց զիս :

ԵՐ. Աթոռի վրայ նստէ մայրիկ... ա՛հ, աս ինչ է... ոտքերդ կապուած...

ՄՐԹ. Ինքը կապեց ու գնաց :

ՆԻԿ. Հիմա պիտի գայ :

ԵՐ. Ես գիտեմ ուր գնաց : (Մօրը ոտքը փակեղով) :

ՄՐԹ. Գիտես ուր գնաց :

ՆԻԿ. Հիմա պիտի գայ. (Կ'երթայ) :

ՄՐԹ. (Արոռի վրայ նստած) Ջուրցէ Երանեակ, վըրէժ պիտի լուծեմ իրմէ, վրէժ :

ԵՐ. Քիչ մը առաջ հոս մտած ժամանակս նամակ մը կը կարդար, Սօֆի անուն տիկինէ ուղեալ ու սէր բաներով տողեալ:

ՄԲԹ. Գիտէի որ կին մը կը սիրէ, բայց ո՞վ ըւրալը չիմացայ մինչև հիմա:

ԵՐ. Անիկայ որ մտնելս չտեսաւ, կըսէր «Սոխախակի պէս կը խօսի, տատրակի պէս կը նայի, սիրամարգի պէս պճնասէր է»:

ՄԲԹ. Շարունակէ:

ԵՐ. Եւ թէ այն կինը հօրս մարմինէն արիւն պիտի հոնէ եղեր:

ՄԲԹ. Թող հանէ, թող հանէ, որ հասկնայ:

ԵՐ. Գնդասեղով:

ՄԲԹ. Գնդասեղով:

ԵՐ. Եւ այս զիշեր ալ պարահանդէս պիտի երթան զուարճանալու համար:

ՄԲԹ. Ինչպէս կընանք սորվիլ այս Սօֆիին տունը:

ԵՐ. Նիկոյէն, նամակը անիկայ բերաւ: Կանչենք զինքը հարցնենք, Նիկօ, Նիկօ:

ՆԻԿ. Եկայ:

ՄԲԹ. Պարոն Թախտոնիկոսը ո՞ւր գնաց:

ՆԻԿ. Հիմա պիտի գայ:

ՄԲԹ. Ուր՞ գնաց:

ՆԻԿ. Ձեմ գիտեր ուր երթալը, բայց... հիմա պիտի գայ:

ՄԲԹ. Նամակը ո՞ւրկէ բերիր:

ՆԻԿ. Ինչ ըսեմ տիկին... հիմա պիտի գայ:

ԵՐ. Աս տպուշն ալ խօսք չհասկնար:

ՆԻԿ. Հիմա պիտի գայ, օրիորդ:

- ԵՐ. Նամակը ուրիշ առիթ:
- ՆԻԿ. Սիրահարեալ... նե... ըու... փողոցէն:
- ԵՐ. Ինչո՞ւ համար հոն զացիր:
- ՆԻԿ. Նամակ մը տարի:
- ԵՐ. Որքէն:
- ՆԻԿ. Թիւ 20... Թափառնիկոսը հիմա պիտի գայ:
- ԵՐ. (Մեկոռսի) Թիւ 20. Լեօնին տունը... (Բարձր)
- Նամակը ո՞վ տուաւ:
- ՆԻԿ. Ձե՛մ ճանչնար կնիկ մը տուաւ, առ ասիկայ Թափառնիկոսին տար ըսաւ, ես ալ բերի:
- ՄՐԹ. Այն կնկան տունը զիտէս:
- ՆԻԿ. Գիտե՛մ, տիկին, զիտե՛մ:
- ԵՐ. Հապա թիւ 20 տունը ո՞վ կար:
- ՆԻԿ. Ան տունը... ան տունը... չե՛մ յիշեր ո՞վ կար... շատ բաներ կային բայց միտքս չէ:
- ԵՐ. (Մեկոռսի) Ինչ պիտի ըլլայ արդեօք... Լեօնը սատանայութիւն մը ըրած է, ակոսյի ցաւունիմ ըսելով... ասիկայ ալ զեղ տարած ըլլալու է:
- ՄՐԹ. Պէտք է որ երթամ Վոտնեմ զիրենք բայց, այս հագուստներովս պարահանդէսի մէջ կը ճանչցուիմ: Էրիկ մարդու կերպարանք մտնեմ... այո, ժամանակ չկորսնցնենք, զիշերը կը մօտենայ. (Կ'երթայ, Նիկօ աչ կեռեկն):

ՏԵՍԻԼ. Ժ.

ԵՐԱՆԵԱԿ Վերջը ՄԱՐԳԱՐ

ԵՐ. Այս զիշեր միս մինակ պիտի մնամ տան մէջ, այս առանձնութենէ օգուտ քաղելու է: Մէկը

գտնեմ Նստնիկիա խրկեմ, խմացնելով որ ամենայն դիւրութեամբ կրնայ հոս գալ ու հետո խօսակցիլ : Իւրաքանչիւր ոք իր գործին ելնելուն կը նայի . ես ալ ինչ ընեմ այս աշխարհի վրայ ամէնը, ամէնը մէկ սիրական մը ունիմ : Դեռ ամիս մը չեզաւ Փարիզէն դառնալը, այսքան ալ շուտ սիրտս զբաւեց . . . այնպէս որ Մարգարէն բոլորովին պաղեցայ . ի վերայ այսք Փարիզի մէջ կրթուող երիտասարդները սիրելու կերպն աղէկ կը սորվին, Պօլսեցիներէն շատ վարպետ են այս մասին . հարկաւ աղէկ պիտի սորվին, քանի որ հոն սիրելու արուեստ անունով զըրբեր կը տպուին :

ՄԲԳ. Դուն հոս մինակ, Երանեակ :

ԵՐ. (Մեկուսի) Եկաւ (Բարձր) մինակ :

ՄԲԳ. Ինչ[՞] ըրիր :

ԵՐ. Ոչ ինչ :

ՄԲԳ. Ձեռքդ երկնցուր տեսնեմ, դուն այսքան ազմկոտ չէիր, ինչ եղեր ես . . . ձեռքդ տուր նայիմ :

ԵՐ. Ձեռքս աղտոտ է :

ՄԲԳ. Մօտ եկուր, համբոյր մը տպեմ երեսդ :

ԵՐ. Իմ երեսս տպարան չէ :

ՄԲԳ. Թերևս ազջիկները աս տեսակ ծանր վարքով կուզեն զիրենք սուղ ծախել . . . միաս չունի . . . ո՞ն Երանեակ կը խնդացնես զիս, դուն ծախուած ես, եկուր քովէ քով նստինք . . . այս զիշեր հոս պիտի մնամ, հարսնիքի օր մը պիտի որոշենք հօրդ հետ . . . բայց հայրդ ո՞ւր է :

ԵՐ. Չգիտեմ :

ՏԵՍԻՍ, ԺԱ.

ՆՈՅՆՔ. ՄԱՐԹՍ, (երկի մարդու հագուստով)

ՄՐԹ. (Ursorևոֆ գաղով) Ահա պատրաստուեցայ :

ՄՐԳ. Աս ինչ կերպարանք է տիկին :

ՄՐԹ. Որովհետև մեր փեսացուն էս . . .

ԵՐ. (Մեկուսի) Աստուած չընէ . . .

ՄՐԹ. Քեզի ամէն բան կը յայտնեմ :

ՄՐԳ. Զրուցէ վասն զի կը դողդզամ . . .

ԵՐ. (Մեկուսի) Տրտէն :

ՄՐԳ. Արդեօք դժբաղդութիւն մը պիտի լսեմ. արդէն Նրանեակի տխրագէմ կենայր ինձի գուշակէր կը տար . . . բայց . . . ինչ պատահեցաւ :

ՄՐԹ. Ահա բարձրաձայն կըսեմ, Թափառնիկոսը Սօֆի անունով կին մը կը սիրէ :

ՄՐԳ. Կարելի է որ . . .

ՄՐԹ. Կարելի է, և այս ժամուն անոր տունը կը գտնուի, մէկ երկու ժամէն պարահանդէս պիտի երթան. դիտմամբ այս կերպարանքն առի, որպէս զի չճանչցուիմ, ձեզի ալ կազաչեմ որ ընկերանաք ինձի :

ՄՐԳ. Անհաւատալի կը թուի որ . . .

ՄՐԹ. Հաւտացէք, շատոնց զիտէի սիրունի մը ունենայր, բայց ո՛ւր և ո՛վ ըլլայր մինչև այսօր չէի իմացեր. անա հիմա ամէն բան յերևան եկաւ, ժա-

մանակ կորսնցնելու չգար. (Նիկո կը մտնէ շապտեր մը քռնած) Եւ դուն Երանեակ, դուռը լաւ մը կըզպէ, սենեակդ մտիւր, թէ որ կը վախնաս՝ դրացիին գնա, հոն նստէ, մինչև որ դառնանք :

ԵՐ. Ձէ մայրիկ. չեմ վախնար, հոս կը նստիմ, ես հիմակուան նորելուկ աղջիկներէն չեմ որ մուկէն անգամ կը վախնան :

ՄՐԳ. Շատ ուրախ եմ որ այսպիսի քաջասիրտ օրիորդի մը զլխուն պիտի գպցնեմ զլուխս :

ԵՐ. (Մեկրուսի) Գլուխդ չորնայ. (Կ'երթայ).

ՄՐԹ. Ապրիս աղջիկս . . .

ՄՐԳ. Շատ հեք բնաւորութիւն ունի :

ՄՐԹ. Եւ ս'ի կըթեց զինքը, եթէ ոչ իր մայրը, որ իր խիստ բնաւորութեամբը աղջիկը դաստիարակեց, կարգը հիմա հօրն եկաւ, անիկայ ալ աղէկ մը կըթեմ, կանանց օրինակ ըլլամ. տեսնեն թէ կին մը աւելի զօրաւոր է թէ էրիկ մը, Ձէք կընար երեակայել, կատակերգութիւն պիտի խաղանք կըսէ, երկրորդին մէջն ենք կըսէ՝ հիմա ալ ես պիտի սկսիմ երրորդ արարուածին. երթանք. (Կ'երթան).

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Մ Գ .

Թովմասի տան մեջ պատկերու սենեակ մը , աջ կողմը ան .
կողին մը կը տեսնուի . մեջ տեղը սեղան . գիշեր .

ՏԵՍԻՒՆ Ա .

(ԹՈՎԱՄԱՍ րիկևարոտի վրայ ևստած . ՍՅՅԻ անկէ
քիչ մը անդին արոտի վրայ ևստած , քաշկիւնակովը
երեսը գոցած . ԿԻՐԱԿՈՍ դրան առջին ևստած կը մրափի .)

ԹՈՎ . Յաւը չմեղմացում , տիկին :

ՍՅՅԻ . Ձէ , սիրելի ամուսինս , մանաւանդ թէ եր-
թալով կը սաստկանայ , թէ որ այսպէս շարունակ
փախնամ որ աչքս բաց պիտի անցընեմ գիշերը . . .
Ինձի մի սպասեր դուն գնա անկողինդ մտիր , պառկէ
(Մեկուսի) Կարծես թէ այս գիշեր դիտմամբ չսրտ-
կիր :

ԹՈՎ . Համբերելու է , ինչ ընենք . ես իմ բազդիս
վրայ կուլամ : Նրխտասարդու թեանս ատեն իմ միակ
փախարս էր ուժով , առոյգ ու զեղանի կին մը ստա-
նալ , չեղաւ . . . չեղաւ . . . չեղաւ . . . փախարս ի դե-
րե ելաւ : Քեզ սիրեցի , ամուսնացայ հետդ , այսօր
ակուստ կը ցաւի . . . փաղը զլուխդ . . . միս օրը

աչքդ... մէկ շաբաթէն մազերդ... Ինչ գիտնամ ,
ամէն ատեն ցաւ մը կզգաս վրադ... Ախոսոս որ ծե-
րութեանս ատեն խաղաղ կեանք չեմ կրնար վարել...
ամէն օր ցաւ... ցաւ... ցաւ... Պարոն աստամու-
բոյժն ալ չերեցաւ , արդեօք տունը չէր :

ՍՖԻ. Ով՞ գիտէ : Բժիշկները զիրենք ծանր ծա-
խելու կը ջանան, հիւանդը կը տանջուի կամ կը մեռ-
նի, չէ իրենց փոյթ . բաւական է որ իրենց աշխա-
տութեան վարձը առնուն... ան... որքան ալ սաստ-
կութեամբ կը ցաւի, (Մեկուսի) որքան ալ սատա-
նայութեամբ կը կեղծեմ :

ԹՈՎ. Յաւը ո՞ր կողմն է տիկին :

ՍՖԻ. Չախ կողմն է, սիրելի ամուսինս... Ինչո՞ւ
պարապ տեղը նստած կը խորհիս , անկողինդ պա տ
բաստ է պառկէ :

ԹՈՎ. Պառկէ... պառկէ... Ինչ ազւոր կը տրա-
մաբանես... առանց բեզի անկողին մտնելը ինձի
համար զերեզման իջնալ է. պիտի կրնամ անհոգ քը-
նանալ երբ այսպէս կը տանջուիս... Բիչ մ'ալ համ-
բերէ տեսնենք. թէ որ Թափառնիկոսը չգայ ուրիշ
մը կանչել կուտանք :

ՍՖԻ. Պարոն Թափառնիկոսը որակոաներուս բնու-
թիւնը գիտէ...

ԹՈՎ. Եթէ այդպէս է , անգամ մ'ալ խրկենք կի-
րակոսը նայելու թէ որ տունն է առնէ գայ...
Հա... դուռն է (Իրսէն կը զարնէն) Դուռը կը զար-
նեն Կիրակոս... Կիրակոս... Կիրակ... .

ԿԻՐ. (Արթննայով) Ինչ կայ... Ինչ... :

ԹՈՎ. Ինչ պիտի ըլլայ դուռն է , զնա բնց (Կիրա-

կոս կ'երթայ) Վերջապէս եկաւ Աստուած տար որ
շուտով անցընէր սա ցաւը, մենք ալ ազատէինք:
Գալուն պէս մէկէն ի մէկ քովը մի կանչէր, վասն զի
բժիշկներուն սովորութիւնն է եկած ժամանակնին
սուրճ մը խմել և...

ՍՅԻ. Գիտեմ այդ սովորութիւնը...

ԹՈՎ. Ադէկ մարդ է սա Թափառնիկոսը, Եւրոպայի մէջ ունեալ բժիշկներու պէս շատ ստակ ալ
չուզեր. ինչ որ տաս' կընդունի ու հազար շնորհա-
կալութեամբ կը մեկնի... անա կուզայ:

ՏԵՍԻՒ Բ .

ՆՈՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ և ԿԻՐԱԿՈՍ.

ԹԱ. Բարե... բարե...

ԹՈՎ. (Արոտեկն եղևերով) Բարի եկար Պ. ատամնա-
բոյժ, հրամանեցէք, նստեցէք, ինչպէս էք աղէկ էք:

ԹԱ. Փառք Աստուծոյ գէշ չեմ... (Մեկուսի) Անօ-
րէն կին (Բարձր) Հրամանքնի՞ր:

ԹՈՎ. Ինչ ըսեմ... մենք ալ... մենք ալ աղէկ,
բան չկայ փառք Աստուծոյ. միայն թէ մեր տիկի-
նին ակռաները չզխտեմ ինչու այսքան շատ կը ցա-
ւին... Կիրակոս սուրճ բեր...

ԹԱ. Շնորհակալ եմ... չեմ ուզեր...

ԹՈՎ. Տարիէ մը ի վեր է միշտ կը ցաւի :

ՍՖԻ. Առաջուց ա լ կը ցաւէր :

ԹԱ. Ակոսայի ցաւն ասանկ է :

ԹՈՎ. Յերեկն այնքան շատ չցաւիր որքան որ զիշերը :

ԹԱ. Այդպէս է , զիշերը կը սաստկանայ :

ԹՈՎ. Հրամանքնիդ ուշ մնացիր , ո՞ր էիք , բաւական սպասեցինք ձեր ազնուութեանը :

ԹԱ. Իմ ազնուութիւնս ահուայ քաշելու գացած էր , անոր համար ուշացաւ , թէ որ զիտնայիր ազնուութեանս զլխուն եկած փորձանքները . . . ինչ է . . .

ԹՈՎ. Այսօր կերելի որ շատ յոգնած էք . քանի ահուայ հանեցիր :

ԹԱ. Հարիւր կնկան ահուայ քաշեցի , տասը էրիկ մարդու :

ԹՈՎ. Աստուած բազկիդ զօրութիւն տայ :

ԹԱ. Ամէն :

ՍՖԻ. (Մեկուսի) Ինչպէս սատանութեամբ կը խօսի մեր ատամնաբոյժը :

ԹԱ. (Մեկուսի) Ինչպէս վարպետութեամբ հիւանդ կը ձևանայ տիկիներ :

ԹՈՎ. Կրն՞աք ինձի զրուցել թէ , ինչ բանէ յառաջ կուգայ այս ցաւը :

ԹԱ. Շատ սպառնառներէ , որ մէկն ըսեմ , թէ որ մէկը քրտնած ժամանակը ոտները հողմին դէմ վերցնէ , ահուայի ցաւ կունենայ :

ԹՈՎ. Մեր տիկիներ ոտները հողմին դէմ չվերուց , հէ . . . տիկին . . .

ՍՅԻ. Ոտներս հողմին դէմ ինչ գործ ունին. Տէր ողորմեա՛ . . . խենդես . . . ինչես :

ԹԱ. Կրնայ ըլլալ որ . . . շատ ջուր խմելէն ալ ըլլայ . . . ծառերն անգամ որ ջրոյ կարօտութիւն ունին, թէ որ արմատէն ջուրը պահաս չընես ան ալ կը փթթի . . . ուր մնաց որ ահռայ մը . . . ասկէ առնելով կրնամ ըսել որ շատ ջուր խմելն ահռայի կը մնասէ : Բայց ասիկայ Եւրոպայի բժիշկներուն կարծիքին դէմ ըլլալով կը ջրեն :

ԹՈՎ. Կը ջրեն . . . կը ջրեն . . . իրաւունք ունիս . . . հայրս ալ կըսէր որ Եւրոպացիները ծառերը շատ կը ջրեն . . . անկէ միտքս մնացեր է : Եկուր տես որ մեր տիկիներ շատ ջուր ալ չխմեր :

ԹԱ. Կրնայ ըլլալ որ . . . (Մեկուսի) Սուտերը կը կը հատնին . (Բարձր) Ատամնարութեան քիչ մը տեղեակ ըլլալու էիք որ, կարենայիք հասկնալ . . . Թէ որ մէկուն սիրտը նեղի ու չկարենայ ուզածն ընել, ահռայի ցաւ կուենայ :

ՍՅԻ. Ը՛հ, ո՛հ, ս՛րբան կը ցաւի (Մեկուսի). Մարդ համոզելը էրիկ մարդերու տրուած է :

ԹԱ. (Մեկուսի) Խարդախութիւնը կանանց առաջին ձիրքն է : (Բարձր) Կրնայ ըլլալ որ . . . թէ որ մէկը քաակին մէջ ստակ ունենայ, ահռայի ցաւ կուենայ . ինչպէս որ հիմակուան երիտասարդներուն շատը այս ցաւէն չեն ազատիր . մի նայիր որ իրենց հագուածը կապուածը տեղն է, միշտ այս ցաւն ունին, երբեմն կը սաստկանայ, երբեմն կը մեղմանայ : Այս օրերս շատցեր է այս ցաւը, մեր դրացի կօշկակար Պ. Նիկողիմէոս Նաբուզողոն . . .

եանցին կինը տիկին... տիկին... անունը չեմ կըր-
նար մտաբերել... տիկին... տիկին... տիկին...
տիկին... տիկին... լեզուիս ծայրն է... տիկին...
տիկին... տիկին... տիկին... նորեղուկ անուն մ'է
... ինքը քառասուն տարեկան է ... տիկին ...
տիկին...

ԹՈՎ. Թող մնայ անունը...

ԹԱ. Վերջապէս անոր ալ ակռաները կը ցաւին,
և ինչպէս որ յայտնի է, աւելի երիտասարդներուն
ակռան կը ցաւի՝ քան թէ ծերերուն... ծերու թեան
ատեն խիստ քիչ անգամ կը պատահի... վասն զի...

ԹՈՎ. Ծերերը ակռայ չունին ըսել կուզէք:

ԹԱ. (Մեկուշի) Ինչպէս համոզելու է. (Բարձր)
Վասն զի մարդս քանի որ ծերանայ, ակռաներուն
զօրութիւնը կը պակսի, և այն ատեն փոխանակ
ցաւելու, հասուն տանձերու պէս կը թափթփին.
(Մեկուշի) Ժամանակն ալ կանցնի:

ՍՅԻ. (Մեկուշի) Պարահանդէսի ուշ պիտի մնանք:
(Բարձր) Է՞՞, Պ. ատամնարոյժ, կաղաչեմ որ ժամ
առաջ սա ցաւն անցընենք. վասն զի ժամը կանցնի.

ԹԱ. Ահա եկայ. քիչ մը յառաջ եկէք որպէս զի
ուշադրութեամբ նայիմ (Տեսարանիկ առաջը կուգան)
Բաց բերանդ (Յաճ առ Սօֆի) Ինչ ճամբայ բռնելու
է զինքը քնացնելու համար. (Մասուրները Սօֆիին
բերանը խօրած ակռաները ֆնկելով) Պատասխան
չես տար... ինչո՞ւ չես պատասխաներ... ինչ ճամ-
բայ բռնեմք... ինչո՞ւ չես խօսիր... (Սօֆի ձեռքովը
Թափառնիկուսին ձեռքը վար կը փաշի) Պատասխան
տուր:

ՍՖԻ. (Յած առ Թախառնիկոս) Պատրուակաւ մը
զինքը դուրս զրկէ, որ ընելիքնուս վրայ մտածենք:

ԹՈՎ. (Մօսէնայոյ) Ինչ^օ կը մըմբարք... ինչպէս է:

ԹԱ. Տակաւին յայտնի չէ. (Սօֆիիև այ կողմի
այսին մասնաընկերոյը գարնէրոյ) Կարծեմ թէ ցաւը...

ԹՈՎ. Կըսէր որ ճախ կողմը...

ԹԱ. Ես ալ անանկ պիտի ըսէի, (Չախ կողմի այ-
սին մօտեցնէրոյ ակասըը) Հնա... հոս...

ԹՈՎ. (Մեկուսի) Ճարտար մարդու կը նմանի...

(Բարձր) Ինչ կը նշանակեն ասոնք:

ԹԱ. Ասոնք շատ նշանակու թիւններ ունին, բա-
ւական է որ յաջողինք:

ՍՖԻ. Ալ չեմ կարող զիմանալ նի... ուն...

ԹԱ. (Յած առ Թոյմաս) Թէ որ կուզէք հրամանք-
նիդ քիչ մը դուրս ելէք, ակռան պիտի քաշեմ...
կրնայ ըլլալ որ վախնար... վասն զի ծերացած էք:

ԹՈՎ. (Յած առ Թախառնիկոս) Ինձի համար հոգ
չէ. դուն գործդ տես, ես իթթած ծերերէն չեմ:

ՍՖԻ. Ինչ կը խօսիք, ինձի ալ ըսէք. միթէ վը-
տանգաւոր է հիւանդութիւնս, յայտնապէս զրուցե-
ցէք:

ԹՈՎ. Տէր ողորմեա... կանանց առջև զազանի
խօսակցութիւն չըլլալու է, շուտով կասկածի կ'եր-
թան:

ՍՖԻ. Քիչ մը շուտ եղիք ուրեմն:

ԹԱ. Քիչնի ունիք, Պարոն Թովմաս:

ԹՈՎ. Ունինք, ունինք, երթամ բերեմ. կը
խմէք:

ԹԱ. Խմելու համար չէ... պէտք է արդէն:

ԹՈՎ . Շատ աղէկ , երթամ բերեմ . Կիրակոս . . .
 Կիրակոս . . . Կիրակոս . . . աս տղան ալ միշտ կը քը-
 նանայ . (Բարձրաձայն) Կիրակ . . .

ԿԻՐ . Ինչ կայ . . . ինչ կայ . . .

ԹՈՎ . Ետեւէս եկուր , մառանք իջնանք զինի բե-
 րենք :

ԿԻՐ . (Մեկուսի) Գիշեր ատեն զինի , աս զինե-
 մուն ալ ուրիշ ելաւ :

ԹՄ . Գաւաթ առնելու չմոռնաք , կուժ մ'ալ :

ԹՈՎ . Աղէկ , աղէկ . (Կ'երթան) :

ՏԵՍԻԼ Գ .

ԹՄՓԱՌՆԻԿՈՍ . ՍՅՅԻ .

ՍՅԻ . (Խնդալով) Խեղք սիրեմ :

ԹՄ . Ակոսող սիրեմ :

ՍՅԻ . Ինչ՞ վարպետութիւն բանեցնելու է որ կա-
 բենանք այս գիշեր պարահանդէս երթալ . զինքը
 պառկեցնել անհնարին է . ըովէս բաժնուիլ չուզէր :

ԹՄ . Գինի կը խմէ՞ :

ՍՅԻ . Կերակուրի ատեն միայն զաւաթ մը . . .

ԹՄ . Եթէ ստիպելու ըլլամ . . .

ՍՅԻ . Փորձէ . . . Կըսեն թէ այս գիշեր շատ բազ-
 մու թիւն պիտի ըլլայ պարահանդէսի մէջ , ուր էր թէ

մենք ալ կարող ըլլայինք այն բազմութեան մասնակցիլ, հագուստներս պատրաստած եմ :

ԹԱ. Հապա ինձի համար, ատամնաբոյժի մը շատ պատիւ չբերեր որ պարահանդէսի մէջ պարէ, ցատկըռտէ, պէտք է որ ես ալ ծպտեալ երթամ, որպէս զի ուզածիս պէս կարենամ զուարճանալ:

ՍՖԻ. Իմ մէկ շրջազգեստս կուտամ, կը հագնի՞ս :

ԹԱ. Ինչո՞ւ չէ :

ՍՖԻ. Հիմա առաջին գործերնիս պիտի ըլլայ, Պարոն Թովմասը վարպետութեամբ մը զինովցնել:

ԹԱ. Այդ գործը ինձի թող :

ՍՖԻ. Ինչո՞ւ այսչափ ուշացար :

ԹԱ. Տունը կնոջս հետ ձեծկոճեցայ. չէր ուզեր զիս թողուլ. ես ալ պատկեցուցի զինքը, ոտները կապեցի, տնէն դուրս ելայ. կրնաք զուշակել որ ձեր սիրոյն համար ըրի ասոնք... Ահ Սօֆի, շատ կը սիրեմ զքեզ, զիշերուան հագուստէս ամէլի կը սիրեմ, ինչ օգուտ որ դուն չես ճանչեր իմ արժէքս :

ՍՖԻ. Ես չեմ ճանչեր, կը սխալիք Պարոն Թափառնիկոս, հոգոյս պէս կը սիրեմ զքեզ. (Յասկրոսեղով) պարահանդէսի մէջ...

ՏԵՍԻՆ Գ.

ՆՈՅՆՔ Եւ ԹՈՎՄԱՍ շիշ մը, կոնք մը եւ գաւարներ բերելով.

ԹՈՎ. Աս ինչ պիտի ըլլայ. տիկինը կը պարէ :

ԹԱ. Ես ճրամայեցի որ քիչ մը ցատկոտէ, որ-

պէս զի . . . այսինքն . . . ըստորում . . . որովհետև . . .
իրբ թէ . . . արիւնը տաքնայ և ցաւը . . . պաղի :

ԹՈՎ. Կարծեցի որ ցաւէն խելքը փախուց . . . ցատկը
առտէ, տիկին ցատկառէ որովհետև բժիշկը այնպէս
կը պատուիրէ :

ՍՖԻ. Յոգնեցայ :

ԹԱ. Բաւ է, ալ մի ցատկեր, որ վերջն ալ պիտի
ցատկառես (Մեկուսի) պարահանդէսի մէջ :

ԹՈՎ. Ահա գինին, բաժակը և կոնքը բերի :

ԹԱ. Տուէք . . . տիկինին պիտի տամ որ բերանը
լուայ (Լեցնեցով) Բերաննիդ լուացէք տիկին . . . այս-
ինքն աղաւանդ :

ԹՈՎ. Քինի կը հրամամէք :

ԹԱ. Թէ որ հրամաննիդ ալ խմէք չեմ մերժեր,
Բժիշկները ընդհանրապէս գինին կը սիրեն, ինչ-
պէս որ գեղջուկները սխտորը. չեմ խմեր ըսելու
ալ ըլլամ, անհաւատալի պիտի թուի ձեզի, բայց
սակի ախորժակով կը տնկեմ երբ ընկեր մը ունե-
նամ զիմացս, մանաւանդ թէ ձեզի պէս մտերիմ բա-
րեկամ մը :

ԹՈՎ. (Լեցնեցով) Տնկեցէք ուրեմն :

ԹԱ. Շնորհակալ եմ . . . կենդանութիւն :

ԹՈՎ. Անուշ անմահութիւն :

ԹԱ. (Լեցնեցով) Հրամայեցէք բարեկամ :

ԹՈՎ. (Առնեցով) Կենդանութիւն :

ԹԱ. Անուշ ըլլայ (Առ Սոլի). Ցաւդ ինչպէս է
տիկին :

ՍՖԻ. Հարիւրին տասը պակաս :

ԹԱ. Ըսել է որ գինին օգտեց. առ ըիչ մ'ալ

լուա ակռաներդ (Լեցնեղոյ) որպէս զի աս անտանելի ցաւէն խաւըսիք, (Սօֆի կ'առնե կը շուայ) Ուրկէ՞ք բերել կուտաք այս զինին Պարոն թովմաս:

ԹՈՎ. Աղբխանուպօլսէն, թէպէտ ե զինեմոլ մէկը չեմ, բայց կուզեմ որ խմելիքս ըլլայ ընտիր զինի:

ԹԱ. Պատուական զինի... ազնիւ զինի... ազնոր զինի... ախոսս որ ես ասանկ զինի չկրցի ձեռք բերել... կ'ափսոսամ... (Նարխոմիք ցն չի):

ԹՈՎ. Խմեցէք Պարոն, կաղաչեմ մի քաշուիք:

ԹԱ. Եթէ ընդունիք ինձի հետ նետելու, այն ատեն կը խմեմ (Լեցնեղոյ) հրամմեցէք:

ԹՈՎ. Ի կենդանութիւն մեր տիկնոջ:

ԹԱ. Անուշ հրամմեցիք, (Լեցնեղոյ) Ի կենդանութիւն ամենուն. (Կը խըմե) Տիկին ինչպէս էք:

ՍՖԻ. Հարիւրին քսան:

ԹՈՎ. Ըսել է որ ցաւն սկսաւ պակսիլ, օրհնեալ ըլլաս Պարոն (Թախանիկոս, որ այս զիշեր մեզի հանգստութիւն պարգևեցիր, անդադար քալեն այն ոտքը որ զքեզ մեր տունը բերին. վերջապէս ինչ որ ըսեմ քեզի համար քիչ է, թէ որ աս զիշեր զալու չըլլայիր մինչև առտու բուի պէս պիտի սպասեինք. մեծապէս շնորհակալ ենք քենէ Պարոն Թախանիկոս. հրամմեցէք):

ԹԱ. (Կը խըմե) Որովհետեւ զինին մարդու ոյժու զօրութիւն կը տայ, ձերերու համար ալ առողջարար ըմպելիք մը կրնայ սեպուիլ. ես ձեր տեղն ըլլայի երկու երեք տակառ աւելի բերել կը տայի այս զինիէն:

ՍՖԻ. Արդէն բաւական ունիմք :

ԹՍ. Ուրախ ըբր Պարոն Թովմաս, տիկինն ալ մեր խօսակցութեան մասնակից եղաւ. օն ուրեմն խմենք, կը յուսամ որ այս եղանակաւ ցաւն բոլորովին պիտի անցնի :

ԹՈՎ. Ինձի համար բաւ է բաւ... ձեր խօսքն ալ չեմ կրնար կտարել, կընդունիմ. կենդանութիւն :

ԹՍ. Անուշ :

ԹՈՎ. (Բիչ մը գիւնոյցած) Ընտիր զինի... մա տիկին բերանդ լուս... ինչպէս ես :

ՍՖԻ. Փառք Աստուծոյ, հանգիստ եմ, հարիւրին երեսուն (Մեկուսի) Գինովութեան սանդուղիին առաջին աստիճանին ստոր կոխեց :

ԹՈՎ. Դուք չէք խմեր... զիս մինակ թողուլ ամօթ... ամօթ :

ԹՍ. Շնորհակալ եմ (Կը խմէ) :

ԹՈՎ. (Աւելի գիւնոյցած) Ընտիր զինի... և ինչպէս ալ շուտով ցաւն անցուց... (Կը խմէ) Աստղութիւն տիկին... ցաւ ինչպէս է :

ՍՖԻ. Հարիւրին քսուստուն :

ԹՈՎ. Աղէկ զինի... երկու գործ կը տեսնէ, առաջին որ տիկինին ցաւն անցուց երկրորդը իմ սիրտս կը նորոգէ... կարծեմ փակագիծի մէջ առնուած, (Լեցնելով) Գինի (Կ'երգէ) :

Ով դու զինի կեցասու

Որ ոյժ կուսաւ ծերերու,

Կրնամ մերժել ես զեզ

Մինչդեռ կինս դու բուժեա.

Բոլոր աշխարհի քեզ կը պատէ, գինի,

Քանզի ծերերը կընես պատանի:

Օն ուրեմն խմենք զուարճանանք... Տիկին զուն
ալ լուս... բերանդ (Կը խմե) ցուն ինչպէս է:

ՍՖԻ. Հարիւրին յիսուն (Մեկուսի) Ուշ պիտի մը-
նանք...

ԹՈՎ. Ամէն բաժկին տասը կը պակսի ցարը...

ԹԱ. Այո, ես ալ ան կը դիտեմ:

ԹՈՎ. Ինձի այնպէս կուգայ որ ցատկուտելն ալ ա-
զէկ եկաւ, հրաման տուէք քիչ մ'ալ ցատկուտէ:

ԹԱ. Թող ցատկուտէ:

ԹՈՎ. Ես ալ փափարք ունիմ, ե'լ տիկին պարենք
(Կ'եղնե, կ'իյնայ) Ո՛հ զլուսազարձաւ:

ԹԱ. Անկողինդ պառկէ Պարոն Թովմաս:

ԹՈՎ. Լեցուր, լեցուր (Կը խմե) Ինչ անուշ...
(Կ'երգե):

Որքան ազդու է այս գինի

Ինչպէս ալ շուտ կը բուժէ,

Ամէն բաժկին ցուն կը պակսի

Մեր սիկինն ալ շատ հանգիստ է:

Բոլոր աշխարհի քեզ կը պատէ, գինի

Քանզի ծերերը կընես պատանի:

Տիկինը հարիւրին յիսուն, աղէկ է... անդին կը
մնայ յիսուն... բան մը չէ... լեցուր խմենք հի-

մա ի յիշատակ Նոյ նահապետի որ այդի տնկելով
գինովներու սրբազլուխ հանդիսացաւ լեցնուր խը-
մենք. իր անունը անմահացնելու համար անպազար
տնկենք :

ԹԱ. (Գիևովցած) Ժամանակ չկորսնցնենք (կը
խալե) :

ԹՈՎ. (Խալելով) Զարմանալի են քու հրամաններդ ով
գինի (Կ'երգե)

Գինի , գինի , դու վարդերես ,

Բանասեղծից կը հրամայես .

Մերերուն սիբս կը նորոգես ,

Դերասանաց վարպետն դուն չէս :

Եւ ով կրնայ քեզ մերժել , ով գինի

Մինչդեռ ծերերը կընես պատանի (Կը խալե) :

ՍՅԻ. Ես ալ ձեռքովս մէյմէկ հատ հրամցնեմ որ
ամուսինս սանդղղխին վերի աստիճանը ելնէ , ա-
ռէք սիրելի ամուսինս :

ԹՈՎ. Ձեռքդ սիրեմ , տուր (Կը խալե , կ'սկսի արո-
ռիկ վրայ փնակայ) :

ՍՅԻ. Հրամմեցէք Պ. Թափառնիկոյ :

ԹԱ. Շնորհակալ եմ (Կը խալե) Է՞՛ ընկեր մի քնա-
նար :

ԹՈՎ. Ես^օ . . . ես^օ . . . չեմ քնանար :

ԹԱ. (Գիևով) Մի՛ քնանար , (Բաժակ ի ձեռին
կ'երգե) :

Ուրախութիւն պարգեւող

Տխրութիւնը փարասող

Բժիշկ բոլոր ցաւերու

Դու չէս գիցի կենսասու: (Կը խալէ):

ՍՅՆ. Ձինքը անկողնոյն մէջ պառկեցուր, ես ալ
երթամ հագուստները բերելու որ երթանք. (Կ'եր-
թայ):

ԹԱ. Պարոն Թովմաս... ը222... Թովմաս, է հը
եղբայր, ընկեր, ել պառկէ:

ԹՈՎ. (Բնոյ մեջեկն) Ինչ^օ կայ:

ԹԱ. Անկողինդ մախր:

ԹՈՎ. (Արթննայով) Ձեռքէս բռնէ... չեմ կրնար
ելնել... ոտներս կը ցաւին:

ԹԱ. Մի վախնար ես հոս եմ, ձեռքէդ կը բռնեմ,
քալէ (Երկուքն ալ զոտերով արոտի ֆով կիյնան):

ԹՈՎ. Աթոռը... աթոռը...

ԹԱ. (Պառկած սեղեկն) Աթոռը վերուցիր:

ԹՈՎ. Ես... որ... ինքզինքս... չեմ... կրնար
վերցնել... աթոռը... պիտի վերցնեմ. էօ... էօ...
(Փոխել ջանայով):

ԹԱ. (Պառկած) Մեզի ասանկ զետնի վրայ պառ-
կեցնող, դուն չէս գիցի կենսատու: Պ. Թովմաս.

ԹՈՎ. (Պառկած) Ինչ^օ է...

ԹԱ. Ինչպէս էք... հանգիստ էք:

ԹՈՎ. (Ելնել ջանայով) Ձես օգներ ինձի բարեկամ:

ԹԱ. (Կաւնաց կաւնաց ելնելով) Ես հոս եմ, անհոգ
եղիր, եկուր անկողինդ պառկեցնեմ քեզի (Թովմաս)

սին ձեռքեն կը բռնեք որ փաշեն . երկուքը մեկեն կիջնան) Ե՛՛ ինչո՞ւ կը սլառկիս բարեկամ :

ԹՈՎ. Ոսկորներս կը ցաւին . . . ով դու գինի կենսատու . ձերերը կընես սլատանի :

ԹԱ. Մերերը կընես անդամալոյժ . . . Թրա թա թա թրա թա թա թի թա թա (կարնաց կարնաց կ'ելեկեկե՛՛ (կը բռնեք Թովմասին ձեռքեն) Կամաց կամաց քալենք : (Գլխարկով) Աս կողմէն (Գլխարկով) ան կողմէն (Իյնարով) մէջտեղէն . . . (Թախտուհիկոս անանկ ուժով մը կը հեռե Թովմասը որ զանիկայ անկողնոյ մէջ կը ձգե ինքն ալ կը նստի վրայ կիյնայ) Ա՛՛ . . .

ԹՈՎ. Ես եկայ :

ԹԱ. (Ելնելով) Պատկէ վրա դժած կեմ . . . ապրիս . . . հա . . . ստանկ . քնացիր . . . ես ալ գինի մը խմեմ , թրա թի թա թա :

ՏԵՍԻՒ Ե .

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ ՍՕՖԻ , ԹՈՎՄԱՍ Ի քուն

ՍՖԻ. (Շրջագգեւս մը ու գլխարկ մը բերելով) հագուստներդ բերի . . . սպարաստուէ , աս ինչ է , դո՞ւն ալ գինովցար :

ԹԱ. Ես . . . Ես . . . դուն . . . դուն գինով , սպարահանդէս , հա հա հա . կնկան հագուստով , ծաղրելի քան , հա հա հա :

ՍՖԻ. Խելքդ զուլսդ ժողովէ , տես թէ որու տունն էս . . . շխտակ քալէ :

ԹՍ. Ես ծնւն կը քալեմ, (Բայլ առ քայլ) տես՝ մէկ
 ... երկու ... երեք ... (Կ'իշնայ կ'ելնե) երեք ... չորս
 ... (Կ'իշնայ կ'ելնե) չորս ... հինգ վեց ... (Կ'իշնայ
 կ'ելնե) վեց ... եօթն ... տեսնիր ... համբեցիր, բեր
 հագնիմ. (Վրայի հագուուսը կը հսկե միշտ ասդիս ան-
 դիւն զտրեղով) անցնւր զլիսէս ... անցնւր (Սօփի կան-
 ցրեկ գիսեկ շրջագգեսը) Կոնկէ, կոնկէ, ես զինով,
 հն հն հն, զլիսարկը բեր ... օրիորդ Թափառնիկոս,
 ես ... զինիմը տուր, թի բա բա թի թա թա :

ՍՖԻ Աս ինչ փորձանքի հանդիպեցայ :

ԹՍ. (Բարձրաձայն) Փորձանք :

ՍՖԻ. Մի պօռար ծառան կարթննայ :

ԹՍ. (Հագայով) Ես ...

ՍՖԻ. Մի հագար ծառան պիտի արթննայ :

ԹՍ. Ես չհագամ, ինչո՞ւ (Գրպակեկ քաշկիւնակը
 հսկած ժաւակակը երկու նախակ կ'իշնան գրպակեկ)
 Թաշկիւնակս. (Կը հագայ) :

ՍՖԻ. Մի հագար կըսեմ :

ԹՍ. (Թաշկիւնակովը բերանը կը սրբե) Երթանք
 տիկին ...

ՍՖԻ Աս վիճակին մէջ ինչպէս պիտի երթաս պա-
 րահանդէս ... տունդ գնա պառկէ ...

ԹՍ. Տուն երթամ ... տուն երթամ, արթնցը-
 նեմ ամուսինդ ... (Դեպ ի անկողին ետքայ կուզե) :

ՍՖԻ. (Արգիշեղով) Կը պաղատիմ :

ԹՍ. Համբերէ, գաւաթ մ'ալ խմեմ, երթանք,
 (Լեցնելով) Գուն ալ կուզէս զինի, սատանայ բեզի ...
 խարբերայ ... էրիկդ կը խարբես հէ', պօռամ, (Բարձ-
 րաձայն) Թովմաս եղբայր, եղբայր Թովմաս :

ԹՈՎ. (Բնոյ մեջին) Ինչ կայ...

ԹԱ. Բան չկայ, ձեռքդ տուր տիկին Սօֆի...
 ձեռքդ համբուրեմ, եկուր իմ աօսօշիկս... (Կոստրս-
 ուեյով կնկան ձայնով) Ինտոր էք տիկին Սօֆի...
 շաբաթը քանի անգամ լաթ կը վլար... Մըմծար
 տուտու, քնտոր ես քա չըսես... քա վույ... ան-
 ցած օրը փողոցը տեսայ, քա մեկա որքան աւրուեր
 է խեղճը, քա չըսես որ էրիկը զէշ մարդ է եղեր...
 շատ պան շիտակը աիժարս կընաց... անանկ լուանի
 պէս աղւորիկ կնիկը... կապիկի դարձեր է, քա վույ
 ... քա վույ... քա վույ...

ՍՅԻ. Տէր ոգորմեա, տէր ոգորմեա.

ԵԱ. Քեզի հետ մէյմէկ զինի խմենք.

ՍՅԻ. Կ'օգտէ, ալ մի խմեր, աւելի կը զինովնաս...
 ես գիտէի որ...

ԹԱ. (Խմելով) Ուզիդ ճամբան գտեր է, շիտակ
 վար կ'երթայ:

ՍՅԻ. Հազար անգամ զգչայի քեզ կանչել տալուս:

ԹԱ. Եթէ այդպէս է...

ՍՅԻ. (Ի ծուկն իջանելով) Պիտի իմացուի, վերջը
 երկու քնիս ալ խայտառակ պիտի ըլլանք, կայնէ
 դիմակդ դնեմ (Կը դնէ) ես ալ ծածկեմ երեսս (Ի ինակը
 կսկսէ) Քալէ:

ԹԱ. Թեա մտիր (Կը նստի) ժամը քանի է:

ՍՅԻ. Կէս զիշեր է, ել. (Իրակն հագալու ձայն
 մը կը լսուի) Կիրակոսը արթնցեր է, մամը մարէ,
 մամը:

ԹԱ. Բուժք...

ՍՅԻ. Շուճչդ կարի:

ԹԱ. Ուր՞ես Սօֆի:

ՍՖԻ. Պատանձէ, բույզ եմ:

ԹԱ. Ձեռքդ երկնցուր:

ՍՖԻ. Բռնէ:

ԹԱ. (Բռնելով) Աս բու ձեռքդ է... հիմա բանս
բուսաւ, ա՛ր որքան փափուկ... ինչքան փոքր...
(Կը խածնէ):

ՍՖԻ. Ու՛Ֆֆ, ինչո՞ւ կը խածնես:

ԹԱ. Փափուկ է փափուկ:

ՏԵՍԻՒ Զ.

ՆՈՅՆԻ ԱՆ ԿԻՐԱԿՈՍ

ԿԻՐ. Մտ՛ը մարեր են:

ՍՖԻ (Ցած առ Թափառնիկու) Ձայն մի հաներ Կի-
րակոսն է. ետեէս եկո՛ւր:

ԹԱ. (Ցած) Քամ. (Միջին դռնէն կեղնէն):

ԿԻՐ. Աս ինչ ազմուկ էր, արդեօք տիկի՛նին փոր-
ձանք մը պատահեցաւ. խեղճը այսօր այնչափ չար-
չարուեցաւ. բայց լսեցի ձայն մը՝ որ կըսէր, « Ուր՞
ես Սօֆի » մեռած ըլլալու է, ով Աստուած, ինչպէս
կը դողամ, ճրագն ալ մարեր են, սեղանը ո՞ր կողմն է
արդեօք... հայ, պզտիկ դուռը զոցուեցաւ... տնէն
դուրս կեղնէն... տան մէջ գո՞ղ կար... ահա մեծ դու-
ռը կը զարնեն... ճրագը ո՞ւր է... ես ալ իշու պէտ-
քնացեր էմ, թո՞ղ սպասեն քիչ մը... այս գիշեր բան

մը կը դառնայ բայց չկրցի իմանալ: (Դուռը կը զարնեց) Մինչեւ որ ճրագը չլառեմ չսլիտի բանամ (Սեղանը բնտեղով) ա՛հա վեր կելինեն... օգնութիւն , օգնութիւն... (Ճրագը կը վառե):

ՏԵՍԻԼ Է.

ԹՈՎՄԱՍ ի քուռ, ԿԻՐՍԿՈՍ, ՄԱՐԹՍ, ՄԱՐԳԱՐ, ՆԻԿՕ.

ՄՐԹ. (Ծեծելով Նիկոն) Թշուառական , առջի զիշերուրնէ ի վեր մեզի փողոցէ փողոց պատացուցիր , տունը գիտեմ ըսելով:

ՆԻԿ. Տիկին , զիշեր ատեն :

ՄՐԹ. Լա՛է անսլիտան. (Կը հրե Նիկոն , որևոր կ'իյնայ լայսերը կը կոտորի) :

ԿԻՐ. Ո՞վ էք դուք և ինչ՞ կուզէք :

ՄՐԹ. Տիկին Սօֆին կուզեմ տեսնել , խօսելիք ունիմ հետը :

ԿԻՐ. Անիկայ որ անհանգիստ է , զիշերը չկրնար ձեզի հետ խօսիլ , խեղճը այսօր ակռայի ցաւէն քիչ մնաց որ սլիտի մեռնէր :

ՄՐԹ. Ստիպողական գործ մ'է որ զիս զիշեր ատեն փողոցնէ բու վրայ նետեց , ինչ որ ալ ըլլայ կը պարտաւորիք իրեն իմաց տալ որ գայ... անկողնոյ մէջ քնացողը ո՞վ է :

ԿԻՐ. Տիկինին ամուսինն է :

ՄԲԹ. Աւելի աղէկ . ամէնքնիդ ալ դուրս ելէք ,
իրեն հետ առանձին մնալ հուզեմ :

ԿԻՐ. Բայց Պարոն . . .

ՄԲԹ. Պարոնը ինչ է . մի վախնար տէրդ չեմ ու
տեր . դուրս ելէք կըսեմ :

ԿԻՐ. Բայց . . .

ՄԲԳ. Առանձին թողունք զիրենք . . . (Կ' երթան) :

ՏԵՍԻՆ Ը .

ՄԱՐԹԱ . ԹՈՎՄԱՍ Ի քուն

ՄԲԹ. (Անկողնիս վօտեալով) Պարոն . . . ըշշշ . . .

Պարոն . . . մեռելի պէս կը քնանայ . . . արթնցիր

ԹՈՎ . Էօ . . . էօ . . .

ՄԲԹ. Սուրբ Աստուածածին . . . բերանը . զինի
տակառ կը հօտի . (Հրելով) Է՛՛ . . . արթնցիր . . .

ԹՈՎ . Էօ . . . էօ . . .

ՄԲԹ. Աչքերդ բաց :

ԹՈՎ . (Բնոյ վեջեկ) Դ՞նէն ես Սօֆի :

ՄԲԹ. Ես եմ , Սօֆի , արթնցիր :

ԹՈՎ . Կը ցատկոտեմ :

ՄԲԹ. Ցատկոտեն ինչ պիտի ըլլայ . . . ա՛յ , կը
ցատկոտեմ :

ԹՈՎ . Ցաւ ինչպէս եղաւ :

ՄԲԹ. Ցաւ . . . ցաւ . . . աղէկ է :

ԹՈՎ . Հարիւրին քան ի :

ՄԲԹ. Աս ինչ հարցումներ ե՛ն. . . երկու հարիւր Պարոն , երկու հարիւր :

ԹՈՎ. Գինի , գինի , ուժ կուտասս ձերերու . . .
կրնամ ատել ես զքեզ . . .

ՄԲԹ. Արթնցիր Պարոն , արթնցիր :

ԹՈՎ. Թափառնիկոսը զնամց :

ՄԲԹ. Հիմա գործը սառւ գուեցաւ . . . (Բարձրաձայն)
Պարոն , պիտի արթննամ ,

ԹՈՎ. (Անկողնոյ մեջ նստելով) Ինչ՞ է , ինչ կու-
զես Սօֆի :

ՄԲԹ. Սրբէ աչքդ , տէս թէ ո՞վ է զիմացինդ :

ԹՈՎ. Դու ո՞վ ես :

ՄԲԹ. Ով ըլլալս հիմա կիմանաք . դուն իբրև մտրդ
կը պտտիս աշխարհի վրայ :

ԹՈՎ. Ինչ ըսել կուզես :

ՄԲԹ. Ըսել կուզեմ թէ , պատիւդ չէս պահեր , ա-
սանկ . . .

ԹՈՎ. Ինչ կըլլայ եղեր , ամէն մարդ գինով կըլ-
լայ . տասը տարին անգամ մը գինով ըլլալովս ան-
պատիւներու կամրզը կը դասես զիս :

ՄԲԹ. Թէ որ ես դուն ըլլայի , խաւի մեռնիլ պի-
տի փափաքէի քան թէ ապրիլ :

ԹՈՎ. Ատամնարոյժը հոս էր . . . ինձի ալ ստիպեց
որ խմեմ , թէ որ դուն ես ըլլայիր չպիտի խմէիր :

ՄԲԹ. Առանց կարմրելու դեռ կը շարունակես այդ
խօսքերը . ախոս Պարոն . յիրաւի քեզ ճանչնալու
պատիւն չունիմ , բայց կ'ախոսսամ , կը խղճամ
վրայ :

ԹՈՎ. Ուրիշ անգամուն չպիտի խմեմ :

ՄԲԹ. Քու կինդ կը մատնէ քեզ և դուն չես իմանար. քու կինդ ուրիշ մէկը կը սիրէ. քու կինդ ըզքեզ իշու տեղ դրած է. հասկցար, քու կինդ ան տեսակ կնիկներէն է որոնց պատմութիւնները շատ են. ահանջներդ բաց թէ որ ուզես մէկ հատը պատմեմ:

ԹՈՎ. Ինչէր կը լսեմ. . սուտ են ըսածներդ. պատմէ տեսնեմ:

ՄԲԹ. Կնկան մէկը առաւօտուն կանուխ ելած շուկան գացած ժամանակը, բարեկամուհիներէն մէկուն կը հանդիպի, որն որ կը հարցնէ թէ ո՞ւր կերթայ. կնիկը պատասխան կուտայ թէ էշ մը ծախու առնելու կերթայ, որպէս զի տունը փատ ածուխ կրէ. խելքդ սիրեմ կըսէ բարեկամուհին աճապարանօք, փոխանակ էշ ծախու առնելու, էրիկ մը առ՝ փատ ալ կը բերէ ածուխ ալ. ևս անանկ ըրի՛ նիմա, շատ հանգիստ եմ ըսելով բարեկամուհին կը հեռանայ և կնիկը տունը կը դառնայ, ու երեք ամսէն կը կարգուի, իր բարեկամուհոյն խրատին անսալով: Ահա Պարոն, քու կինդ ալ աս տեսակէն է: Քեզի խարդախութեամբ զինուղուցեր է, և ինքը նիմա կըբօսնու.

ԹՈՎ. Ահաան կը ցաւէր. և քու ըսածներդ նիմանովին զբարատութիւն են, ատամնաբոյժը հոս էր:

ՄԲԹ. Ահա նոյն իսկ ատամնաբոյժը կը սիրէ.

ԹՈՎ. (Բարկուրեաւթ) Ատամնաբոյժը կը սիրէ կե-

ՏԵՍԻՍ Թ.

ՆՈՅՆԻ, ՄԱՐԳԱՐ. ԿԻՐԱԿՈՍ, ՆԻԿՕ.

ՄԲԹ. Ահա նոյն իսկ ատամնաբոյժը կը սիրէ.

ԹՈՎ. (Բարկուրեաւթ) Ատամնաբոյժը կը սիրէ կե-

սէք . Բողոքովին անհիմն խօսք . թէ որ մէկն ըսելու
ըլլար որ ես ատամնաբոյժի կինը կը սիրեմ . քո ը-
սածէդ աւելի հաւանական էր :

ՄԲԹ. Պարոն զիտէք թէ , առանց ստուգելու կըն-
կան մը պատիւն արատելը ինչ է :

ԹՈՎ. Ես ինքն ես , եկեղեցական եղած ժամա-
նակս հետը սիրահարու թիւն կընէի . անունն ալ Մար-
թա էր , նախանձոտ բնաւորութիւն մը ունէր .

ՄԲԹ. (Մեկուսի) Ով Աստուած իմ , ինչ կը լսեմ :

ՄԲԳ. (Յած առ Մարթա) Տիկին պատիւդ պահելու
չաշխատիմ :

ԹՈՎ. Ինչու լսեցիր , Պարոն :

ՄԲԹ. Վասն զի յանիրաւի կը զրպարտէք :

ԹՈՎ. Ես , յանիրաւի , աղէկ կը ճանչեմ այն Մար-
թան , իր երեսը համբոյրներու արտ մ էր , որուն
վրայ եթէ համբոյրու ըլլամ , հազարի չափ սերմա-
նած եմ : Դուք չէք ճանչեր զանիկայ . զէմբէն պար-
կեշտ կնիկ մը կերելի : Իրեն հետ շատ մը սիրահա-
րական նամակներ առած տուած եմ :

ՄԲԹ. (Մեկուսի) Ով կրնայ ըլլալ :

ՄԲԳ. (Յած առ Մարթա) Տիկին որո՞ւ է ըսածը :

ՄԲԹ. (Յած առ Մարգար) Սուտ է , սուտ է :

ԹՈՎ. Կիրակոս , գնա նայէ տիկինը միւս սենեակն
է . (Կիրակոս կ'երթայ) Ձէք խօսիր , կարծեմ ըրած
ամբաստանութիւններու համար զղջացար . իմ կինս
պարսաւել , ո՞վ զիտէ խեղճը , միւս սենեակին մէջ
կը բնանայ թէ արթուն է :

ՄԲԳ. (Գեհեհեհեհ նամակները առնելով վրան կը կար-
դայ) Այս նամակը հոս ինչ գործ ունի :

ԹՈՎ. Գրպանէս ինկած ըլլալու են... հասցէն կարդա տեսնենք :

ՄՐԳ. Չէ Պարոն, Թափառնիկոսի գրպանէն ինկած ըլլալու է. հասցէն անոր համար է :

ՄԻԹ. Կարդա տեսնենք պարունակութիւնը :

ՄՐԳ. Թերեւս գաղտնիք մը ըլլայ :

ՄԻԹ. Կարդա :

ՄՐԳ. (Կը կարդայ) .

« Պատիւ ունիմ ներկայիւս ֆեզի իմացելու որ, այս գիշեր մեր տունը գաս, Պարոն Թովմասը խաբէնք :

ԹՈՎ. Պարոն Թովմասը խաբէնք, շարունակէ...

ՄՐԳ. (Կարքայով) .

« Ու պարահանդէս երբանք, շատ բազմութիւն պիտի ըլլայ հոն. կաղաչեմ մ'ուշանար, շատ կը սիրեմ զեզ. գալուդ պէս գնդասեղով մարմինէդ արիւն պիտի հանեմ.

ՍօՖի .

ԿԻՐ. (Մտնելով) Տիկինը չկրցի գտնալ :

ՄԻԹ. Ճշմարիտ են ըսածներս թէ գրպարտութիւն :

ԹՈՎ. Ինչ կը լսեմ :

ՄՐԳ. (Միւս նախակին հասցեն կարդայով) .

Առ օրիորդ երանեակ Թափառնիկոսեանց . »

Ասիկա կարդալու ազատութիւն ունիմ. (Նախակը կը քանայ կը կարդայ) :

« Այս օրուան դէպքը զիս քոլորովին վիասեցուց, այնպէս որ ասկէ վերջը ձեր տանը մէջ ոսֆ չեմ կր-

նար կոխել, պատմութիւնը երկար է, առանձին գր-
նուած ժամանակնիս կը պատմեմ քեզի . . . հօրդ աստի-
նարութիւնը : Ուրիշ տեղ մը որոշեմք տեսնուելու
համար, քեզի համար հալ ու մաշ կրկամ, շատ կը
սիրեմ զքեզ . լեզուովս չեմ կրնար բացատրել, ուր
մնաց թէ գրչով, նամակիս պատասխանը գրելու որ
ըլլաս, տեղ մը իմացուր ինձի որ հոն երթամ :

Հասցէն այսպէս ըլլայ .

Առ Յ. Գ. Կ. ԼԵՆԻՆ Սիրահարեալներու փո-
ղոց, թիւ 20.

Տարիածուդ
ԼԵՆԻՆՆԵՐ

Աս ինչ պիտի ըլլայ :

ՄԲԹ. Ազգիկն աւ զլուխ վերուցեր է :

ՄԲԳ. Լեռնը կը սիրէ :

ԹՈՎ. Թափառնիկոսը կը սիրէ . . . և ճիմա սր-
բահանգէս են . . . Ես անձամբ պիտի երթամ
զիրէնք զտնելու ու բանտարկելու : Ներեցէք Պարոն,
անզիտարար կարելի է որ . ձեզ վշտացուցի . ա-
մէն բանի տեղեկացայ . . . ճիմա բոլոր պա-
րահանգաներու պիտի մտնեմ, և Էր որ զտնեմ,
խայտառակեմ պիտի զիրենք, բայց այս հազու-
տով պիտի նանչնան զիս, կերպարանքս փոխեմ
. . . Կիրակոս վարի յարկը խոցին մէջ ճին
պատուած վարտիք մը կայ, առ բեր . տասը տա-
րիէ ի վեր է որ հոն կախուած մնացեր է . (Կիրակոս
կ'երթայ) վրաս ալ ճին հազուատ մը ասնեմ . թշուա-
ռականը այս հասակիս մէջ ինձի թշնամու թիւնն ընէ :

ՄԲԹ. Ես ալ պիտի ընկերանամ ձեզի :

ԹՈՂ. Շատ աղէկ Պ. գիմակ ալ պէտք է. երթամ
երկու երեք հատ գիմակ բերեմ. և երթամ : (Կ'երթայ :

ՏԵՍԻՒԼ. Ժ.

ՄԱՐԹԱ, ՄԱՐԳԱՐ, ՆԻԿՕ.

ՄԲԳ. Տիկին ձեր աղջիկը, բացակայու թևանս մի-
ջոցին, իրեն սիրական մը գտած է. շատ ուրախ
եմ որ չկարգուած իմացայ, ուստի այս վայրկենէ
տուած նշանս ետ կ'առնեմ :

ՄԲԹ. Իրաւացի են քու խօսքերդ Պ. Մարգար,
բայց զուն ուշիմ ու հանճարեղ պատանի մ'ես,
կրնաս զիւրութեամբ զուշակել որ աղջիկ մը շատ
անգամ նոր հագուստներու կը խաբուի : Այս Անոնը
որ Փարիզէն նոր դարձած է, ամէն օր նոր նոր հա-
գուստներ կը հագնի, աղջիկս ալ . . . ինչ ընէ խեղճը . . .

ՄԲԳ. Արովհետև ձեր դուստրը Անոնի կամ իր հա-
գուստներուն սիրահարեալ է. պէտք է որ հետը
կարգուի. ես նորասէր չեմ, մանաւանդ թէ հնասէր
եմ, հին լաթերով կը սլտտիմ :

ՄԲԹ. Ինչպէս կրնայ ըլլալ որ Անոնի հետ ամուս-
նանայ, քանի որ ձեզի հետ նշանուած է :

ՄԲԳ. Է՞, ինչ կըլլայ նշանած ըլլալովը, կարծես
թէ նշանը կարող է երկու իրարմէ պաղ սրտեր տաը-
ցընել. և միթէ պսակը կրնայ երկու գլուխ մէկմէկու
դպցնել, երբ անոնք իրարու դարձ ատեննին բուն
զօրութեամբ կը մղուին. Տիկին, աղջիկները մէյմէկ
մագնիս են որ մէկ ծայրէն կը քաշեն միւսէն կը վա-
նեն, երիտասարդներն ալ ասեղ. ասեղին մէկ ծայրը
կը մօտեցնեն մագնիսին. տեսար որ քաշեց, կը քա-
շէ յաւիտեան. իսկ թէ որ վանէ միշտ կը վանէ,
մենք ալ, ինչպէս որ կերևի, վանիչ կողմն հանդի-

պած ենք : Ինչո՞ւ ի զուր աշխատիլ որ սիրուիմ :

ՄԲԹ. Առաջին անգամին համար , ամէն յանցանք ներելի են :

ՄԲԳ. Տիկին , ձեր ազջիկը , ամէն օր կը գործէ եզեր այս յանցանքը . այսօր իր քովը գտնուեցայ , խօսիլ ուզեցի հետը . անիկայ չէ թէ միայն խօսընրուս ահանջ չէր կախեր , այլ նաև կարծես թէ երեսս տեսնել չէր ուզեր :

ՏԵՍԻՒԼ ԺԱ.

ՆՈՅՆԲ, ԹՈՒՂՄՍՍ պատուած զգետով :

ԹՈՒՂ. Առէք դիմակնիդ , և սա նամակը տուէք որ զրպանս դնեմ , (Կիրակոս կոսայ) դէմքս ալ զոցեմ .

ՄԲԹ. (Մեկուսի) Պէտք էր որ յայտնէի զինքս սա մարդուն (Դիմակով կը ծածկե երեսը) :

ԹՈՒՂ. (Առ Նիկօ) Առ քեզի , արջու դէմք մը :

ՆԻԿ. Տուէք , տուէք , (Դիմակը կը դնէ)

ԹՈՒՂ. Սա նամակը պահեմ . (Աջ կողմի գրպանը կը դնէ , միւս ձեռքովն աչ ձախ կողմի գրպանը խառնելով նախակ մը կը հանէ) . Աս ինչ է , քսան տարուան նամակ մը ըլլալու է . զրեքը չեն կարգացուիր , ան ալ թող հոս մտնէ (Ձախ գրպանը կը դնէ) :

ՄԲԳ. Մնաք բարեաւ (Կ'երթայ) :

ԹՈՒՂ. Ուր՞ կերթար :

ՆԻԿ. Պարահանդէսի մէջ ամէննալ պիտի վախցընեմ . ես ալ ասանկ առիթի մը կ'սպասէի . ոչ ոք կը վախնայ ինձմէ . վասն զի աղքատ եմ . հարուստները հարստութեան դիմակով կը վախցնեն աղքատներն ալ առջի դիմակով թող վախցնեն հարուստները . երթանք :

ԹՈՒՂ. Օն ուրեմն :

ՆԻԿ. Որ ծակն ալ մտած ըլլան պիտի հանեմ սա զարչեւիները :

ՏԵՍԻՒ Ա.

Պարահանդէս. մեկ կողմ նստած երեք հոգի բուռք կը խաղան, անոնց քով չորս հոգի գինի կը խմեն դիմակաւորներ արոտներու վրայ նստած: Վարագոյրը բացուելուն պէս երաժշտութիւն:

(Գինի խմողները կ'երգեն).

Խմենք ընկերք, սնկենք պարպենք

Տառապանք ցաւ մէկդի նեւեւնք,

Խնդանք, զի այս պարահանդէս

Ուրախութեանց է ասպարէզ:

Վայրկենի մը երջանկութիւն՝

Կը փարատէ վիճո՞ս սրսմութիւն,

Այսպէս ըսած են մեր նախնիք,

Որք անցուցին կեանք երջանիկ:

Ա. Մանչուկ գինի բեր,

Բ. Օղի ալ բեր.

Գ. Սուն մը բեր:

Ա. Մեր բարեկամը միշտ սուրճ կը խմէ, առաւօտուն կելնէ սուրճ, գիշերը կը պառկի սուրճ, ցերեկը սուրճ. ինչո՞ւ օղի չէք խմեր. սուրճը կընիկներուն առաջին ըմպելիքն է:

Գ. Իբաւունք ունիք:

Ա. Է՛ն բարեկամ. զգայուն սրտերու գիտէք ինչպէս կազդէ այս օղին, ուրախ սրտերուն առջև զըրախտ կը բանայ, տխուրներուն ալ զիմացը դժոխքը կը հանէ. բաց ի ստոնցմէ մարդու օգտակար է,

ինձի համար քնարին թեթերէն աւելի հաճելի է օղիի գաւաթները, առաւօտուն կը խմեմ որպէս զի սիրտս ոզի առնու, ցերեկը նախաճաշիկէն առաջ կը խըմեմ որ ախորժակս բացուի, նախաճաշիկէն վերջն ալ կը խմեմ մարսողութեան կ'օգնէ, իրիկուն քլալուն սլէս կը խմեմ, պառկելու ատենս ալ կը խմեմ, շուտ կը քնացնէ: Տեսակ մը հարուստներէն չեմ որ ունեցած ստակովն ին տուներ կը շինեն, սլար, տէգներ ծախու կառնեն, որոնց ամէնն ալ աշխարհի վրայ սլիտի մնան, ես ունեցած ստակովս օղի կառնեմ ու կը խմեմ, աշխարհի վրայ բան մը չեմ ձգեր, ինչ որ ունիմ ամէնքն ալ մեկտեղ գերեզման սլիտի տանիմ. գերեզմանին բերանը մեծ է ամէնն ալ մէջը կառնէ: Մանչուկ դաւաթները լեցուր (Մանչուկը կը յեցնէ) Խմենք կենդանութիւն (Կը խմէ):

ԴԻՄԱԿԱՒՈՐ ՄԸ. Բարե Պարոն.

Ա. Բարի եկար օրիորդ, նստեցէք:

ԴԻՄ. (Նստելով) Մեզ խարեցիր այնպէս չէ. առջի զիշերը թատրոնէն ելած ժամանակդ խօսք տուած էիր որ զիս սլիտի գտնայիր:

Ա. Ներեցէք, ուրիշ անգամուն չեմ խարեր. ինչ կը հրամայէք... ինչ կը խմէք... ինչ կուզէք:

ԴԻՄ. Ձեզ կուզէի. մինչեւ առտու սպասեցինք մօրս հետ:

Ա. Ինչ' կը խմէք:

ԴԻՄ. Օղի:

Ա. Կեցցէս օրիորդ (Լեցնելով) Հրամայեցէք:

ԴԻՄ. Շնորհակալ եմ (Կը խմէ):

Ա. Կուզէք' ինձի հետ պարել:

ԴԻՄ. Բոլորով սրտիւ. (Կը պարեն):

ՏԵՍԻԼ Բ .

ՆՈՅՆՔ, ԼԵՒՈՆ

ԼԵՒ. (Ինֆելիքեկն) Վաղ առտու կանուխ եկուր, կանուխ գամ, մայրս զարձեալ պիտի սրղողի. վաղ առտու պիտի պօռայ, Լեւոն աղաս ո՞ւր կերթաս այսքան կանուխ. ինչ պատասխանելու է... (Կը նստի) Մանչուկ, սուրճ մը բեր: Անպատճառ երթալու է, սէրն է որ կը կանչէ. սիրոյ հրամանները մօրս հրամաններէն առաջ կատարելու եմ:

Ա. Յոգնեցար օրիորդ:

ԳԻՄ. Այո՛ այո՛, նստինք:

ՏԵՍԻԼ Գ .

ՆՈՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ . ՍՕՖԻ. ՊԻՄԱԿՆԵՐՈՎ

ՍՕՖԻ. Հիմայ հանգիստ ես քիչ մը. այնպէս չէ՞

ԹԱ. Այո՛ այո՛, կերածներս դուրս հանեցի խմածներս ալ մէկտեղ, միայն թէ զլխու ցաւ ունիմ... և ոտներս որ. . . չնն ուզեր բալել, թէ որ Պարոն Թովմասն ալ ինձի պէս եղած է, արթնցած պիտի ըլլայ և մեզ փնտռելու ետեւէ է:

ՍՕՖԻ. Ըհ, մի յուսար. մինչև առտու մեռելի պէս կը քնանայ. այդ կողմէն ապահով եղիր. բայց...

ԹԱ. Ուրեմն մենք մեր զբօսման նայինք: Մանչուկ, մանչուկ, անուշեղէն բեր:

ՍՕՖԻ. Ահ, ճամբան որքան նեղութիւն տուիր ինձի գիտես՞. պատէ ի պատ զարնուելով իյնալով ելնելով, վերջն ալ դրան մը առջեւն նստար, պատուհանէն մէկն սկսաւ պօռալ ինձի ըսելով թէ, «Յկերդ ինչո՞ւ գինիի տակառէն դուրս հանեցիր.» Ամօ

Թէս կաս կարմիր կտրուեցայ . փառք Աստուծոյ որ գիմակէս յայտնի չեղաւ . մինչև հիմայ ասանկ փորձանքի հանդիպած չէի :

ԹԱ. Վնաս չունի . փառք տուր Աստուծոյ որ ողջ առողջ հոս կը գտնուինք հիմայ :

ՍՖԻ. Հոս կը գտնուինք բայց ես կատկածի մէջ եմ տակաւին , տնէն դուրս ելած ժամանակնիս այնքան պոռայիր որ Վիրակոսը արթնցաւ , ու մեր գտնուած սենեակը եկաւ . . . Թէ որ ամուսինս արթնցնէ :

ԹԱ. Ամուսինդ ինչո՞ւ պիտի արթնցնէ :

ՍՖԻ. Պարահանդէս պարահանդէս կը պոռայիր բարձր ձայնով . հասկնալով սր պարահանդէս գացինք . պիտի իմանայ մեր խարդախութիւնը և . . .

ԹԱ. Պիտի կարծէ թէ ես կարգիլէի քեզի պարահանդէս երթալը և քնացած պիտի ըլլայ . մէկդի ըրէ այդ խորհուրդները , մեր զուարճութեանը նայինք . անուշեղէնդ կեր անուշիկս :

ԼԵԻ. Սա կնիկներէն մէկը պարելու հրաւիրեմ , (Կ'երթայ Սօֆիին կ'երկնցնէ ձեռքը , Թախառնիկոս կ'ընէ , որուն հետ կը պարեն) :

Ա. Ես ալ սա կնկան հետ պարեմ , (Կ'երթայ Սօֆին կառնէ կը պարեն) :

ԹԱ. (Պարած ասէն իյնալով) Ահ , ոտքս ցաւցուցի :

ԼԵԻ. Ներեցէք տիկին ձեզի վար ձգելուս :

ԹԱ. Բան մը չէ , Պարոն . . . (Սօֆին փնտռելով) բայց Սօֆի ուր գացեր է , քնչ . . . ուրիշի մը հետ կը պարէ . . . ուրիշի վիզը պլլուած . . . ուրիշի մէջքէն բռնած . . . ուրիշի հետ զուլս զլսի տուած . . . ըլլալով բան է , տես , ես որ իրեն համար կը մեռ-

նիմ... ուրիշի հետ կը խաղայ. զիս ի նախանձ կը հրապուրէ... կանայք նախանձորդ են... ես չեմ նախանձիր, Բայց ինչո՞ւ ուրիշի հետ կը խաղայ, ասիկայ նախանձեւ չէ. զինքը հոգալ է:

ՍՖԻ. ՈւՖ... յոգնեցայ:

ԹԱ. Կեցցես Սօֆի. զիս կը թողուս և ուրիշի հետ կը պարես:

ՍՖԻ. Այդպէս բարկութեամբ կը խօսիս, իբր թէ պարելը սիրելի ըլլար:

ԹԱ. Ես չեմ ուզեր տեսնել քեզ, ուրիշի... Վիզը պլլուած...: Մանչուկ, մանչուկ, զինի բեր, (Նաւր խաղացողները կսկսին կռուիլ):

Ա. Պարոն, հրամայէ, զինիները բերին:

Բ. Կարգը քուկդ է:

Ա. Խաղի մէջ կարգ կըլլայ, կորսնցնողը կը զճարէ. ընդհանուր սովորութիւն մ'է:

Բ. Փարիզի սովորութիւնն է աս:

Ա. Պիտի ստիպես զիս որ...

Բ. Շատախօսութիւն պէտք չէ, (Կսկսին կռուիլ):

Ա. Ինձի շատախօս...

ԹԱ. (Մօտենալով) Պարոնայք, մի կռուիք, ամօթ է, Հայութեան պատիւն պահելու կը պարտաւորինք ուր որ ալ ըլլանք. աս տեղ պարահանդէս է, ամէն ազգէ մարդ կայ... չէք՞ ամհնար, պարահանդէսը ամէն ազգերու պատուոյն արուեստահանգէսն է... հաշտուեցէք:

Ա. Դուն մեր գործին մի խառնուիր:

Բ. Դուն գնա սիրուհւոյդ քովը նստէ, զինքը հա-

մոզել լու աշխատէ, և ծառայութեան պատիւն պահէ :

Ա. Պարահանդէսի մէջ կրթութիւն տալու ելեր է :

Բ. Դուն քու սիրունիդ կրթէ :

Ա. Դուն քու պատիւդ պաշտպանէ :

Թ.Ա. Ես . . .

Բ. Սիրունեոյդ պատիւը պաշտպանէ :

Թ.Ա. Ես . . .

Ա. Տեղդ նստէ դուն . . .

Բ. Անխելը մարդ :

Թ.Ա. Ես որ . . .

Ա. Անպիտան մարդ :

Բ. Քու կարծիքդ քեզի :

Ա. Դուն ալ սիրունեոյդ :

Բ. Անամօթ . . .

Ա. Սրիկայ . . . ստակները տոնը Պարոն, վերջը գէշի պիտի երթայ :

Թ.Ա. Ես ալ ձեզի մարդ կարծեցի :

Ա. Կորի սրկէ անպիտան մարդ, (Կը հրեթափառ-նիկոսն, որնոր զրնորեղով կ'իյնայ) Ստակները պիտի տան :

Բ. Բարեկամ ստակ չունիմ, (Վագեղով պարահանդէսէն կ'ելնեն, Լեռնն ալ կը մեկնի) :

ՏԵՍԻՒԼ Գ.

ՆՈՅՆ.Բ. ԹՈՎ.ՄԱՍ. ՄԱՐԹԱ. ՆԻԿՕ. յիմակներով :

ՄՐԹ. Ան, դուն Պարոն Մելքիսեղեկեանն ես, չը կրցի ձեզ ճանչել, շատ ձերացած էք :

ԹՈՎ. Ինչ կըսէք, տիկին, այն ժամանակէ ի վեր, ուր կը սիրէի քեզի, տասը տարի կայ, ձեր զէմքն ալ փոխուեր է, և էրիկմարդու կերպարանքին տակ ես ալ ինչպէս կրնայի ձեզ ճանչնալ :

ՄԲԹ. Կ'աղաչեմ չըլլայ որ մեր գաղանի բը յայտնէր,
ինչպէս որ բիչ մը առաջ փեռայիս առջին, մանաւանդ
թէ հիմակուան գործերնուս ալ արգելք կըլլայ. է՛
ուրեմն, խրկենք Նիկոն որ ապիս անդին փնտձէ :
ԹՈՎ. Այն, այնպէս ընենք. սրամիտ տղու մը
կը նմանի, բայց զգուշութեամբ վարուելու է, չըլ-
լայ որ մեր հոս գալն իմանալով ի փախուստ աճա-
պարենն. Նիկո ինձ մտիկ ըրէ. գնա Թաթիառնիկոսն
հարցուր. մի ըսեր որ պիտի ծեծենք. մէկը աղ-
ռայի ցաւ ունի անոր համար կուզենք, հրամանէ՛ գայ,
այսպիսի համոզական խօղքերով, քովի սենեակնե-
րուն մէջը բեր որ, հոն ազուր մը ծեծենք :

ՆԻԿ. Շատ աղէկ, շատ աղէկ :

ԹՈՎ. Է՛, ինչո՞ւ լուռ կեցեր ես, խօսէ :

ՍՖԵ. Ինչ՞ խօսիմ . . .

ՆԻԿ. (Գիւնի խոնդներուն ֆով երբայրով Ա, ին սխանջն
ի վայր) Պարոն Թաթիառնիկոս Ատամնարոյժն եկա՞ն
հոս, մէկը աղռայի ցաւ ունի պիտի կանչենք որ . . .

Ա. (Մեկորաի) Սաղ մը խաղամ ասոր . . . (Չայ-
նը փոխելով) Որո՞ւ աղռան կը ցաւի :

ՆԻԿ. Տիկնոջ մը . . .

Ա. Ձեր փնտռածը ես եմ, բայց հիմայ չեմ կըր-
նար գալ. վասն զի կինս հոս մինակ չեմ կրնար
թողուլ (Բովի աղջիկը ցցունելով) . . .

ՆԻԿ. Անիկայ ալ մէկտեղ թող գայ, Պարոն :

Ա. Բայց ես երկու ոսկի կառնեմ, վերջէն բան
մը չըսեն . . .

Բ. Ինչ՞ կայ ընկեր, ո՞ւր պիտի երթաք :

Ա. Ոչինչ, մէկը կը կանչէ շուտ պիտի դառնամ :

ՆԻԿ. (Յած առ Ա.) Հիւանդը պարահանդէսի մէջ է, սա քովի սենեակը. կաղաչեմ Պարոն ատամնաբոյժ, շուտ եղիր երթանք:

Ա. Հիմայ, ճիմայ, ահա կուգամ:

ՆԻԿ. (Թովմասին երթալով) Գտայ, գտայ, ձայն մի հանէք:

Ա. (Ինֆլիրեկն) Մէկ երկու ոսկի առնեմ.

Բ. Ինչ^օ խօսեցաք եղբայր:

Ա. Բան մը չէ:

ԹՈՎ. Ուր են:

ՆԻԿ. (Մասովը ցցունելով) Ահա քու կինդ ալ աւոր քովը կը նստի:

ԹՈՎ. Ե՛լ Սօֆի երթանք, (Կելնեն):

Ա. Ե՛լ օրիորդ երթանք (Իռուս կելնեն):

Բ. Մեր բարեկամը մեզի մինակ թողուց և ուր երթալը չիմացուց:

Գ. Ո՛վ գիտէ, սատանայութիւն մը ըլլալու է: (Երած շտաբիւնը կսկսի, ամենիք կը պարեն ֆանի մը վայրկեան):

ՏԵՄԻՆ Ե .

ՆՈՅՆԲ, Ա. ՄԱՐԹԱ. ԹՈՎՄԱՍ. ՆԻԿՈ.

Ա. (Պօռալով) Ինչ իրաւամբ կը ձեծէք զիս Պարոն. քթէս բերնէս արիւն հանեցիր:

ԹՈՎ. Սխալեցանք, դուն սխալեցուցիր, մենք բըժիշկ կը փնտռենք, (Թախառնիկոսն ու Սօֆի չեն շեր պարելու վրայ):

Ա. Է՛հ, Պարոն, մարդ ձեծելը դիւրին բան չէ, պիտի խղզիք զիս:

ԹՈՎ. Սխալեցանք:

Ա. Սխալեցա՞ք, պիտի խզղէիք զիս և սխալեցաք. սխալեցաք:

ԹՈՎ. Կարծեցի՞նք որ...

Ա. Կարծեցիք, պիտի մեռցնէիք զիս և կարծեցիք... Կարծելով պիտի մեռնէի (Քրիստոսն քերական տրիւն կը վագե). Է՞նչ փոխարինութիւն կը պահանջեմ. Պարոն, դատի պիտի քաշեմ ձեզի:

ԹՈՎ. Ներեցէք:

Ա. Ներեմ... պիտի մեռնէի ես...

ՄԻԹ. (Յաժ առ Թովմաս) Գինով է... օղի մը առ. կը լո՞ւէ:

ԹՈՎ. Մանչուկ, մեր բարեկամին օղի բեր:

Ա. Ինչ և է... (Մեկուսի) Գոնէ օղի մը վաստըկեցանք, (Բարեկամներուն ֆովն երքաշով):

Բ. Ինչ եղար բարեկամ:

Ա. Վարպետութիւն մը ընել ուզեցինք, ծեծ կերանք, ինչ զիտնամ, օղի մը խմեմ երթանք. արիւնը տես ինչպէս կը վագէ քթէս. (Կը խմե կը մեկնիկ երեքը մեկնեղ):

ՍՅԻ. Բաւ է, նստինք քիչ մը հանգչինք:

ԹԱ. Շատ աղէկ:

ԹՈՎ. Նիկոս փնտռէ նայինք... բայց այս անգամուն պէս չսխալինք:

ՆԻԿ. Ի՞նչ անհոգ եղիք, ես պիտի զտնեմ զանոնք (Թափառնիկոսի ֆովն երքաշով) Պարոն Թափառնիկոսը տեսա՞ք հոս:

ԹԱ. Մեկուսի) Նիկոսին ձայնն է, (Բարձր ձայնը փոխելով) Ինչ՞ պիտի ընէիք:

ՆԻԿ. Ճշմարիտը կուզես հասկնալ, պիտի ծեծէ-

ինք, վասն զի իր կինը թողեր Պարոն Թովմաս կը-
սեն, վաճառականի մը կինը կը սիրէ, նամակները
բռնեցինք, որոնք Պարոն Թովմասի զրպանն են :

ԹԱ. (Մեկուսի) Նամակները ասեր են, (Գրպան-
ները խառնելով) Իրաւ որ ես չտեսայ զինքը, (Մեկու-
սի) Նամակները հոս չեն :

ՆԻԿ. Թէ որ տեսնելու ըլլաք զինքը մի զրուցէք
թէ պիտի ծեծենք, որպէս զի չի փախչի :

ՍՖԻ. (Մեկուսի) Ով Աստուած իմ, իմացուեր է :

ՄԲԹ. Կը տեսնէք, մեր Նիկոն ինչ վարպետու-
թեամբ կը փնտռէ :

ԹՈՎ. Ես ալ ան կը դիտեմ :

ՍՖԻ. Բռնուեցանք Պարոն Թափառնիկոս, ըսած իս
պէս է զործը, Կիրակոսը իմացաւ մեր տնէն դուրս ել-
նելը և ամուսնոյս իմաց տուաւ, որ ելեր հոս եկած է :

ԹԱ. Ես ալ աւանակի պէս նամակները ձեր տունը
թողեր եմ. վարպետութեամբ մը զանոնք զրպանէն
գողնալու ճար մը փնտռելու է, վերջը ինձի թող, ես
կրնամ արդարացնել մեզի :

ՍՖԻ. Ինչպէս՞ գողնալու է :

ԹԱ. Քովը կերթաս կը քծնիս, Երբեմն իրեն զի-
նի հրամցնելով, խօսակցութեան կը բռնես : սիրոյ
վրայ կը խօսիս և կամացուկ մը կը գողնաս զըր-
պանէն :

ՍՖԻ. Թէ որ զիս ճանչէ :

ԹԱ. Զայնդ փոխելու ես :

ՍՖԻ. Թէ որ դիմակս վար առնէ :

ԹԱ. Զկրնար առնել, քաղաքավարութեան դէմ է :

ՍՖԻ. Փորձենք լւրեմն :

ԹԱ. Քաջալերուէ Սօֆի, թէ որ յաջողելու ըլլաս, մեծ յաղթանակ մը կանգնած պիտի ըլլաս, քեզ տեսնեմ, (Սօֆի Թովմասին փոխը կ'երթայ) Տեսնենք սա խաղը ինչպէս պիտի վերջանայ:

ՍՖԻ. (Առ Թովմաս) Գինի կը հրամմէք՞, Պարոն:

ԹՈՎ. Ո՞վ է այս կինը:

ՄՐԹ. Պարահանդէսներու մէջ այսպիսի անծանօթ կանայք շատ կը գտնուին, որք անմիտներ որսալու համար կը պտտին:

ԹՈՎ. Գինի ուզեցիք օրիորդ:

ՍՖԻ. Այո Պարոն Թով. (Մեկուսի) Քիչ մնաց որ անունը պիտի տայի:

ԹՈՎ. Հրամմէ խմէ:

ԹԱ. Տեսնենք պիտի կարենայ յաջողիլ:

ՍՖԻ. (Առ Մարթա) Ի՞նչ է խմեր Պարոն:

ՄՐԹ. Ենթահակալ եմ:

ՆԻԿ. (Պստեղով) Եթէ չկարենամ ձեռք բերել սա անամօթ սրիկաները:

ԹԱ. (Իշրովի) Թէ որ ձեռք անցնինք, խայտառակ պիտի ըլլանք, աշխարհի առջև:

ԹՈՎ. (Առ Մարթա ցած) Ասիկայ համարձակ կնկան մը կը նմանի. կրնանք իրեն հարցնել և տեղեկութիւններ քաղել, հարցնենք անգամ մը, կարելի է որ տեսած ըլլայ: Օրիորդ ձեզի քանի մը հարցումներ ունիմ ընելիք կը բարեհաճիք պատասխանել:

ՍՖԻ. (Մեկուսի) Եղբու թեան տեղեկանամք (Բարձր) Հարցուցէք Պարոն. յօժար կամօք պատասխանելու պատրաստ եմ, ինչ որ ալ ըլլայ ձեր հարցմունքը:

ԹՈՎ. Ապրիս ազջիկս, շատ օրեր տեսնես, անունըդ ինչ է:

ՍՖԻ. Անուևս... անուևս... իրաւ որ միաքս չի
գար... Թէրեզա է... Թէրեզա :

ԹՈՎ. Կարգու աճ էք :

ՍՖԻ. Ձէ ես չեմ ուզեր կարգուելի և գերի ըլլալ ,
ասանկ ինքնիր զխոսս խաղաղ կեանք մը կը վարեմ :

ԹՈՎ. (Յած առ Մարթա) Ասածիս պէս լիբը աղջիկ
մ'է. (Բարձր) Ձեզի հարցնելիքս սա է որ , տեսա՞ք
Պարոն Թափառնիկոսը :

ՍՖԻ. Թափառնիկոս... Թափառնիկոս... Ո՞վ է
աս մարդը :

ՄԻԹ. Ատամնարոյժ մը :

ՍՖԻ. Ակռանիդ կը ցաւի :

ՄԻԹ. Ակռայ... :

ՍՖԻ. Հասկցայ... հասկցայ ով ըլլալը, Արևելեան
ատամնարոյժն կը հարցնէք :

ԹՈՎ. Ճիշդ :

ՍՖԻ. Բարեկամս է , ծանօթութիւն ունիմ հետը .
ձեր , նախանձորդ կին մը ունի :

ՄԻԹ. (Մեկուսի) Ուրիշ կնիկներ ալ կը սիրէ :

ԹՈՎ. Տեսա՞ք զինքը հոս :

ՍՖԻ. Չտեսայ , վասն զի հոս եկած չէ . թէոր գա-
լու ըլլար , անպատճառ զիս պիտի գտնէր :

ԹՈՎ. Աս կողմերը ուրիշ պարահանդէսներ ալ կան
այնպէս չէ՞ :

ՍՖԻ. Այ՛ն կան . ինչու այսքան բարակ բարակ հար-
ցումներ . ինչ կայ , պատմեցէք ինձի եղելու թիւնը ,
և կը խոստանամ ձեզի ծառայութիւն մը ընելու :

ԹՈՎ. Էհ , օրիորդ Թէրեզա , սա Թափառնիկոսը
աղէկ մարդու չնմանիր , սրիկային մէկն է :

ԹԱ. (Ինֆլիտրեկ) Իմ գովեստս կընեն :

ՍՖԻ. Մի սրղողիք, հանդարտեցէք, տեղն ի տեղ յայտնեցէք ինձի ձեր գաղտնիքը թերևս կրնամ ձեզի օգտակար ըլլալ, բայց առաջ մէյ մէկ հատ տընկենք : Մանչուկ մանչուկ, զինի բեր :

ՄԸԹ. Այո՛, թող պատմէ, ինչ ձուն բերաւ մեր զխոուն անօրէնը, և կըսէ թէ իւր կինը նախանձորդ է :

ՆԻԿ. Անիծեալ մարդ, ինչպէս ծեծեց տիկինը :

ԹՈՎ. Կինս ահռայի ցաւ ունիմ ըսելով, զինքը տունը կանչել տուաւ :

ՍՖԻ. Վասն զի քաղաքիս մէջ շատ համբաւ ունի : Ատամնարոժու թեան արուեստը զրեթէ նորէն հնարեց, իմս ալ երկու երեք անգամ ահռաներս նայեցաւ. սուտ չեմ կրնար խօսիլ, ապերախտութիւն ըրած կըլլամ, երկու ժամուան մէջ բուժեց, ձեռքը շատ թեթեւ է բնաւ չցաւցուներ : (Մեկուսի) Նամակը գողնալուն մէկ ճարը :

ԹՈՎ. Ատամնարոյժին եկած ժամանակը կինս ահռայի ցաւէն կը մեռնէր, թող սատկէր անպատիւ կինս :

ՍՖԻ. Ինչո՞ւ համար սատկի, մեղք չէ՞ . . . կրնաք ըսել ինձի թէ ո՞վ էք դուք :

ԹՈՎ. Ներեցէք, ով ըլլալս չեմ կարող յայտնել, որպէս զի ձեր առջնն ալ անպատիւ չըլլամ : Վերջապէս այս ատամնարոյժը զիս զինով ըրաւ :

ՍՖԻ. Որպէս զի ահռային ցաւէն չվախնաս :

ԹՈՎ. Անկողնոյս մէջ պառկեցուց զիս :

ՍՖԻ. Որպէս զի հանգիստ ըլլաս :

ԹՈՎ. Մէկ երկու ժամու չափ քնանալէն վերջը

ճայն մը դպաւ ականջս, որ զիս կը կանչէր :

ՄԲԹ. Ես էի կանչողը :

ՇԻԿ. Մենք ալ դուրսը կ'սպասէինք :

ԹՈՎ. Մէկէն ի մէկ արթնցայ և սա Պարոնին հետ
ալ վիճարանութիւն ըրինք :

ՍՖԻ. Վիճարանութիւն . . . և ինչո՞ւ :

ԹՈՎ. Երբ ըսաւ որ Թափառնիկոսը կինս կը սիրէ
և թէ խօսքը մէկ ըրեր են զիս խարելով պարահան-
դէս երթալ. կին մը իրեն գործակից գանկ լով իր ա-
մուսինը մատնէ . (Սօֆի որ Թովնասին ճախ
կողմը նսած է, նաւակը գրպակէն կը գողնայ), Կըր-
նանք գուշակել թէ ինչ աստիճան քարասիրտ կին
մը ըլլալու է որ յանդգնի այսպիսի չարագործու-
թեան ձեռք գարնել :

ՍՖԻ. (Մեկրնսի) Նամակը գողցայ :

ԹՈՎ. Առջի բերան չհաւտայի Պարոնին ըսածներ-
րուն, իսկ երբ կնկանս նամակը տեսի որ Թափառնի-
կոսին գրած էր, այն աստէն իրազգած եղայ, ու հա-
գուտաս փոխելով ձեր հասակիս մէջ փողոցն ինկայ
որ իրենց հետքը գտնելով արգար վրէժխնդրութիւն
պահանջեմ, և Պարոն Թափառնիկոսի կինն ալ այն-
քան համեստ բարեպաշտ մէկն է. ինքն անձամբ
մեր տունը եկաւ, աչերէն արտասուք կը վազէին .
Ինչ անպատուութիւն ընտանիքի համար, խեղճ
Մարդա :

ՍՖԻ. Բայց արդէն Թափառնիկոսի կինը սիրուելու
տեղ մը չունի, պառաւ ցնդած ցմտաքած ձերին մէկն է :

ՄԲԹ. (Մեկրնսի) Համբերելու է :

(Բազմուքիւնը կանուց կանուց կերպով կնկսի :

ԹՄ. (Ինֆեյրեկ) Խօսակցութիւննին դեռ չլմնցաւ:

ԹՈՎ. Թէպէտ և այնպէս, երիտասարդութիւնը գեղեցիկ էր, չքնաղ կին մէր, պաշտելի էակ մ'էր:

ՍՖԻ. Վերջապէս նամակը...

ԹՈՎ. Նամակը ես կարդացի, զոգալով...

ՍՖԻ. Թշնամութիւն ըլլալու է, պէտք է որ ամէն կնկան խօսքին և ստորագրութեամբ զրուած նամակներուն պարունակութեանը հաւատք ընծայէք.

Վասն զի շատ անգամներ այնպիսի սուտ խօսքերով և կեղծ գրութիւններով մարդիկ խաբուելով, յանիրատի կը մեղադրեն իրենց կիները ու վէճի մը ծընընդեան առիթ կուտան, ուստի լաւ մտածեցէք, կարելի է թշնամանք մը, կամ...

ՆԻԿ. Ինչ թշնամանք... տիկինը անանկ ձեռնց որ, խեղճին ոտքը ձեռքը կապեց:

ՍՖԻ. Եւ զինքը գտնելու համար հոն եկար:

ԹՈՎ. Այնպէս է... դուք չտեսնաք զինքը:

ՍՖԻ. Այո պարոն սէ. թէոր հոս ըլլար, անպատճառ զիս պիտի տեսնէր. ուելի ևս կուզէք ձեզի յայանապէս խոստովանիմ. Թափառնիկոս իզմէ ուրիշ կին մը չսիրեր. և զձեզ ապահովելու համար, կերպուր նամ որ ես եմ իր սիրուհին. ուստի ձեր այս խօսքերը բոլորովին անտեղի են և կասկածնիդ անհիմն, ինչ ատեն կըսէք որ ձեր կիներ կը սիրէ:

ՄՐԹ. (Մեկուռսի) Աւելի գէշն:

ՍՖԻ. Պ. Թափառնիկոս զիս սիրելու շատ մը իրաւունք երևան կը բերէ. կիներ հարիւր տարուան դուռը զարկեր ներս մտեր է. մինչդեռ ինքը դեռ քառասուն տարուան երիտասարդ մը ձերութեան դրա-

նէն՝ զուրս ինչպէս կրնայ հետը ապրիլ . ասկէ զատ
կինը զգուելի բնութիւն մը ունի . շատ նախանձորդ
է կըսէ :

ՄԻԹ . (Մեկուսի) Ինչեք կը խօսի լիբբը . (Բարձր)
Երթանք մենք, քանի որ նամակները մեր քովն են,
այսօր կամ վաղը զիրենք պիտի գտնենք, վրէժնիս կը
լուծենք :

ԹՈՎ . Շատ աղէկ , երթանք :

ՍՖԻ . Կ'զարիմ Պարոն , որ չկրցի ձեր ծառայու-
թեան մէջ գտնուիլ , նաև կը խղճամ վրադ որ այդ
ձեր հասակին մէջ , թշնամիի մը խարդախութեան
հաւատարով . կնոջդ վրայ այնքան զրպարտութիւն-
ներ դիզեցիր , զնա տունդ , հանգիստ եղիր . . . բայց
մնաք բարովի ատեն ալ խմենք՝ թէ որ կը հաճիք իմ
ձեռքէս զաւաթ մը գինի ընդունիլ (Կը յեցնէ) Հրամ-
մեցէք :

ԹՈՎ . Կենդանութիւն :

ՍՖԻ . Անուշ անմահութիւն :

ԹՈՎ . Կաղաչեմ թէ որ հոս զալու ըլլան մ'ըսեր որ
զիրենք փնտռեցինք որ չփախչին . թէ որ կուզէս
քեզի ստակ ալ կուտամ :

ՍՖԻ . Այդ մասին անհոգ եղիք :

ԹՈՎ . Մնա՛ բարով :

ՍՖԻ . Երթաք բարեալ . (Թովմաս , Մարթա , Եիկօ
կ'երթան) :

ՏԵՍԻՒ Ե .

ԹՄՓԱՌՆԻԿՈՍ , Եւ ՍՕՖԻ .

(Իրսէն անձրեւի ձայն կը լսուի)

ԹԱ . Կեցցես Սօֆի :

ՄՖԻ. Տեսա՞ր ինչպէս յաջողեցայ, կըսէք որ կանանց ձուռքէն զործ չզար:

ԹԱ. Ինչ ըսիր, ինչ ըսին:

ՄՖԻ. Քեզի զրած նամակս զրպանէդ ինկեր է մեր տունը, անոնք ալ առեր բացեր կարդացած են, հիմա նարսիկութիւն մը հնարելու է, ինքզինքնիս արդարացնելու համար:

ԹԱ. Նամակները չգողցա՞ր զրպնէն:

ՄՖԻ. Մէկ հատ մը միայն կար, անիկայ առի:

ԹԱ. Տուր տեսնե՛մ. տար Աստուած որ քու զրածդ ըլլար, վասն զի զրպանիս մէջ երկու նամակ կային, մէկը քուկդ է միւսը ուրիշէ մը...

ՄՖԻ. Ուրիշէ... ուրիշէ... ով է այս ուրիշը:

ԹԱ. Առևտրական գործերու վրայօք նամակ մը:

ՄՖԻ. Կը ստէք Պարոն. ինչ է այն նամակին իմաստը, պատմէ ինձի:

ԹԱ. Ճշմարիտը կուզես, ընտանեկան զազտնիք մ'է զոր սրտիս մէջ պահեր եմ:

ՄՖԻ է՛հ, Պարոն Թախառնիկոս. պարահանդէսի մէջ մեզէ ուրիշ մարդ չմնաց (Դիւնակը հանելով) գիմակնիս վար առնենք և այնպէս խօսինք (Թախառնիկոսիև դիւնակը կը քաշէ) մինչև այսօր քեզմէ զազտնիք մը ծածկած չունիմ, թէ որ կուզես ինձի հաւատարիմ մնալ և իզմէ սիրուիլ, ինչ որ ալ ըլլայ այդ զազտնիքը զոր սրտիդ մէջ պահեր ես, կը պարտաւորիս ինձի հազորդելու. ապա թէ ոչ, շուտով պիտի հասկնամ որ ինէ ուրիշ կին մ'ալ կը սիրես. թող մեր սիրոյ շղթայն այս վայրկենէն խորասակի, է՛հ, գիտես որ մեծ ամօթ է մարդու մը երկու կնիկ սիրել:

ԹԱ. Չէ անուշիկս . չէ սիրունիկս , քեզմէ : զատ ուրիշ մը սիրած չունիմ և չպիտի ունենամ , սէրս քեզի նուիրած եմ . կուզեմ որ միշտ քու քովդ մնայ . ինչո՞ւ ասանկ կասկածներու կերթաս : Այն նամակը աղջիկիս ուղեալ է , և ինչպէս որ ձեզի յայտնի է , նշանուած է . սրիշ նորեւուկ պատանի մը կուզէ իրեն գրաւել աղջիկս , ահա աս է գործը . . .

ՍՅԻ. Ապրիս . . . կեցիր հիմա կարգամ նամակը և երթանք , վասն զի անձրեւը դադրելիք չունի (Կարդարով) «Ա.Ռ. Ռոյնսս Մելֆիսեդեկեան» Ա.Տ. սըխարմամբ որիշ նամակ առած ենք , ասոր զրեւը չեն կարդացուիր . . . շատոնց ի վեր գրուած է իմ ամուսնոյս ուղղեալ :

ԹԱ. Կարգայ տեսնենք մէջը . . .

ՍՅԻ. (Կարդարով) «Անցեալ . . . օր . . . ևկեղեցիեն . . . ելած ժամանակ . . . չեն կարդացուիր որ . . .

ՏԵՍԻՒՆ Զ .

ՆՈՅՆՔ, ՄԱՐԹԱ, ԹՈՎՄԱՍ, ՆԻԿՕ.

ԹՈՎ. (Վազկում) Աս անձրեւին ո՞ւր պիտի երթանք :

ԹԱ. Դիմակները :

ՄՐԹ. Ինչ՞ անձրեւ :

ԹԱ. (Ձեռնովը երեսը ծածկելով) ո՞ւր փախչինք :

ՍՅԻ. Դիմակները . . .

ՄՐԹ. Եկէք հասէք , Նիկո . . .

ԹՈՎ. Վայ շունշանորդիննր . . .

ՆԻԿ. Ուր՞ է , բռնեցէք ծեծեմ . . .

ԹՅ. Փախչինք . (Թախառնիկու եւ Սօֆի դռնէն դուրս ելնելու կը ջանան : Մարտ Թախառնիկուին շրջադէսէն բռնած կը փաշէ , Թոյնսս ստիս ան-

դին վագուրոստեյով Սօֆիև բռնել կ'աշխատի , Թա-
նառնիկոսի եւ Սօֆիի մէյնէկ ոսֆը դուրս' փախչելու
կը ջանան , որք կ'արգիլեն Թովմաս ու Մարթա) :

ԱՐԱՐՈՒԱԾ Ե .

Թափառնիկոսի տան մէջ սրահ մը , երկու սենեակ դիմաց
դիմաց , աջ կողմը պատուհան մը' որ փողոցը կը նայի :

ՏԵՍԻԼ Ա .

ԵՐ . (Արոռի վրայ նստած քաշկիկնակ ի ձեռին ա-
ջերը կը արբէ) Սէր . . . սէր . այս զիշեր ալ վանեցիր
արտեաններէս այն անուշ նինջը որ սիրահարեալ
սրտերու առժամանակեայ յանկուցիչն է . բարէ , կը
վախչիս աչքերէս , զրկուեցայ ես քեզմէ , միայն ար-
տասուք թափել մնաց ինձի բաժին , և այն այս երի-
տասարդ հասակիս մէջ : Ամբողջ զիշեր դաշկիկնակ
ի ձեռին արտասուքս սրբելով ժամերուն անցնելուն
կըստասէի անկողնոյս մէջ . . . ո՞վ Աստուած իմ , սի-
րոյ թակարդին մէջ իյնողներուն ինչ դժուար է եղեր
քնանալը . . . սիրականէն հեռու : Ահ , նինջդ անուշակ
անհաշտ թշնամիդ սիրոյ , ո՞ր ես , եկուր ծանրա-
ցիր արտեաններուս վրայ և ցրուէ մտքէս տասն
խորհուրդները որք զիս ի գերեզման պիտի մղեն : Ահ ,
Լեոն , չքնաղդ իմ Լեոն , քեզմէ հեռու մեռեալ եմ
ես , քու ներկայութիւնդ է որ հոգի կուտայ ինձի ,
կը սիրեմ զքեզ մահու չափ , կեանքս քեզի հետ անցը-
նելու որոշած եմ , քեզի նուիրած եմ իմ սիրտս , քեզի

համար ստեղծուած եմ. . . թող հայրս սպառնալեօք
խրոխտայ և անէծք թափէ զլիսուս , ընդունայն է . . .
Թող մեր սիրոյ ամրապինդ շղթայն բայքայել աշ-
խատի , անօգուտ է . չպիտի յաջողի իր բարբարո-
սական ձեռնարկութիւնը , Աճ' , Լեոն , առաջին ան-
գամ որ տեսայ ըզբեզ , սիրեցի , քու մէկ նայուածքդ
հրապուրեց զիս . և երբ խօսիլ սկսար , բառերը սի-
րաբոյր շուրթերէդ սահելով , սիրտս մտան վիրա-
ւորեցին զանիկայ , ոչ ոք կրնայ բուժել այն վէրբը
բաց ի քեզմէ : Քու շունչդ զեփիւռի պէս քաղցր է .
և երբ քաղցրաբոյր շուրթերէդ սկսի փչել անուշ
բուրումն կը ծաւալի շուրջանակի . իբր թէ անուշա-
հոտ իւզի սրուակի բերանը բացուէր , իսկ երբ շուր-
թերդ անշարժ դիրք մը առնուն , վարդի նախանձն
կը յուզին . աղջիկ մ'եմ , չեմ կարող նկարագրել , բա-
նաստեղծ մը ըլլալու էի որ ճիշդ քու պատկերդ ըսէի .
և աղջիկ մը այսպիսի պատանի մը չպաշտէ , զո՞վ
սիրէ . . . ինչպէս սիրտս կը բարախէ (Պասուհակեկե
նայելոյ) Ինչ կը տեսնեմ Լեոնն է . . . արդեօք կը կը-
սխալիմ (Այբր սրբելոյ) Նա ինքն է (Ասդիս անդիկե
վագելոյ) Զիս գրկելու կուգայ , հասիր Լեոն . . . միս
մինակ եմ . . . հասիր անգամ մը փարփմ քեզի (Յևորա-
ծի պէս) Եկուր վարդագեղ այտերէդ սիրոյ պտուղներ
քաղեմ (Միշտ վագելոյ) .

ՏԵՍԻՒ Բ .

ՆՈՅՆ, ՆԻԿՕ .

ՆԻԿ . (Վագելոյ) Փախան թշուա . . .

ՆԲ . (Առանց Նիկոյիկե երեսը նայելու կը պղտի) .

ան իմ սիրուն Լեոնիկս . . .

- ՆԻԿ. Ինչ կընէք օրիորդ, պիտի խղդէք զիս .
ԵՐ. Ա՛հ գուն . . .
- ՆԻԿ. Ես ինչ յանձանք ունիմ . . . ես բռնեցի անոնք
փախան :
- ԵՐ. Ա՛հ ես եմ չբաժնուիր :
- ՆԻԿ. Թո՛ղ զիս երթամ գանեմ :
- ԵՐ. (Միշտ պղտաւ) Ա՛հ կուզես զիս թողուլ :
- ՆԻԿ. Օրիորդ . . . Տիկին, փախուցի՛ր :
- ԵՐ. Գուն կ'ատես զիս . . . գուն Լևոն :
- ՆԻԿ. Խելքդ զլուխդ բեր :
- ԵՐ. Գուն Լևոնն ես որ ուրիշի կերպարանօք կը
ներկայանաս :
- ՆԻԿ. Ես Նիկօն եմ ձեր ծառան :
- ԵՐ. Զիս խաբել կուզես . . . սլատուհանէն տեսայ
գուն Լևոն . . .
- ՆԻԿ. Օրիորդ, Լևոնը չեմ ճանչնար, և ոչ ալ Լևոննեմ :
- ԵՐ. Լևոնն ես գուն, Լևոն . . . (Պղտաւ) :
- ՆԻԿ. Լևոնն ես . . . Լևոնն ես . . . աս ինչ փորձանք
քի հանդիպեցանք, բռնի Լևոն ընել կուզէ զիս . . . թող
զիս երթամ գործ ունիմ, օրիորդ ես չեմ Լևոնը սատ-
կի շուն շան որդին ով որ է . և Լևոնը չեմ գիտեր :
- ԵՐ. Գուն Լեոնն ես, գուն ինքզինքդ չես ճանչնար :
- ՆԻԿ. Հսելի՛ր չմնաց. կարելի է որ ես սխալած ըլլամ :
- ԵՐ. Հէրիք է, մի տանջեր զիս, քեզի համար
կեանքս վտանգի մէջ դրած եմ (Պագնէշով) որքան կը
փափաքէի քեզ համբուրել. և գուն զիս չես սլագնէր :
- ՆԻԿ. Համբուրեմ տիկին . . . համբերէ . . . համբու-
րէ քիչ մը, հիմա կը համբերեմ . . . համբուրեմ ըսել
կուզեմ, ես ասանկ բան ըրած չունիմ . . . քաջաբե-
ռէ Նիկօ. (Կը համբուրէ). Ա՛հ . . . (Լեւոնը դրան ան-

ջեւ կը տեսնուի) ծունկերս կը դողդղան (Երանեակ ա-
րոտի վրայ կ'իյնայ):

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ, ԼԵՒՈՆ.

ԼԵՒ. (Վազեղով) Ինչ կը տեսնեմ. այ ուխտադրութ-
աղջիկ... ինձի այնքան զգուանք և հիմա ծառային
հետ. ապերախտ ծառայ. (Նիկոս կը հրե) ըրածդ ինչ է:

ՆԻԿ. Ըրածս... ըրածս... Ես ինչ գիտնամ, բան
մ'է կընեմ... Ես ծառայ մ'եմ ինչ որ հրամայէ օրի-
որդը զայն կատարելու պարտաւոր եմ... ինձի կըսէ
որ դուն Լեւոնն ես... Ես Լեոն չեմ կըսեմ. անիկայ
կը պնդէ թէ ես Լեոննեմ. էհ ըսի հարկաւ ինքը իզմէ
ազէկ գիտէ ով ըլլալս, ինչ ըսեմ, մինչուկ հիմա ինք-
զինքս Նիկո գիտէի, սխալած եմ, Լեոն եմ եղեր...
Ո՞վ գիտէ ինչ շունշանորդի սրիկային մէկն է աս Լեոնը
դուք կը ճանչնաք զինքը թերեւ. համբուրէ զիս ըսաւ.
Ես որ մինչև հիմա աս բառը շատ քիչ անգամ լսած
եմ. գործողութիւնն ալ տեսայ, և դուն կը հարցնես
թէ ինչ է ըրածս. ազոր հարցմունք:

ԵՐ. (Սքափելով) Ուր եմ ես... (Լեւոնը տեսնելով) ան
Լեոն դուն... դուն...

ԼԵՒ. Ես... ես... կարծեմ անյարմար ժամանա-
կին եկայ... ճիշդ այն կէտին որ Նիկոն համբոյր կը
թափէր այտերուդ...

ԵՐ. Նիկոն... Նիկոն... ան քնացած ժամակակս
... թերեւ...

ԼԵՒ. Ա՛հ թշուառական... (Կը զարնէ Նիկոյին որ
կրփախէի):

ԵՐ. Ինչ է Նիկոյի յանցանքը:

ԼԵՒ. Գեռ կը համարձակիս հարցնելու, դունէն ներս

մտած ատենս քեզ կը համբուրէր. և դուն անխօս... .

ԵՐ. Միթէ դուն չէիր որ կուգայիր... .

ԼԵՒ. Ինչ^օ կըսէք ես հիմա եկայ :

ԵՐ. Պատահանէն տեսայ որ կուգայիր... . չգիտեմ վրաս թմբութ իւնմը եկաւ, աթոռի վրայ ինկայ... և... .

ԼԵՒ. Նիկօն իզմէ առաջ մտած ըլլալուն պահուցայ որ ելնէ վերջը մտնեմ. երբ տեսայ որ ելնելիք չունի դունն ալ բաց էր մտայ, և տեսայ որ... .

ԵՐ. Ներէ ցնորեալ սիրունոյդ... . ուրեմն Նիկօն սխալմամբ (կարդ) Թշուառ եմ եմ... .

ԼԵՒ. Սրբէ արցունքդ, կը ներեմ քեզի... .

ԵՐ. Բոլոր զիշերը չքնացայ... . մէկը չկրցի գտնել որ խրկէի քեզի իմաց տալու թէ գայիր. միս մինակ էի... . և հիմա որ տառու եղաւ... .

ԼԵՒ. Նամակդ առնելուս պէս շուտով տնէն ելայ պարահանդէս գացի, հոն ալ ըիջ մը նստայ, տուն դարձայ որ պառկիմ քնանամ... . չկրցի քնանալ որ... .

ԵՐ. Ինչ^օ նամ ոկ... . ես չգրեցի... .

ԼԵՒ. Դեռ ցնորանձ ես, գրածդ չես յիշեր. մանաւանդ իմացուցած էիր թէ աս օտառու կանուխ գամ :

ԵՐ. Կը սխալիս Լեոն... .

ԼԵՒ. Ինչպէս կը սխալիմ. իմ նամակս ալ ընդունած ըլլալդ գրած էիր :

ԵՐ. Ես նամակ չառի քեզմէ... . որով հետ խրկեցիր :

ԼԵՒ. Մեր ծերուկ Անթառամին հետ, և ինչպէս որ ապսպրած էիր, պատուիրեցի որ խոհանոցին պատահանէն վար նետէ : Սայց... . նատելու աթոռ չունիք հոս :

ԵՐ. Զարմանալի բան... . սա խոցին մէջ աթոռ կայ երթամ քերեմ. (Երբայու վրայ) :

ԼԵՒ. Թո՛ղ ինձի, ես բերեմ:

ԵՐ. Ինչպէս կրնայ ըլլալ որ ինձի նամակ գրէ և ես ալ պատասխանը խրկեմ... բոլորովին անծանօթ են ինձի այս նամակագրութիւնները... խոհանոցին մէջ փնտռեմ նայիմ իր նամակը (Կ'երբայ):

ՏԵՍԻԼ Գ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ. Վերջը ԼԵՒՈՆ, ԵՐԱՆԵԱԿ.

ԹԱ. (Վագեղով) Շունչս հատաւ վազելէն այնչափ խայտակութիւն... խեղճ Սօֆիս ալետտէս կը վագէր, իյնալով ելնելով. տես սա երկու ցնդած պառաւնեբուն ըրածը, մեզի բռնելու համար. սարահանդէս եկած են... թէ որ իմացուի ասոնք... ով կը կանչէ զիս իր տունը... անպատիւ եղայ: (Արոռի վրայ կը նստի):

ԼԵՒ. (Արոռ բերելով) Ա՛հ Երանեակ քու սիրոյդ համար:

ԹԱ. Ա՛հ իմ սիրոյս համար (Փսսով կը ծեծէ) ան իմ սիրոյս համար... ուրիշ տեղ մը որոշենք տեսնուելու համար... առանձին մնանք... քեզի կը սպասեմ հօրդ ատամնարութութիւնը (Միշտ ծեծելով) շատ կը սարեմ զքեզ... լեզուով չեմ կրնար բացատրել, ուր մնաց թէ... փատով... թէ որ ինձի նամակ գրելու ըլլաս... հասցէն այսպէս ըլլայ, առ Յ. Գ. Կ. Լևոն Սիրահարեալներու փողոց թիւ 20.

ԼԵՒ. Ինչո՞ւ կը զարնէք, Պարոն,

ԹԱ. Շատ կը սիրեմ զքեզ...

ԵՐ. Բաւ է բաւ, բարբարոս մարդ, չէս ամչնար ուրիշ կնիկներ կը սիրես այդ տարիքիդ մէջ:

ԹԱ. Ի՛նչ կը խօսիս:

ԵՐ. Այո՛ կը խօսիմ. ասիկայ իմ հոգիս է դուք

զայն մեռցնել կուզէք. . . կը սիրեմ զինքը, ամուսինս է. կիմանա՞ք:

ՏԵՍԻՒ Ե .

ՆՈՅՆՔ, ՍՅՖԻ .

ՍՅՖԻ . Շուէնչս հատաւ վագելէն. . . քեզ ալ կորուսի . . . ինչ ընեմ, ո՞ւր պահուիմ:

ԹԱ . Մի խօսիր, զնա պահուէ սա խուցին մէջ :
ԼԵԻ . Կը խնդրեմ՞ . Թափառնիկոս, լսէ ազաչանքս աղջիկդ ինձի տուր, զինքը երջանիկ պիտի ընեմ, կազաչեմ, անգու թ մ' ըլլար իր սիրովը կայրիմ կը տոչորիմ :

ԹԱ . Ինչ որ կուզէք ան ըրէք կորսուեցէք աչքս չտեսնէ (Կը նստի արոռի վրայ):

ՏԵՍԻՒ Զ .

ՆՈՅՆՔ, ԹՈՎՄԱՍ .

ԹՈՎ . Վերջապէս ձեռք բերի զինքը բարև Պարոն:

ԹԱ . (Ա.թոռեկ եղևեղով) Հրամամեցէք Պ. Թովմաս . . . այսքան կանուխ . . . երէկ զիշեր ազւոր զուարճացանք բաւական զինի խմեցինք . . . ես ալ հիմա արթնցայ . . . զիշերուան հագուստովս կը նստիմ . (Մեկուսի) Կեղծենք .

ԹՈՎ . Ձեզի հետ խօսելու եկայ :

ԹԱ . Կրնար խօսիլ . . . բայց առաջուց ըսէք ինձի, Տիկինին ցաւը ինչպէս եղաւ :

ԹՈՎ . Շատ հանգիտ է, ձեզի ալ բարև ըրաւ :

ԹԱ . Ողջ ըլլայ, խելքը սրբան կը տանջուէր :

ԹՈՎ . Ձեզի քանի մը խօսք պիտի զրուցեմ, բայց մի սրդողիք :

ԹԱ . Սրդողիլն ինչըսել է. հրամամեցէք խօսեցէք . . . սուրճ մը բեր Նիկո :

ԹՈՎ . Դուն սրիկային մէկն ես . . . դուն անառակին

մէկն ես . . . դուն սինլըորի մէկն ես . . . դուն բարբա-
րոսին մէկն ես . . . դուն խարդախ մէկն ես . . . վեր-
ջապէս մարդու կերպարանքով իշուն մէկն ես :

ԹՄ. Ով՞ ըսաւ :

ԹՈՎ. (Պօռաշոյ) Ով կարծեցիր զիս . . . կինս առ-
նես պարանանդէս տանիս :

ԹՄ. Հիւանդ էր օղափոխու թեան համար տարի :

ԹՈՎ. Զիս կը խարէք սրիկաներ , աշխարհի առ-
ջեւ քեզ իբրեւ սրիկայ մէկն ներկայացընելէն ետքը
վրէժ ալ պիտի լուծեմ :

ՏԵՍԻՆ Է .

ՆՈՅՆԵՒ, ՄԱՐԹԱ,

ՄՐԹ. Աստուած փորձանքնիդ տայ :

ԹՄ. Աս ո՞վ է :

ՄՐԹ. Տես ով եմ :

ԹՄ. Պարոնը կարծեմ իմ կինս է :

ՄՐԹ. Այդպէս է , անիծից ծնունդ . ինչպէս , շատ
ազնոր է :

ԹՄ. Ինչ բան :

ՄՐԹ. Սոխակի պէս կը խօսի :

ԹՄ. Ով՞ :

ՄՐԹ. Տատրակի պէս կը նայի , այնպէս չէ :

ԹՄ. Ինչ ըսել կուզէք :

ՄՐԹ. Ըսել կուզեմ որ սիրամարզի պէս պճնասէր
է . Ինչպէս էր գնդասեղի ցաւը . . . ասկէ շխտակ
բանտ պիտի երթար :

ԹՈՎ. Պատասխան տուր , ո՞ր կը գտնուի հիմա
իմ կինս :

ԹՄ. Ինձի կը հարցնէք :

ՄՐԹ. Համբերեցէք Պարոն Թովմաս , հիմա ամէնն
ալ երևան պիտի գան . նախ և առաջ սա հագուստ
փոխեմ (Սօֆիիս մեծ խոսքը կը լեցնէ) :

ԹՍ. (Մեկուսի) Ինչպէս պիտի կրնանք ազատիլ օ

ՄԲԹ. (Սօֆիև ֆաշկոսեյով) Ահա ձեր կիներ, նամակ մ'ալ ունի ի ձեռին...

ԹՈՎ. Սատանորդի կին, կը խարբես զիս... Բնչ նամակ է անիկայ, կարգան մտիկ ընենք:

ՍՖԻ. Ներէ իմ սիրելի ամուսինս, (կը կարբայ),

«Ա.Ո. Պ. Հ. Թովմաս Մելիսեթեկեան.»

ԹՈՎ. Ինձի համար է... չըլլայ որ առևտրական գաղտնիք մը ըլլայ:

ՍՖԻ. (Կարդալով).

«Սիրեցեալդ իմ, անցեալ օր եկեղեցւոյն դրան առջին կեցած ինձի սիրոյ նշաններ կ'ուղղէիր ձեռնովդ... Բովս եղող մէկ ֆանի կնիկներ սեսան ու կասկածի գացին, կաղաչեմ ուրիշ անգամ զգուշանաս... Թափառնիկոսին տուն չգտնուած ժամանակը...»

ՄԲԹ. (Մեկուսի) Աս Բնչ է...

ՍՖԻ. Շարունակեցով)

Ա.Ո.ՏՈՆՆԵՐՆ ԵՆ... կրնամ զալ ու սեսուրիւն ընել հետս
ՄԱՐԹԱ.»

ԹՈՎ. (Մեկուսի) Ով՞ Սատուած իմ, սիրկէ գտար այդ նամակը...

ՍՖԻ. Ձեր գրպանէն...

ԹՍ. Դուն սրիկային մէկն ես... զուն անառակին մէկն ես... զուն ձերացաց ցնդած ցմղակած պատառին մէկն ես... կինս ալ անանկ է... զիրար կը սիրէք անամօթներ, երիտասարդներէն ամչցէք:

ԹՈՎ. (Շփոքած) Ես՞:

ԹՍ. Էական դերանուն եզակի Ա. դէմք ուղական.

ՄԲԹ. Մենք՞:

ԹՍ. Էական դերանուն յոգնակի ուղական Ա. դէմք:

ԹՈՎ. Ամենեին :

ԹԱ. Մակրայ :

ԹՈՎ. Սուտ . . .

ԹԱ. Ածական :

ՏԵՍԻԼ. Ը.

ՆՈՅՆՔ ՆԻԿՕ.

ՆԻԿ. Ամէնքն ալ հոս են . . .

ԵՐ. Ահ իմ սիրուն Լեւոն . . .

ՆԻԿ. Կը յիշես օրիորդ , բիչ մը առաջ ես Լեւոն էի . . . ինչ ազէկ էր Լեւոնութիւնը :

ԹՈՎ. (Յած առ Մարթա) Ինչպէս եղաւ որ աս նամակը իրենց ձեռքը կ'անցնի :

ԹԱ. (Յած առ Սօֆի) Թէոր այս նամակը չգողնայի՛ր :
ԼԵԻ. (Յած առ Երանեսի) Անգամ մը բեզի հետ ամուսնանամ :

ՄՐԹ. (Յած առ Թովմաս) Ինչ պիտի ընենք :

ՍՖԻ. (Յած առ Թախտնիկոս) Տեսնենք ինչպիտի որոշեն :

ԹՈՎ. (Յած առ Մարթա) Պատիւնիս չարատելու համար անուշի կսպենք :

ՄՐԹ. (Յած առ Թովմաս) Ես ալ այն պիտի ըսէի :

ԹԱ. (Յած առ Սօֆի) Անուշութեամբ ըմբոցենք աս խաղը :

ԹՈՎ. Չէք խօսիր . . .

ԹԱ. Ինչ պիտի խօսիմ , իմ կինս կը սիրես :

ԹՈՎ. Հասկա դուն որ իմինս կը սիրես :

ՍՖԻ. Եւ տիկինը որ իմ ամուսինս կը սիրէ :

ՄՐԹ. Եւ դուն որ . . .

ԹԱ. Դատի ելլալու ենք որպէս զի իրաւունքը երկան էլնէ :

ԹՈՎ. Անպատիւ պիտի ըլլանք ամեննիս ալ :

ՍՖԻ. Թող ըլլանք, իրաւունք կուզենք մենք...

ՄԲԹ. Անամօթներ... ինչ իրաւունք ունիք իրաւունք ունենալու:

ՏԵՍԻՒԼ Թ.

ՆՈՅՆԻ, ՄՍՐԳԱՐ.

ՄԲԳ. Բարև Պարոնայք և Տիկնայք:

ԹԱ. Բարի եկար Պարոն Մարգար, մեր դատը դուն տես. Պարոնը իմ կիինս կը սերէ, ես ալ անորինը կը սիրեմ, իրաւունքը որո՞ւ քով կը մնայ:

ՄԲԳ. Դուք արդէն դատը կտրեր էք, կռիւ պէտք է, հաշտուեցէք:

ԵՐ. Հապա ես որ Լեոնը կը սիրեմ:

ՄԲԹ. Պապանձէ:

ՄԲԳ. Ահա ես ալ հրապարակաւ կը յայտնեմ միտքըս, իմ փափաքս ալ ան է որ Երանեակը Լեոնի հետը ամուսնանայ, և մեծապէս շնորհակալ եմ որ առաջուց իմաց տուաւ:

ԵՐ. Պարոն Մարգարի ցուցուցած մարդասիրութենէն զո՞ն եմ, և անա կը խօստանամ մինչեւ վերջին շունչս Լեոնի հետ ապրիլ:

ՄԲԹ. Եւ դուն կը խոստանամ ինձի հաւատարիմ մնալ:

ԹԱ. Այո:

ՄԲԹ. Այս եղելու թիւնները պիտի մոռցուին... չեղածի պէս...

ԹԱ. Այո, անանկ պիտի ըլլայ:

ԹՈՎ. (Առ Սօֆի) Ձեր ակռայի ցաւն ալ կանցնի:

ՍՖԻ. Կանցնի:

ԹԱ. Ամէնքնիս ալ ուխտենք իրարու հաւատարիմ մնալ, զիրար սիրենք և այս գաղտնիքը մեր մէջ պահենք, որպէս զի պատիւնիս չարատի:

ՄԲԹ. Աճ, որքան որ չար բնաւորութիւն ունենաւ
 դարձեալ կը սիրեմ զքեզ. (Կը սրագնէ թախառնիկուր)
 Ասանկ պարագաներու մէջ չեմ կրնար արտասուքս
 զսպել. (Լալոյ) Երբ կսկսին համայնները բերնէս
 վազել, արցունքն ալ աչքէս կը հոսի. դուն զիս լաւ
 մը չես ճանչցէր, բեզի համար կը մտնիմ ես:

ԹՈՎ. (Լալոյ) Զիս յարտատուս շարժեցիր իմ սիրուն
 Սօֆիս... որքան ժամանակ է որ շուրթերս այտե-
 րուդ դպած չէին:

ԼԵԻ. Աճ իմ երանեակս:

ԵՐ. Աճ իմ ԼԵԼՈՆԻԿԱ:

ՆԻԿ. Հապա օրիորդ որ զիս ԼԵԼՈՆ ըրիր:

ՄԲԹ. Աշխատէ ազջիկս Լեւոնը սիրելու:

ԹՈՎ. Առաւօտ եղաւ, երթանք Սօֆի:

ԹԱ. Քովս եկուր անուշիկս:

ՄԲԹ. Ը՛հ, բերանդ պագնեմ:

ԹԱ. Ը՛հ, բեզուդ խամնեմ:

ՍՖԻ. (Մեկուսի) Ինչպէս որ ձեռքս խամաւ:

ՄԲԹ. ԶԼԱՐԵՐԿ սիրեմ:

ԹԱ. Սիրէ սիրէ, կշտացիր:

ՆԻԿ. Ինչմէ զատ ամէնքն ալ ոտքի վրայ են:

ԹԱ. Ինչ կը խնդար (Կ'երգէ):

Հսս դայրոց մ'է բարոյական,
 Կառավարիչն է ձեր խղիւճայն,
 Դատրեզուքիւն անոր դասեր,
 Որոնց մեկն եկն դասասուներ:

(Աւեկնիք մեկեկե եղանակաւ) Ինչ ծանր պաշտօն:

Մնաք բարեաւ հանգիստական,
 Կաղաչեմք ձեզ ալ չմոռնաք,
 Կերակրեցէք մեզ նիւրապէս,
 Որ կերակրիք բարոյապէս:

(Աւեկնիք երբաշու վրայ)

ՆԻԿ. Հապա օրիորդ որ զիս ԼԵԼՈՆ ըրաւ:





«Ազգային գրադարան»



NL0014723

